Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները`

Պաշտոնական կայք`[**http://www.armin.am**](http://www.armin.am)

Էլ. փոստ`[**info@armin.am**](mailto:info@armin.am)

Ն. ԱԴՈՆՑ

ՀԱՅՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ
Գ. ԳԻՒՋԱԼԵԱՆ

* * *

1949
Տպ. «ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆ»ի
Պէյրութ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1908ը Պետրոգրադի Համալսարանի «Հայ-վրացական բանասիրութիւն» մատենաշարի մէջ հրատարակուեց Ն. Ադոնցի «Հայաստանը Յուստինիանոսի դարում» մեծահատոր և մեծարժէք գործը։ Գիրքն ունէր և մէկ ուրիշ անուն, որ աւելի էր ճշդում բովանդակութիւնը՝ քան առաջինը և գլխաւորը։ Նա կոչւում էր «Քաղաքական դրութիւնը նախարարական կարգի հիման վրայ»։ Եւ իրօք Ն. Ադոնցի այս մեծ աշխատանքի մէջ Յուստինիանոսի դարի Հայաստանը միայն կիսով չափ է, որ տեղ է գտել։ Նրան նուիրուած է առաջին 236 էջը միայն։ Եւ այսքան էջերից կէսն էլ նուիրուած է Բիւզանդական Հայաստանի ստեղծման, սահմաններին, քաղաքական և վարչական կազմին՝ նախքան Յուստինիանոսի հայկական ռէֆորմները։ Այս մասը, հեղինակը կոչում է նաև «Արեւմտեան Հայաստան»։ Այս նկարագրութիւնն է հայ բիւզանդական յարաբերութեան մէկ հետաքրքիր շրջանի՝ երբ կառուցւում էր՝ Հռոմէական կայսրութեան փլատակների վրայ՝ Բիւզանդիան իրեն յատուկ ինքնատիպ գծերով։ Հետագային Ն. Ադոնցը Հայ-Բիւզանդական քաղաքական և մշակութային կապը ուսումնասիրեց աւելի ընդարձակ գետնի վրայ՝ միշտ նպատակ ունենալով որոշելու այն տարրերը, որոնց յղացողը, կատարելագործողը եղել է հայութիւնը։ Յուստինիանոսի շրջանը մէկ դարձակէտ է և՛ Հայաստանի և՛ Բիւզանդիայի պատմութեան համար։ Առաջինի համար՝ նա ուժերի քայքայման և հայութեան ցրման ժամանակն է։ Երկրորդի համար սկիզբն է Բիւզանդականութեան:

Գրքի երկրորդ մասը նուիրուած է Արեւելեան Հայաստանին։ Նոյն մեթոդով քննարկութեան են ենթարկւում՝ Մարզպանական Հայաստանի կազմը, սահմանները, վարչութիւնը և յարաբերութիւնը Իրանի կայսրութեան ուրիշ մասերի հետ։ Հայաստանի այս մասը կոչւում է նաև «տանուտէրական» երկիր. որովհետեւ նախարարական կառոյցը այստեղ է, որ պահում է համեմատաբար իր անաղարտ կացութիւնը աւելի ընդարձակ սահմաններում և աւելի երկար ժամանակ:

Նախարարութիւնը Հայոց կեանքի ողնաշարն է, ուստի Ն. Ադոնցի ուշադրութիւնը կեդրոնացած է այդ էնստիտուտի, հաստատութեան վերայ։ Գրքի այդ նոյն մասի մէջ հեղինակը մանրազննին քննարկութեան նիւթ է դարձնում նախարարական տների թուի հարցը։ Մէկ առանձին գլուխ նուիրում է նախարարութեան և **հիերարշի**՝ եկեղեցու կառուցման և կղերի կազմին, նրա **«ազգայնացման»** հարցին, որ հեղինակը համարում է որպէս աւատականացում։ Այս մասում որոշւում է նաև նախարարական տների տերիտորեալ սահմանները, նրանց արժէքը ըստ իրենց **«պատուի, գահի»**։ Գրքի այս մասը բռնում է 110 էջ։

Երրորդ մասը նուիրուած է Հայոց **«Նախարարութեան ծագման»** հարցին։ Առաջին անգամն էր, որ Հայոց պատմագիտութեան մէջ՝ մանրազննին քննութեան էր ենթարկւում նախարարութեան յառաջացման խնդիրը և մշակւում է այդ հիմքերով Հայոց պատմութեան մէկ սիստեմը։ Մինչեւ Ն. Ադոնցի գիրքը՝ Հայաստանի նախարարական կառոյցի մասին ստեղծուել էր որոշ գրականութիւն։ Այս կամ այն հեղինակը՝ բանասէր թէ պատմագէտ՝ նախարարական կարգը բնորոշող շատ տերմիններ, բառեր մեկնաբանել էին, իմաստաւորել, ոմանք էլ փորձել էին հասկանալ նախարարութիւնը, համեմատելով այն ուրիշ ազգերի նման հաստատութեանց հետ, ուրիշներն էլ ի մի էին հաւաքել հայ պատմագիրների մէջ եղած նախարարութեան վերաբերեալ նիւթերը։ Որոշ աշխատանք կատարել էին **Մ. Էմինը, Ք. Պատկանեանը, Կ. Կոստանեանը, Հայր Ինճիճեանը, Մառը**։ Նրանք ճշդել են, որոշ բառեր, գաղափարներ, աւելի շատ խնդրին մօտեցել են **Բաճարեանը**, որ քննութեան է ենթարկել հին Հայաստանի անձնական և հողային իրաւունքները, այսինքն ճիշդ այն հարցերը, որոնք սերտ առնչութիւն ունեն աւատական, նախարարական սիստեմի հետ։ Հայր **Մ. Գարագաշեանը** հաւաքում է մեր պատմագիրներից բոլոր անհրաժեշտ նիւթերը՝ **«Քննական պատմութիւն Հայոց»** հատորների մէջ, բայց չի կառուցում Հայոց պատմութեան նախարարական շրջանի սիստեմը, որի հետևանքով և նրա աշխատանքը կիսով չափ միայն մօտենում է պատմագիտական ուսմունքի պահանջին։ Հայր Մ. Գարագաշեան քառահատոր Հայոց պատմութեան հրատարակութիւնից 13 տարի յետոյ Ն. Ադոնցը լոյս ընծայեց իր **«Հայաստանը Յուստինիանոսի դարում»** մեծ գործը։ Նա մի կողմից Հայոց պատմագիտական մտքի մէկ փուլն է, միւս կողմից՝ կատարելագործումն այդ մտքի, նոր ուղիներ յայտնագործողը այդ ասպարիզում։ Արդէն Արեւմտեան Եւրոպայի պատմագիտութիւնը ապացուցել էր, որ Ֆէոդալիզմը կամ աւատականութիւնը չի սահմանափակւում՝ Եւրոպայով և նրա մէկ շատ որոշ շրջանի ընկերային կառոյցը չէ, այլ նա հոլովոյթի մէկ յատուկ շրջանն է գրեթէ բոլոր ժողովրդների, որոնք ունեցել են պատմական կեանք։ Այս ձեւով Ֆէոդալիզմը նեղ իմաստով դադարեց Եւ-

րոպայի անցած ընկերային քաղաքական ձեւը լինելուց, դարձաւ ընդհանուր **ընկերաբանական** հարց։ Ն. Ադոնցը այս շատ բեղմնաւոր միտքը իւրացրեց և կիրառեց Հայոց պատմութեան մէջ։ Արեւելքի բոլոր ժողովուրդները անցել են իրենց աւատական դարը։ Հայաստանը բացառութիւն կազմել չէր կարող։ Պէտք էր միայն որոնել նրա արմատները և ցուցահանել ու ստուգման ենթարկել այն տերմինները՝ բառերը, որոնք բնորոշում են Հայոց աւատական կարգը։ Ըստ Ն. Ադոնցի Հայոց աւատականութիւնը խորապէս ազդուել է ու զարգացել Իրանի մշակութային, քաղաքական միջավայրում. այստեղից էլ մեծ աշխատանքի երրորդ մասի այն ընդարձակ ներածական գլուխը, որ քննարկում է իրանական աւատական տերմինների իմաստաւորումը և նրանց հայեցի արտայայտութիւնը։ Միւս կողմից Ն. Ադոնցի պատմագիտական պրպտումների, նիւթի ընտրութեան, մըշակման ձեւերի վրայ շատ մեծ ազդեցութիւն է ունեցել իր ուսուցիչը Մառը՝ իր լեզուագիտական հմտութեամբ, լեզուն որպէս պատմագիտական աղբիւր ծառայեցնելու իր մեթոդով, բառերի իմաստաւորման քննարկութեամբ։ Ապա Ռուս պատմագիտական միջավայրը իր՝ ընկերային հարցերի հանդէպ երեւան բերած արտակարգ հետաքրքրութեամբ նոյնպէս ազդեցութիւն է թողել Ն. Ադոնցի գիտական պրպտումների վրայ։

Մեր պատմագէտի գործի երրորդ մասը գրաւում է շուրջ 160 էջ. այստեղ առանձին գլուխների մէջ ուսումնասիրւում են նախարարութեան տոհմական և աւատական հիմքերը։ Հայոց նախարարութիւնը առաջ է եկել տոհմի՝ որպէս աւելի պարզունակ ընկերային ձեւերի, քայքայումից. նա ստանում է աւատական ձեւեր։ Այնուհետեւ հեղինակը համեմատում է հայ և Եւրոպական աւատականութիւնը և որոշում նրանց ընդհանուր գծերը եւ տեղական առանձնայատկութիւնները։

Ն. Ադոնցը առաջինն էր մեր պատմագիտութեան մէջ որ Հայոց նախարարութիւնը ուսումնասիրեց որպէս ուրոյն ընկերային սիստեմ, քննարկեց նրա ծագումը, համարեց նախարարութիւնը Հայոց պատմական հոլովոյթի մէկ շատ կարեւոր փուլը, առանց որի անկարելի է ըմբռնել մեր պատմութիւնը։ Իր գիրքը շատ աւելի ընդարձակ խընդիրներ է պարունակում քան ցոյց է տալիս անունը։ Գրքի երրորդ մասը բոլորովին ինքնուրոյն աշխատանք է, որ շատ քիչ կապ ունի առաջին երկու մասի հետ և ամենէն հետաքրքիրն է։ Այդ մասում առաջին անգամ իր բոլոր մանրամասնութեամբ դրւում և քննւում է Հայոց աւատականութեան հարցը։ Այդ մասին մէջ ուշադրութիւն է դարձուած նաև հայութեան ծագման խնդրի վրայ։ Ն, Ադոնցը յատուկ տեղ է վերագրում այդ հարցին մէջ հնդեւրոպական Արմէններին, դրա հետ զուգահեռ նա շեշտում է սեմական տարրի վրայ։ Մեր պատմաբանը այնուհետեւ չանդրադարձաւ այս հարցերի քննութեան, զբաղուեց հայ-բիւզանդական պատմաքաղաքական խնդիրների լուսաբանութեամբ։ Այն ինչ պատմագիտական գրականութիւնը հայութեան ազգագրական կառոյցի նկատմամբ նոր տեսութիւններ երեւան բերեց։ Այս տեսութիւնները ուսումնասիրուած են Պրոֆ. Աստ. Խաչատրեանի, Ակադեմիկոս Յ. Մանանդեանի, Ակադեմիկոս Գ. Ղափանցեանի և հայագէտ Բ. Բ. Պիոտրովսկու նորագոյն երկերի մէջ։ Անշուշտ Ն. Ադոնցը երբ յետագային վերադառնար հայ աւատականութեան և հայութեան ծագումին՝ շատ բան նոր բանաձեւումի, շատ բան նոր խմբագրութեան պիտի ենթարկէր ու լրացնէր։ Այդ բանը մասամբ արուած է իր՝ վերջերս հրատարակած «Հայաստանի պատմութեան» առաջին հատորին մէջ։

Բայց չնայած սրան Ն. Ադոնցի գլխաւոր գործը՝ մնում է հայագիտական ամենէն կարեւոր երկերից մէկը և բնաւ չի կորցրել իր գիտական արժէքը։ Անցել է հրատարակութիւնից քառասուն տարի, բայց դժբախտաբար մեծ պատմաբանի այս երկը հայերէն չթարգմանուեց։ Այժմ ձեռնարկում ենք այս աշխատանքին։ Առայժմ թարգմանում ենք գրքի միայն երրորդ մասը՝ «Հայոց Նախարարութեան ծագումը» խորագրով։ Հանրային տեսակէտից ամենից հետաքրքիրը այս մասն է։ Թարգմանութիւնը կատարել ենք ռուսերէնից. Ջանացել ենք հարազատ մնալ բնագրին, բայց և հայացնել՝ առանց կապուած մնալու տառին։ Ն. Ադոնցի գործը գրուած է սկզբնաղբիւրների վերայ, լիքն է բազմաթիւ ծանօթութիւններով. սակայն մենք խուսափեցինք այդ ծանօթութիւնների թարգմանութիւններից, միշտ ի նկատի ունենալով մեր ընթերցողների կարիքը։ Նա չգիտէ ոչ լատիներէն, ոչ յունարէն և ուրիշ հին լեզուներ, որոնց հիման վրայ գրուած է այս գիրքը։ Նման ծանօթութիւնների թուարկումը միայն պիտի ստուարացնէր թարգմանութեան ծաւալը։ Մի քանի ծանօթութիւններ միայն պահեցինք, որոնք լոյս են սփռում նիւթի պարզաբանման վերայ։ «ԱԿՕՍ»ի խմբագրութիւնը և վարչութիւնը հասկանալով և բարձր գնահատելով Ն. Ադոնցի եզակի արժէքը՝ որոշեց տըպագրել մեր թարգմանութիւնը «ԱԿՕՍ»ի մէջ և արտատպել առանձին գրքով։ Վստահ ենք որ սրանով մեր պատմագիտութեան մէջ մէկ գրական գործ ենք անում և նորից վերարծարծում մեծ պատմաբանի և բանասէրի յիշատակը արժանավայել ձեւով յարգելու խնդիրը։

Գ. Գ.

Ա. ԳԼՈՒԽ

ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Նախարարութիւնը որպէս պատմական հաստատութիւն բնորոշելու համար՝ շատ կարեւոր է ինքը՝ հարցադրութիւնը։ Մեր անմիջական նպատակն է ուրուագծել նախարարութիւնը մեզ զբաղեցնող՝ Յուստինիանոսի դարում։ Հետեւապէս նախարարութեան որակային կողմերի ուսումնասիրութիւնը պիտի կատարուէր այդ սահմաններում, այսինքն գործադրուէր յիշուած դարաշրջանի մէջ։ Բայց կարելի է գլուխ բերել այս բանը խստապահանջ գիտութեան տեսակէտից։

Վերոյիշեալ շրջանում նախարարութիւնն ապրում էր որոշ բեկումն՝ մտնելով զարգացման նոր փուլի մէջ։ Իսկ նախարարութեան, ինչպէս և Հայոց կեանքի բոլոր կողմերի հոլովոյթը, ընթացաւ զիգզագներով ոչ միայն ժամանակի, այլեւ տարածութեան տեսակէտից։ Կեանքը՝ հեռու էր ամբողջ երկրում հաւասարընթաց լինելուց։ Այն պահուն, երբ որոշ դրութիւն նոր էր սկսում երկրի որոշ մասերի մէջ, ուրիշ մասերում նա վերջանում էր որպէս արդէն ապրած ձեւ։ Բազմազան տեղագրական պայմանները և անհաւասար մասնակցութիւնը երկրի քաղաքական կեանքին՝ ստեղծում էին միմիանցից տարբեր մըշակութային և կենցաղային շրջաններ. մէկ տեղում գործում էին դեռեւս կեանքի հին ձեւերը, պահում էին երբեմն շատ հին անցեալի աւանդները, մինչ ուրիշ շրջաններում ընկերային ձեւերը մէկէն աւելի փոփոխութեան էին ենթարկուել։

Պատմագիտական գրականութիւնը անկարող է մեր առաջ վերականգնել ընկերային կեանքի ամբողջ պէսպիսութիւնը։ Գիրն ստեղծուեց Արշակունեաց կարգի երերման ժամանակ։ Այդ և մի քիչ ուշ շրջաններին վերաբերող յիշատակարանները քաղաքական բնոյթ չեն կրում։ Ճիշտ է նրանք պարունակում են շատ արժէքաւոր տուեալներ նախարարական կարգի այս կամ այն կողմին վերաբերող, բայց ընդհանրապէս նրանք անբաւարար են ամբողջական պատկեր գծագրելու համար, եւ առաւել, որ յաճախ չենք էլ հասկանում նրանց իսկական իմաստը և հարկադրուած ենք կռահումների մէջ խարխափել։ Առձեռն տեխնիկ արտայայտութիւնները՝ տերմինները ճիշտ մեկնաբանութեամբ մեզ կը յայտնագործեն նախարարական անցեալի շատ էական կողմերը։ Անյոյս բան է փորձել բնագրային բաղդատութեամբ որոշել նրանց ստոյգ նշանակութիւնը։ Միեւնոյն հեղինակը միեւնոյն տերմինը՝ բառը գործ է ածում բոլորովին տարբեր իմաստներով։ Այս բանը համարել ոճաբանական վրիպումն կամ խմբագրական թերութիւն՝ ամեն պարագային ճիշդ չէր լինիր։ Յիշատակարաններն ի հարկէ ենթարկուել են վերամշակման և մէկ արտայայտութեան փոխարինումն միւսով՝ միանգամայն թոյլատրելի է, բայց և այնպէս տերմինների նշանակութիւնը, անկայունութիւնը և փոփոխութիւնները միշտ չի կարելի մեկնաբանել դրանով։ Շատ տերմիններ ալեւոր հնութեան արգասիք են, որոնք անցնելով դարէ դար ընդունել են նոր երանգաւորում՝ համապատասխան փոխուող յարաբերութեանց և գրի շրջանում նրանք արդէն բարդ գաղափարներ էին՝ հարուստ ներքին բովանդակութեամբ։ Յայտնագործել իւրաքանչիւր տերմինի պատմական շերտերը նշանակում են երբեմն հետազօտել նախարարութեան ծագման հոլովոյթը։

Մեզ մատչելի՝ գրական նիւթերը, նախարարութեան պատմութեան վերաբերող՝ չեն տալիս նրա մասին ամբողջական գաղափար։ Արեւմտեան Եւրոպայի աւատականութեան նշանաւոր ուսումնասիրողի համեմատութիւնից օգտուելով՝ կարող ենք ասել՝ նախարարութիւնը նման է մէկ հին ծառի։ Յիշատակարանները՝ լաւագոյն դէպքում յայտնաբերում են մեր աչքի առաջ միայն նրա տերեւները և ծառի կատարները, սակայն արմատները ծածկուած են մեր տեսողութեան սահմանից և նրանց հանելու համար անհրաժեշտ է պեղել հողը։ Այսպիսի նպատակի համար բնագրերի ուսումնասիրութեան և համեմատութեան վերայ հիմնուած բանասիրական մեթոդը անբաւարար է և չի հասցնել ցանկալի արդիւնքների։ Անհրաժեշտ է մէկ ղեկավար կոնցեպցիա՝ միտք, որ մեզ առաջնորդէր ծառի թաքնուած արմատների հետքերով։ Գիտական լինելու համար այդ ըմբռնումը պէտք է դուրս եկած լինի պատմական այն միջավայրից, ուր շարժման մէջ են եղել Հայերը։

Նախարարութիւնը քաղաքական-ընկերային մէկ հաստատութիւն է։ Նրա արմատները պիտի որոնել իրանական պետութիւնների ընդհանուր քաղաքական և ընկերային պայմանների մէջ: Հայաստանն էլ զարգացաւ այդ պայմաններում և նրա կեանքը պիտի կառուցուէր Իրանի հետ միեւնոյն պետական-իրաւական գաղափարների և նորմերի ազդեցութեան տակ։ Նկարագրելով Իրանական պետականութիւնը իր

հիմնական ձեւերով մենք կ'ունենանք մէկ յենարան, որ մեզ հնարաւորութիւն կ'ընձեռնէ կապակցելու իրար նախարարութեան վերաբերող անջատ-անջատ նիւթերը եւ կառուցելու նրանից մէկ ամբողջական պատկեր:

Պետականութիւնը որպէս իրաւական համակարգութիւն ուրիշ կերպ է ըմբռնուել և կազմուել արեւելքում՝ քան արեւմուտքի մէջ։ Եթէ արեւմուտքում պետականութեան գաղափարի հոլովոյթի մէջ գերակշիռ նշանակութիւն ստացան քաղաքային կազմակերպութիւնները, ապա՝ արեւելքում այդպիսի նշանակութիւն ստացան տոհմական միութիւնները։ Խնդիրը լաւատեղեակների, լաւապէս ուսումնասիրողների կարծիքով՝ հռոմէական պետութիւնը քաղաքների միութիւն էր, իսկ պարսկականը՝ բարձրագոյն ձեւն էր տոհմային քաղաքական միութեան։

Իրանի պետական կեանքի յետագայ զարգացման մէջ տոհմական կարգերը մնացին որպէս հիմնական մակարդը ընկերային կեանքի՝ անկախ բարձրագոյն իշխանութիւնից, որ անցնում էր մէկ հարստութիւնից միւսին: Պատմութեան բեմ դուրս գալիս Պարսիկները կազմուած էին բազմաթիւ տոհմերից. նրանց հարեւան Մարերն էլ նոյնպէս տոհմերի միութիւն էին:

Մար Դէյոկը մարական ցեղերի գլուխը կանգնելով խորտակեց Ասորեստանցիների տիրակալութիւնը, իսկ Կիւրոսը միացնելով Պարսից անջատ տոհմերին՝ առաջնորդեց Մարերի դէմ և հիմք դրեց Աքէմէնեանների տիրապետութեան։ Իր հերթին մակեդոնացի նուաճողը կործանեց Աքէմէնեանների իշխանութիւնն և նրա յաջորդները իշխեցին մինչեւ այն, որքան հարկադրուած չէին նահանջելու պարթեւական ցեղի աւելի անհեղ հրամայողների առաջ։

Բոլոր դինաստիական փոփոխութեանց ժամանակ իրանական պետութիւնը մնաց որպէս կամաւոր, երբեմն էլ հարկադրական միջոցներով միացած տոհմերի մէկ ընդարձակ դաշնակցութիւն՝ սիսօեմա-մեյձօն։ Դաշնակցութեան գլուխը կանգնած էր ամենէն համախմբուած և լաւապէս կազմակերպուած տոհմը։ Այդպէս էր Պասարգատների տոհմը, որոնցից ծագում էին Աքէմէնեանները։ Վերջինները միապետութեան վերայ նայում էին որպէս իրենց տոհմի կամ tauma-յի սեփականութիւնը։ Դարեհը խօսում է ոչ այլ՝ քան տոհմի անունից։ Նրա բազում արտայայտութիւններից տեսնում ենք, որ իր գործունէութեան հիմքում ընկած են գերդաստանային, տոհմական շահերը։

Պայքարը տեղի էր ունենում սկիզբը՝ յանուն Աքէմէնեան տոհմի գերակայութեան ընդդէմ անջատողական ձգտումներ ունեցող մարական մոգերի, ապա ուրիշ ցեղերի դէմ, որոնք ձգտում էին անջատումին։ Շնորհիւ յամառ կռիւների Աքեմէնեանները կարողացան միացընել բոլոր ցեղերին և կազմել մէկ մեծ դաշնակցութիւն սիստեմա մէյձօն, հների արտայայտութեամբ։

Պարսիկների իշխանութիւնը ճանաչում էին մի քանի տասնեակ բազմացեղ երկիրներ. նրանք կոչւում էին dahiu և նրանց պետերը dahiu pati: Dahiu իրանական ձեւն է սանսկրիտ dasi-թշնամի և ըստրուկ բառի և նշանակում է թշնամիների կամ ստրուկների երկիր՝ բնորոշիչ և տիրապետող տոհմի մտայնութիւնն արտայայտող մէկ տեսակէտ՝ միւս ցեղերի նկատմամբ։ Dahiu-ն շատ թէ քիչ միատարր ազգագրական խմբակցութիւն էր, այսինքն zana։ Արձանագրութեանց մէջ Պարսից Թագաւորը կոչւում է խշայաթիա dahiunam vispazananam, կամ paruv zananam այսինքն dahiu տարբեր կամ բազմաթիւ zana, տոհմերով։ Zana-ն ազգագրական արտայայտութիւնն է այն գաղափարի, որին համապատասխանում է երկըրային տերիտորեալ՝ dahiu-ն։

Տոհմերի կամ dahiu-ների կախուածութիւնը արտայայտւում է նրանով, որ նրանք վճարում են որոշ տուրք Cajim abaranta։ Որպէս շրջանային միաւոր կամ հարկային շրջան dahiu-ն կոչւում է satra, իսկ նրա գլուխը՝ satrapa կամ satrapati. ուրիշ խօսքով այն ինչ որ տոհմական իշխանութեան տեսակէտից dahiu էր, քաղաքացիական, վարչական տեսակէտից satra էր։ Երկու միութիւնները իրենց տարածութեամբ ոչ միշտ համատեղւում էին. երբեմն մի քանի dahiu կազմում էին մէկ satra։ Աքեմէնեանների օրով 23-28 dahiu-ներ կային, իսկ Դարէհը ամբողջ կայսրութիւնը բաժանեց քսան սատրապութեանց։ Ըստ արժէքի և տարածութեան dahiu-ները տարբերւում էին միմեանցից։ Մի քանիսը ինքնուրոյն թագաւորութիւններ էին. նրանց պետերը կոչւում էին խշայաթիա= շահ, եւ նրանց նկատմամբ Պարսից Թագաւորը ներկայանում էր որպէս խշայա թիանամ, խշայա թիա այսինքն շահն շահ։ Dahiu-էին Պարսկաստանը, Մարաստանը, Պարթեւաստանը, Հայաստանը, Բաբելոնը և այլն»

Կայսրութեան մէջ մտնող ինքնուրոյն բարձրագոյն միութիւնը dahiu-ն էր կամ zana-ն։ Zana-ն ունէր իր ներքին կազմակերպութիւնը. նա բաժանւում էր առանձին տոհմերի, իսկ վերջինները իրենց հերթին բաժանւում էին աւելի մանր խմբակցութեանց։ Այսպէս օրինակ Պարսիկներն ու Մարերը, որոնք dahiu էին, կազմուած էին՝ առաջինները տասը տոհմերից, իսկ վերջինները վեց։ Պարսից տասը տոհմերից մէկը Պասարգադներն էին, իսկ նրանց ենթաբաժանումը՝ Աքեմէնեանները։ Յոյն պատմաբանը (Հերոդոտոս) Պասարգադներին կոչում է Գէնոս իսկ Աքեմէնեաններին Ֆրատրէ։ Դարէհի արձանագրութեանց մէջ Աքեմէնեանների ընտանիքը կոչւում է tauma, որ նշանակում է, թէ tauma-ն որպէս ընկերային գաղափար հաւասարազօր է Ֆրէտրէ-ին։

Ընկերային խմբաւորման հետեւեալ աստիճանը համապատասխանող յունական Գէնոսին կազմում է zantu-ն։ Մարական ցեղերից մէկը կոչւում էր Արիձանթոյ, այսինքն ազնիւ zantu, ցեղ, որից կարելի է եզրակացնել, որ zantu հէնց անունն է իւրաքանչիւր ութ խմբակցութեանց կամ Գէնոսի։

Պարսկական տոհմերը ունէին ընկերային միութեանց այնպիսի աստիճանաւորում, ինչպէս մարականները, ուստի և, նրանց վերաբերմամբ էլ կիրառելի է zantu անունը։

Այսպէսով ամբողջ պարսիկ ժողովուրդը կազմում էր zana, Պասարգադները որպէս այդ zana-յի մէկ տոհմը՝ zantu էին, իսկ Աքէմէնեանները zantu-յի մէկ գերդաստանը՝ tauma էին։

Արձանագրութեանց մէջ մենք հանդիպում ենք նաև vid և karaին: Mana taumaya կամ amaxam taumaya ի հետ մենք տեսնում ենք վիթամ yam amaxam, այսինքն՝ մեր tauma-ն և մեր Վիթը։ kara-ն կիրառւում է ամբողջ ժողովուրդի՝ Պարսից կամ Մարերի նկատմամբ։ Kara Parsa hya վիթա-patiy. Kara Mada hya vida patiy, այսինքն vid-երով ապրող պարսիկ ժողովուրդը. Մարերի ժողովուրդը՝ վիթ-երով ապրող։ Այս արտայայտութիւններից՝ երեւում է, որ Karaն բաժանւում էր մի քանի վիթերի:

Ինչ կապակցութեան մէջ են այս տերմինները tauma և zana-յի հետ պարզ չէ։ Կարելի էր ընդունիլ նրանց որպէս ընկերային խըմբակցութեան մէկ միջանկեալ օղակ. սակայն աւելի հաւանական է, որ vid-ը տերիտորեալ արտայայտութիւնն է tauma-էթնիկ գաղափարի ինչպէս dahiu նոյնպիսի համարժէք էր zana-ի։ Ինչ վերաբերում է Kara-«հզօր» բառին՝ ապա այդ աւելի շուտ ռազմական գաղափար է և նշում է zana-յի գործօն տարրերին, կռուի համար պիտանի մարդկանց. այստեղից էլ նրա բանակ, զօրք ցոյց տուող յարակից նըշանակութիւնը։

Արուեստական գրականութեան մէջ յաճախ հանդիպում ենք nemana vis, zantu, danhu բառերին որպէս արիւնակից մարդկանց ընկերային միութեան տարբեր աստիճանները նշող։ Աւելի ուշ ժամանակի ուսմունքների համաձայն nemana-ն կազմւում էր հինգ զոյգ տղամարդկանցից և կանանցից, vis-ը կազմւում էր 15 զոյգերից, zantu-ն 30 զոյգերից և danhu-ն յիսուն։ Խնդիրը թուական տուեալները չեն, որոնք կարելի է հասկնալ պայմանական ձեւով՝ կարեւորը խմբակցութիւնների այն յաջորդականութիւնն է, որոնց վերայ նշում են թիւերը։ Nemana-ն երեւան է գալիս որպէս համակեցութեան առաջին աստիճանը մէկ յարկի տակ ապրող մարդկանց միութիւն։ Մի քանի այդպիսի nmana-ներ կազմում են vis, մի քանի vis-եր՝ zantu, իսկ մի քանի zantu, կազմում են dahiu կամ zana: Մատնանշուած խըմբակցութեանց անդամները համապատասխան կարգով կոչւում են nmanya, visya, zantuma․ danhuma, իսկ նրանց պետերը՝ nmano-paiti, vis-paiti, zantu-paiti, danhu-paiti։ Այստեղ չէ յիշատակուած մեզ ծանօթ tauma-ն․ թւում է թէ նա փոխարինուել է nmana բառով, որ յայտնի է Դարեհի արձանագրութեանց մէջ manyo ձեւով։ Բայց մենք արդէն ասացինք, որ tauma-ն էթնիկական-ազգագրական կրկնաւորն է տերիտորեալ vis բառին, ուստի կարելի է ենթադրել, որ nmana, որպէս ընկերային գաղափար յետագայ ժամանակներին է վերաբերում և համապատասխանում է tauma-յից դուրս եկած ընտանիքին։

Տոհմական կարգը նշող բառերից՝ տերմիններից մի քանիսը ցոյց են տալիս արիւնակցութիւնը, term, gent․ ինչպէս օր tauma, zantu, zana, միւսները երկրային միութիւնը term, loei՝ օր. nmana vid dahiu։ Երկու կարգի տերմինների մէջ համաձայնութիւն գտնել շատ դժուար է։ Ժամանակի ընթացքում մէկ տերմինը գործածութիւնից դուրս է անում միւսին։ Տերիտորեալ տերմինները ընդունում են էթնիկ բնոյթ եւայլն։ Կարեւորը տոհմական կազմակերպութեան օղակների մատնանշումն է։ Դրանցից վերջինը dahiu-e է, որին յաջորդում է քաղաքական դաշնակցութեան, պետական միութեան կառուցումը բարձրագոյն պետի իշխանութեան տակ։

Տոհմի ներքին կեանքի տեսակէտից ամենից գործօն օղակը պիտի համարել vis-ը։ Արիական ժողովուրդների պատմութեան և իրաւունքի մէջ մեկնակէտ ընդունւում է ոչ թէ ընտանիքը՝ այլ տոհմը, gens։ Նա մարդկային համակեցութեան առաջին ձեւն է և նրանից զարգացել են յետագայի աւելի բարդ ձեւերը, ինչպէս և նրանցից կազմուել են նահապետական գերդաստանները՝ տոհմի՝ աւելի փոքր խմբակցութեանց բաժանման ուղիով։ Իրանի մէջ, ըստ երեւոյթին՝ այսպիսի մեկնակէտ ծառայում է vid-ը։ Դարեհը արձանագրութեանց մէջ յաճախ յիշում է վիթի մասին և պնդում է նրա շահերի վերայ։ Պարսիկները և Մարերը բաժանւում էին ըստ վիթերի, վիթ-patiy։ Թագաւորը յայտարարում է, որ վերահաստատեց յափշտակիչ Գաումատի առած ayadana-ն, յետոյ խլեց նրանից abacaris-ը, gaidamca manyamca visibisca-ն, որից նկատելի է, որ վերոյիշեալ հաստատութիւնները նոյնպէս դասաւորուած էին ըստ vid-երի: Վերջապէս աստուածութիւններն էլ կոչւում էին վիթ-երի անունով, Cagaitis vidibis։ Այս պարագան շատ կարեւոր է, որովհետեւ vid-ը, ինչպէս

և ուրիշ տերմիններ, ունեցան, ինչպէս պիտի տեսնենք Հայոց նախարարական կառոյցը ցոյց տուող բառերի մէջ, շատ հետաքրքիր վերապրումներ:

Պարսիկների տոհմական կենցաղի մասին հետաքրքիր տեղեկութիւններ կան Քսէնոֆոնի երկերում: Ճիշդ է յոյն հեղինակը մի քիչ միտումնաւոր է, բայց նրա տեղեկութիւնները իրենց հիմքում ճիշդ են եւ լաւ լուսաբանում են իրանական կեանքի մի քանի կողմերը։ «Պարսիկները, ասում է պատմաբանը, ունեն այսպէս կոչուած ազատ հրապարակ ելեւթերա ակօրա, մէկ վայր, ուր գտնւում են արքայական պալատը եւ ուրիշ հասարակական շէնքեր։ Նա բաժանուած է չորս մասի․ մէկ մասը մանուկների համար, միւսը՝ երիտասարդների, երրորդը՝ հասակաւորների, իսկ վերջինը՝ զինուորական տարիքն անցածների համար։ Ըստ օրէնքի նրանք բոլորը հաւաքւում են իրենց տեղերը՝ մանուկները՝ վաղ առաւօտից, ինչպէս եւ հասակաւորները, իսկ ծերունիները՝ իւրաքանչիւրին յարմար եղած ժամանակ, ի բաց առեալ յատուկ օրերին, երբ նրանք պարտաւորուած են լինել իրենց տեղում։ Երիտասարդները՝ թեթեւօրէն զինուած, գիշերները շրջում են եւ հսկում հասարակական շէնքերի վերայ։ Բացառութիւն կազմում են ամուսնացածները, որոնք, ի դէպս, պարտաւոր են ներկայանալ երբ կը կանչուին․ եւ ընդհանրապէս նրանց յաճախակի բացակայութիւնը չի խրախուսւում: Սրանցից իւրաքանչիւր մասի վերայ նշանակուած են տասներկու պետեր․ չէ որ Պարսիկները բաժանուած էին տասներկու ֆիլերի կամ տոհմերի։ Մանուկների վերայ նշանակւում էին այն ծերերը, որոնք ամենից լաւ էին դաստիարակում նրանց։ Երիտասարդների համար, հասակաւորներից ընտրւում են նրանք, ովքեր լաւապէս կրթում են նրանց։ Հասակաւորների համար ընտրում են նրանց, որոնք լաւապէս սովորեցնում են օրէնքի գործադրութիւնը և բարձրագոյն իշխանութեան կարգադրութիւնները։ Ծերերն էլ ունեն ընտրովի առաջնորդներ, որպէսզի նրանք էլ կատարեն իրենց պարտականութիւնները»:

Այնուհետեւ պատմագիրը կանգ է առնում Պարսիկների կրթական սիստեմի վերայ։ Մանուկներին սովորեցնում են աղեղ արձակել և նիզակ ճօճել։ Սրանով նրանք զբաղւում էին մինչեւ 16-17 տարեկան հասակը, որից յետոյ նրանք անցնում էին երիտասարդների դըպրոցը։ Վերջինների կրթութիւնը այն էր, որ տաս տարի, դառնում էին հասարակական շէնքերի շուրջ որպէս պահակ, ինչպէս եւ միջոց, նրանց մէջ աչալրջութիւնը զարգացնելու համար: Ցերեկը նրանք իրենց առաջնորդների տրամադրութեան տակ էին՝ հասարակական կարիքների համար։ Երբ թագաւորը դուրս էր գալիս որսի երիտասարդների մէկ մասը ուղեկցում էր նրան, ապա, բացի սրանցից, հրամանատարները նրանց օգտագործում էին պահակային ծառայութիւնների, ոճրագործներին որոնելու և աւազակներին հետապնդելու համար և ընդհանրապէս այն բոլոր պարագաներում, երբ անհրաժեշտ էր ոյժ եւ արագաշարժութիւն։ Տասը տարին լրանալէն յետոյ երիտասարդները անցնում էին հասակաւորների դասը և մնում էին այնտեղ քսանհինգ տարի։ Նրանք շարունակում էին՝ առաջնորդների իրենց վերայ դրած պարտականութիւնները ի կատար ածել։ Պատերազմի ժամանակ նըրանք զինւում էին ոչ թէ աղեղով ու նիզակով, այլ ընդհուպ կըռուելու պիտանի զէնքերով՝ զրահաւոր կրծքակալով, ձախ թեւին, մե՛ր նկարների մէջ տեսածներին շատ նմանող՝ վահանով, աջ ձեռքին սուրը կամ դաշոյնը։ Հրամանատարները հասակաւորներից էին ընտրւում, բացի նրանցից, ովքեր մանուկների դաստիարակութեան էին նուիրուած։ Քսան եւ հինգ տարուց յետոյ, երբ լրացնում էին յիսուն տարին, նրանք անցնում էին այսպէս ասած և իրօք, ծերերի դասի մէջ։ Ծերերը իրենց սահմաններից դուրս երբեք պատերազմ չէին գնում։ Բայց տունը մնալով՝ նրանք մասնաւորի և ընդհանուր գործերի դատավարութեամբ էին զբաղւում։ Նոյնիսկ մահուան պատժի իրաւունք ունէին. Նրանք էին ընտրում բոլոր պաշտօնեաներին։ Եթէ երիտասարդներից կամ հասակաւորներից մէկը օրէնքի դէմ մեղանչէր՝ այդ մասին տեղեկացնում էին համապատասխան փիլարխները կամ որեւէ մէկը և ծերերը լսելով մեղադրանքը՝ կայացնում են իրենց վճիռը։ Դատապարտուածը իր ամբողջ կեանքում մընում է արատաւորուած։

«Պարսիկների հասարակական կարգը աւելի պարզ պատկերացընելու համար, շարունակում է հեղինակը, պէտք է իմանալ, որ Պարսիկների թիւը հասնում էր մինչեւ տասներկու միրիադի = բիւրի՝ այսինքն 120 հազար մարդու։ Նրանցից և ոչ մէկը ըստ օրինի զըրկուած չէ պատուի և իշխանութեան հասնելուց և բոլորին հնարաւորութիւն է տրւում իրենց երեխաներին հասարակական դպրոցներն ուղարկելու։ Բայց իրականին մէջ այնտեղ յաճախում են միայն ունեւոր մարդկանց երեխաները, ովքեր հնարաւորութիւն ունեն կերակրելու իրենց երեխաներին՝ առանց նրանց աշխատանքին դիմելու։ Իսկ ով հնարաւորութիւն չունի նա չի ուղարկում։ Հասարակական ուսուցիչների մօտ կրթուածները կարող են մտնել երիտասարդների դասը, իսկ կրթութիւն չստացածները զրկուած են այդպիսի իրաւունքներից։ Նոյնպէ՛ս նա, ով երիտասարդների դպրոցում եղել է և անցել է օրինական դասընթացքը, նրան թոյլ է տրւում ցուցակագրուելու հասակաւորների կարգի մէջ և հասնելու պատուի եւ աստիճանի։ Իսկ երբ չի անցել երիտասարդների դասընթացքը, նա չի կարող անցնել հասակաւորների կարգը։ Վերջապէս հասակաւորների դասարանը ամբասիր անցնողները դառնում են ծեր, աւագ։

Ըստ Քսէնոֆոնի՝ նրա հերոսը՝ Կիւրոսը անցել է բոլոր դասարանները։ Ակներեւ է, որ պատմաբանը փորձում է նկարագրել Պարսից տեսակէտից՝ իտէալական դաստիարակութեան սիստեմը, ուստի եւ մանրամասնութեանց մէջ չափազանցութիւնները թոյլատրելի են, բայց ընդհանուր գծերով նրա պատմածը համապատասխան է իրականութեան։ Նրա նկարագրութեանց մէջ երեւան է գալիս տոհմական կեանքի հնագոյն հաստատութիւններից մէկը։ Ազատ հրապարակը՝ համայնական ժողովն է, նոյն այդ հաստատութիւնը, որ արձանագրութեան մէջ կոչւում է habacaris և որի համար Դարեհը կռւում էր ինքնակոչ Գաումարտի դէմ։ Habacaris-ը ըստ հնչունական և իրական նշանակութեան նոյնանում է սանսկրիտ saba.cara-ի հետ, sabah ժողով-cara.գնալ, որ նշանակում է ժողով, հաւաքոյթ։ Հնդիկների մօտ sabha էր կոչւում համայնքների ժողովը, որի անդամները ապրում էին ըստ գիւղերի grama-յի տանուտէրի՝ gramani իշխանութեան տակ։ Այդ ժողովը հրաւիրում է հասարակական գործերը քննելու, ինչպէս և զուարճութեանց, ժամանցի համար։ Այդ ժողովները ունէին այնպիսի մեծ նշանակութիւն, որ երբեմն մարդիկ արժէքաւորում էին՝ ժողովի համար իրենց ունեցած պիտանիութեան. գնահատւում էր sabheya-մարդը։

Ազատ հրապարակում հաւաքւում էին Պարսից տասներկու տոհմերի ներկայացուցիչները։ Ամեն տոհմ ունէր մինչեւ տաս հազար մարդ. բոլոր Պարսիկները 120 հազար էին՝ մի թիւ, ասենք հարեւանցիօրէն, որ շշմեցուցիչ կերպով չնչին է մէկ ժողովրդի համար, որ այնպէս ահաւոր կերպով իր մականն էր ցնցում և ապացուցում է մեր զարգացրած այն միտքը, որ Պարսից պետութիւնը հիմնըւած էր իրօք դաշնակցային հիմքերի վերայ։ Պատմաբանի վերապահումն, թէ տոհմի ոչ բոլոր անդամները հաւաքւում էին հրապարակում թէպէտ բոլորն էլ իրաւասու էին, այլ միայն ունեւորները՝ ապացուցում է թէ ինչպէս հին տոհմական հաստատութիւնը կորցնում է իր իսկական բնոյթը և բոլոր անդամների հաւասարութեան վերայ կառուցուած այդ հաստատութիւնը՝ դառնում է դասային շերտաւորման և անհաւասարութեան աղբիւր։ Առաջուան հասարակ ժողովը փաստօրէն վերածուեց հասարակութեան հարուստ խաւի իւրայատուկ զինուորական դպրոցի։ Աղքատները ժամանակ և հնարաւորութիւն չունէին օգտուելու մատնանշուած հարստութիւններից։ Կիւրոսը զինուորներին ուղղած իր ճառի մէջ ի միջի այլոց ասում էր՝ «Հայրենիքում դուք մեզ հետ նոյնիրաւ չէք, ոչ թէ այն պատճառով, որ վիրաւորուած էք մեզնից, այլ որպէսզի աշխատէք կեանքի անհրաժեշտ միջոցներ հայթայթելու համար»։ Այսպիսով ազատ հրապարակը կամ habacaris-ը պատճառ դարձաւ հասարակական շերտաւորման, ստեղծեց արտօնեալ մարդկանց դասակարգ և նրանց համար ապահովեց տիրապետող դիրք և բացառիկ իրաւունք երկիրը կառավարելու խնդրում։ Կիւրոսի 30 հազար զինուորներից միայն 10 հազարն է որ պատկանում էին արտօնեալների դասին, կամ ինչպէս կոչւում էին՝ օմոտիմներին։ Քսենոփոնը վստահեցնում է, որ հրապարակում առեւտուրը արգիլուած էր։ Hapacaris-ից ծագում է նոր պարսկական bazar շուկայ, հայերէն վաճառ բառը, որ ցոյց է տալիս, թէ հին հաստատութիւնը՝ յետագայում փոխուել է շուկայի՝ բարիքների փոխանակման համար։ Ուրիշ խօսքով Habacaris-ը վերապրել է հոլովոյթի երեք փուլ՝ անցնելով տոհմային հաստատութիւնից՝ զինուորական-ազնուական դրութեան, ապա բուրժուական։ Habacaris-ը հասցրեց օմոտիմների դասի ստեղծման, որոնք իրենց մէջ ունէին յետագայ դասային ազնուականութեան սաղմերը։ Հաւանաբար՝ ընդհանուրին մատչելի լինելու համար ազատ համարուող հրապարակը յետագային դառնում է միայն ազատների սեփականութիւն։ Միապաղաղ զանգուածի շերտաւորումը ցուցանիշ է արդէն տոհմական հիմքերի քայքայման, իսկ այդ բանին ուղեկցւում է աւատական կարգի ծագումը:

Աւատական կոչուած երեւոյթի մանրազննին ուսումնասիրութիւնը յայտնագործում է նրա շատ բարդ լինելը։ Եւ այժմ խօսւում է ոչ միայն միջնադարեան, այլ և նախնական աւատականութեան մասին՝ տոհմական կեանքի փլատակներից առաջացած։ Ընկերային հաւասարակշռութիւնը նախնական շրջանում էլ պահւում էր համայնական հողատիրութեան շնորհիւ։ Այդ ձեւի հողատիրութեան քայքայումով ծնւում է տնտեսական անհաւասարութիւն, որ տանում է դէպի քաղաքական իշխանութեան անհաւասար բաշխման։ Այսպիսով երեւան են գալիս աւատականութեան գլխաւոր տարրերը՝ հողատիրութիւնը կապակցուած քաղաքական իշխանութեան հետ։

Երբ է աւարտւում տոհմային ձեւերի բեկումն աւատականի՝ անկարելի է սահմանել։ Ոչ միայն աւատականութեան, այլ և հռոմէական իմաստով պետականութեան սաղմերը մենք նկատում ենք Աքէմէնեանների դարաշրջանում։ Անտես առնելով մօտ եօթանասունի հասնող բնիկ ազգագրական խմբակցութիւնները, Աքէմէնեանները առաջին անգամ ամբողջ կայսրութիւնը բաժանեցին քսան վարչական միաւորների, այսպէս կոչուած սատրապետութիւնների ու նրա մէջ էլ զինուորական իշխանութիւնը բաժանեցին քաղաքացիականից՝ յանձնելով առաջինը Ֆրուարխներին և Խիլիարխներին, իսկ երկրորդ

Սատրապներին։ Եթէ ընդհանրապէս թոյլատրելի է այս հարցում դարաշրջանների բաժանումը՝ ապա ուրեմն Պարթեւական տիրապետութեան շրջանը պիտի համարել մէկ դարձակէտ Իրանի ընկերային-քաղաքական յարաբերութեանց մէջ: Աքէմէնեանների օրով պետականութիւնը հիմնւում էր դաշնակցային՝ տոհմային ձեւերի վերայ։ Հետեւեալ մակեդոնական-սելեւկեան դարում ուժեղացաւ պետականութեան սկզբունքը՝ ոչ առանց ազդեցութեան արեւմտեան նուաճողների: Ուրիշ իրանական ցեղերի նման՝ տոհմական կեանքով ապրող Պարթեւների հզօրացումով՝ կառուցուող պետականութիւնը բախւում է տոհմական սկզբունքի հետ: Պարթեւական տոհմական աւանդութիւնները բեկւում էին Սելեւկեան պետականութեան միջավայրի մէջ և ընդունում էին աւատական բնոյթ։ Աւատականացման գործողութիւնը արտայայտւում էր այն բանի մէջ, որ Պարթեւները դարձան օմոտիրներ՝ ամբողջ Իրանի հանդէպ՝ գրաւելով զինուորական դասի դիրք։

Որպէս ուրոյն ազգագրական խմբակցութեան՝ Պարթեւների ներքին կեանքի հոլովոյթը պէտք է հասցնէր նրանց՝ պարսկականին նըմանող հետեւանքների՝ այսինքն նրանց մօտ էլ հասարակութիւնը պիտի ճեղքուէր, շերտաւորուէր՝ ինչպէս Պարսիկների մօտ։

Պարթեւաստանը բնակեցուած էր իրանական ընտանիքի զանազան ցեղերով։

Արշակունիների արքայական տոհմը, թէպէտ կոչւում է պարթեւական, բայց Պարթեւներից չէ ծագած, այլ նրանց հարեւան Դայերի տոհմից։ Դայերը իրանական վաչկատուններ էին դուրս արուած Parthau երկրի սահմանից եւ հաւանական է ազգակից էին այդ նոյնանուն վաչկատունների հետ։ Նրանց մասին յիշում է Հերոդոտը։ Սկզբում նրանք մարդերի հետ ապրում էին իրանական սարահարթում: Յետոյ շարժուելով դէպի արեւելք՝ կանգ առան Իրանի սահմանագլուխին՝ հիմակուայ Թուրքիստանի տափաստաններում։ Դայերը զանազան տոհմերից էին կազմուած: Նոր նուաճողները ի դէմս Արշակի, ծագել են ապարնիրի ցեղից։ Երրորդ դարի կէսերին ցեղերի ներքին գժտութեանց հետեւանքով՝ ապարնիրը հարկադրուած էին լքելու իրենց տեղերը։ Նրանք յարձակուեցին հարեւան Պարթեւաստանի վրայ եւ նուաճեցին այն։ Այսպիսով Պարթեւաստանի նըկատմամբ Արշակունիները իսկապէս նուաճողներ են։ Ամրացնելով իրենց դիրքը՝ նրանք մէկ դար յետոյ՝ երկրորդ դարի կէսերին՝ դուրս եկան քաղաքական կեանքի ասպարէզ՝ պարթեւական հարստութեան անուան տակ։

Հիմա ամեն կասկածից դուրս է, որ ոչ միայն Պարթեւները, այլ և Դայերի ցեղերը մտնում են Իրանական ընտանիքի մէջ։ Աքեմէնեանների արձանագրութեանց մէջ Պարթեւաստանը ուրոյն dahiu է, նրա ներքին տոհմական կազմակերպութեան մասին մեզ ոչինչ յայտնի չէ: Մնացել են քի՛չ թէ շատ տեղեկութիւններ արքայական շրջանի հասարակական կառոյցի մասին։ Թագաւորին մօտ կար ինչ որ հաւաքական մարմին խորհուրդ՝ որ կոչւում էր ordo probulorum։ Նրա անդամներն էին ի նկատի առնւում զինուորական եւ քաղաքացիական պաշտօնների համար։ Իր նշանակութեամբ այդ խորհուրդը համապատասխանում էր Օպտիմատների դասին՝ աւելի ճիշդ Պարսիկների մօտ գոյութիւն ունեցող հասակաւորների դասին։ Նրանք էլ վարիչ դասն էին եւ բացառիկ իրաւունքներ ունէին՝ հասարակական պաշտօնները վարելու մէջ։ Ըստ մէկ տեղեկութեան պարթեւների մօտ գոյութիւն ունէր երկու այդպիսի հաստատութիւն՝ մէկը կազմուած էր արքայական հարստութեան անդամներից, միւսը իմաստուններից և մոգերից։ Երկու խորհրդի համաձայնութեամբ է. որ նշանակւում են թագաւորները։ Պատմագիրները յաճախ յիշատակում են նաեւ պարթեւական ծերակոյտի մասին, որից կախուած էր թագաւորների բախտը։ Այս անուան տակ ըստ երեւոյթին հասկանում էին մատնանշուած մարմինները՝ հաստատութիւնները։ Եթէ առաջինը համապատասխանում էր պարսկական հասակաւորների դասին, ապա երկրորդը կարելի էր համեմատել նոյն Պարսիկների ծերերի դասի հետ։ Երկու մարմիններն էլ անկասկած ծագում էին տոհմական շրջանից և ներկայացնում էին յետագայ զարգացումը նախնական հաստատութեանց։ Նման հաստատութիւնների գոյութիւնը լաւագոյն փաստն է պարթեւական հասարակութեան մէջ տեղի ունեցած շերտաւորման: Մենք գիտենք որ պարթեւ հասարակութիւնը բաժանուած էր ազատների եւ ըստրուկների։ Ստրուկների թիւը մեծանում էր շնորհիւ այն բանի, որ Պարթեւները սովորութիւն չունէին ստրուկներին ազատագրելու։ Ազատների փոքրաթիւ լինելու հետեւանքով՝ զօրքի գլխաւոր զանգուածը կազմում էին ստրուկները՝ հակառակ ուրիշ ժողովուրդների մէջ ընդունուած սովորութեան։ Նրանց սովորեցնում էին նշանաձգութիւն և ձիավարութիւն՝ ազատների հետ հաւասարօրէն։ Որքան ազատ-մարդը հարուստ էր, նոյնքան էլ շատ այրուձի էր ներկայացնում թագաւորին։ Անտոնիոսի դէմ մղած կռիւներում չորս հարիւր ազատներ նրա դէմ հանեցին 50 հազարից հեծեալ մէկ բանակ։ Պարթեւների բարքի բնորոշիչ կողմն այն էր, որ նրանք մեծ հակումն ունէին ձիավարութեան։ Նրանք գրեթէ՝ ձիերից վար չէին իջնում, ոչ միայն կռւում էին, այլեւ ուտում ու հանգստանում էին ձիերի վերայ. հասարակական գործերն էլ կատարում

էին ձիու վերայ, ինչպէս և առեւտուր էին անում, խորհրդակցում էին ձի հեծած։ Ազատները արտաքնապէս հէնց նրանով էին տարբերւում ստրուկներից, որ շրջագայում էին հեծեալ, իսկ ստրուկները հետեւակ էին:

Վաչկատուն ժողովուրդների կենցաղը բնորոշող՝ ձիավարութիւնը այս պարագային Պարթեւների անցած կեանքի ժառանգութիւնն էր. նոր քաղաքական պայմաններում ձիավարութեան բնական հակումն ստեղծեց նրանցից զինուորական մէկ հրաշալի դաս, իսկ այս պարագան էլ անդրադարձաւ նրանց պետական քաղաքականութեան վերայ: Պարթեւների զինուորական բարքերը ի նկատի պիտի ունենալ մեկնաբանելու այն պատճառները, որոնք պետութիւնն ուղղելու էին դէպի աւատականութեան ուղին։

Ըստ Պլինիոսի պարթեւական կայսրութիւնը երկու՝ Կարմիր և Հիրկանական ծովերի մէջ ընկած 18 թագաւորութիւններից էր կազմըւած։ Նրանցից 11ը կոչւում էին superiora և տարածւում էին Հայաստանի սահմաններից մինչեւ Սկիւթացիները. Մնացած եօթը կազմում էին regna inferiora։ Պատմաբանը նրանց անունը չի տալիս։ Ենթադրում են, որ նրանք այն Պրովինցիաներն են, նահանգները, որոնք յիշւում են Իսիդոր Խարակացու ուղեցոյցի մէջ։ Իսիդորի նկարագրած շրջանները պարունակում են իրենց մէջ Պարթեւաստանը, Մարաստանը, Ասորեստանը և Միջագետքը՝ իրենց ստորաբաժանումներով։ Եթէ 18 թագաւորութիւնները գտնւում էին այս երկիրների սահմաններում՝ ապա ամէն պարագային նրանց պիտի համարել պարթեւական իշխանութեան տակ եղող par excellence։ Ծայրամասերում դասաւորուած էին Ատրպատականը և Հայաստանը՝ հիւսիսում, Պարսկաստան-Կարմանիին հարաւում, Ադիաբէնան ու Ոսրոյէնը՝ արեւմուտքում, Բակտրիան Սոգդանիայի հետ՝ արեւելքում։ Սելեւկեանների դէմ առաջացած խլրտումների շրջանում այս երկիրներից մի քանիսը և միւսները նրանցից առաջ, անջատուեցին և կազմեցին անկախ թագաւորութիւններ։ Որպէս այդպիսին՝ նրանք հետագայում մտան պարթեւական կայսրութեան մէջ։ Ծայրամասերի երկիրները ըստ իրենց քաղաքական կացութեան տարբերւում էին կենտրոնական իշխանութիւններից։

Արշակունիները նայում էին նուաճուած երկիրների վերայ որպէս իրենց տոհմի սեփականութիւնը, ուստի և ջանում էին ձեռք ձգել իրենցից կախում ունեցող թագաւորութեանց գահերը և բաժանել այն իրենց ազգակիցների մէջ։ Նրանք հասան այն բանին, որ մեր թուած երկիրներում տեղական արքայական հարստութիւնները շուտով փոխարինուեցին Արշակունիներով։ Արշակունի երկրորդական.կրտսեր հարստութիւնները շուտով ընտելացան այդ երկիրների հետ, ուր նրանք հաստատուեցին և նոյնպիսի թշնամական դիրք բռնեցին կենտրոնական իշխանութեան հանդէպ՝ ինչպէս տեղական դինաստիաները։ Տոհմատիրական միտումները իշխանութեան նկատմամբ՝ մասամբ խանգարում էին մէկ պետական միութիւն ստեղծելուն: Պարթեւների կայսրութիւնը ոչ թէ պետութիւն էր, այլ մանր միութիւնների մէկ ամբողջական կառուցուածք՝ պետական գործառնութեամբ օժտուած։

Արշակունիների գլխաւոր ճիւղը օժտուած էր գերիշխանութեամբ։ Կազմիչ թագաւորութիւնների պետերը կոչւում էին արքաներ, իսկ կենտրոնի իշխանութեան պետը՝ արքայից արքայ։ Այս մեծադղորդ տիտղոսը նրանք ժառանգել էին Աքէմէնեաններից, իսկ վերջիններս՝ Ասորեստանից։ Ի նկատի ունենալով, որ առաջին Արշակունիները կոչւում էին միայն արքաներ և միայն Միհրդատ Ա-ի ժամանակից, երբ նրանք ընդարձակեցին իրենց սահմանները, ըսկսեցին գործածել արքայից արքայ տիտղոսը, պէտք է ենթադրել, որ խնդիրը Աքէմէնեաններին նմանուելու մէջ չէր, այլ տիտղոսը համապատասխանում էր իրերի փաստական դրութեան։ Սասանեան աւանդութեանց հասնող մահմետական վկայութեանց համաձայն՝ Արշակունիների իշխանութիւնը ընդունել էին 90 արքաներ, 90 երկիրների կառավարիչներ։ Ըստ նոյն այս տեղեկութիւնների՝ Պարթեւների կայսրութիւնը moluk-al-tawaif-ների դաշնակցութիւն էր, այսինքն հաւաքական պետութիւն կազմուած զանազան ժողովուրդների եւ ցեղերի թագաւորներից։ Պարթեւ կայսրութեան նկատմամբ էլ կիրառելի էր սիստեմամէկյձօն արտայայտութիւնը։ Նա նոյնպիսի մեծ միութիւն-դաշնակցութիւն էր՝ ինչպէս Աքէմէնեանների օրով, փոխուած էին միայն դաշնակցութեան կազմիչ մասերը։ Միութիւնը կառուցուած էր հնամենի հիմքերի վրայ։ Մալուկների կամ մանր թագաւորների փաստական կախումը՝ արտայայտւում էր այն պարտականութեանց կատարումով, որոնք ընկած էին իրանական պետութեանց հիմքում՝ Պարթեւներից առաջ էլ՝ այսինքն հարկ տալու և զինուորական օգնութիւն մատակարարելու մէջ։ Այս բանաձեւի մէջ նուազագոյնի են վերածուած պետութեան խնդիրներն ու գործառնութիւնը։ Մասերի նման կախումն ամբողջից կազմում է հէնց վասալութեան էութիւնը, աւատական դրութեան ամենէն էական յատկանիշներից մէկը։

Այսպիսի կառուցում ունեցող պետութիւնը, հասկնալի է, չէր կարող կեանքն աւելի խոր ընդգրկել։ Հին մարդկանց ըմբռնումով իշխանութիւնը երկու աղբիւր ունէր՝ նա նուաճումի կամ ծագումի իրաւունքով էր ստեղծուած։ Առաջին դէպքում իշխանութեան արտայայտութիւնը սահմանափակւում էր՝ պետականութեան մտանանչուած նեղ սահմաններում, իսկ արիւնի-ծագումի առաջնութեան վերայ կառուցուած իշխանութիւնը ընդգրկում է հասարակական կեանքի բոլոր ճիւղերն ու կողմերը և գործում է տոհմական կազմակերպութեան ձեւերով։ Արիւնի իրաւունքը որպէս հիմք համակեցութեան և նրանից բխող իրաւայարաբերութիւնների՝ աչքի է ընկնում արտակարգ կենսունակութեամբ։ Այս բանը ծառայելու է մեզ համար որպէս ղեկավար ուղեգիծ առաջադրած հարցի վերլուծութեան ժամանակ Հայաստանի ընկերային կեանքի հիմքերը լուսաբանելիս։

* * *

ԳԼՈՒԽ Բ.

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՏՈՀՄԱԿԱՆ ԺԻՄՔԵՐԸ

Հայոց պատմութեան երկու շրջանները՝ Տիգրանեան և Արշակունեաց, կամ Կոմարխների և Ստրատէգների շրջան։ Առաջին շրջանի՝ տոհմական կարգը։ Հայաստանի ազգագրական կազմը։ Հայոց ազգութեան կառուցման որոշիչ մոմենտը։ Նրա հիմնական տարրերը տոհմական կեանքի մնացորդները մաղխազ, ասպետ, մամակ, տէր ըստ a posteriori *կառուցման։ Այս տերմինների ստուգաբանութիւնը որպէս նոյնիմաստ արտայայտութիւն՝ տարբեր էթնիկ շրջանների տոհմապետների համար։ Տոհմական միջավայրի շերտաւորումը և տոհմապետների հզօրացումը։ Բաժանման գործողութիւնը Իբերիայում և Աղուանիքում։ Երկրի ազնուականացումն Տիգրան Մեծի դարում, Աւագանիի նշանաւոր ներկայացուցիչները նրա մօտ՝ չորս բդեշխները, Բագարատ, Մեհրուժան, Մամիկ որպէս Բագրատունեաց, Ծոփաց Արծրունիների և Մամիկոնեան տների հիմնադիրներ: Խորխոռունիների տոհմը Դասայնութեան ծագումը միւս տոհմական խմբակցութեանց մէջ։ Մարդպետ՝ մարդերի պետ. Մոկերի իշխանութիւնը. Մոկսենիս, Կուրտերի իշխանը։ Կորճէք։ Ենթադրութիւններ Ամատունի, Մուրացան տոհմերի մասին։ Սիւնի Սիսական. Շիրակի իշխանութեանց տոհմական հիմքը։ Դասայնութեան հոլովոյթի ամբողջանալը Հայաստանում՝ Արշակունիների երեւալուց առաջ։*

Որպէս Իրանի քաղաքական և մշակութային աշխարհի բաղադրիչ մասերից մէկը՝ Հայաստանը նրա հետ պիտի անցնէր հոլովոյթի ընդհանուր ուղի։ Հոլովոյթի հիմնական փուլերը, Իրանի պատմութեան, ամենէն ցցուն մոմենտները պէտք է անդրադառնային Հայոց կեանքի վրայ։ Այս իմաստով Իրանի պատմութեան դարաշրջանների բաժանումը ընդունելի են նաև Հայոց պատմութեան համար։ Պարթեւների տիրապետութիւնը մէկ դարձակէտ է, նոր դարաշրջան բացող թէ Պարսից և թէ Հայոց պատմութեան մէջ։ Եւ որովհետեւ Պարթեւների հարստութիւնը մի քիչ ուշ հաստատուեց Հայաստանում քան Պարսկաստանում, այսինքն մեր թուարկութեան սկզբին, ուստի և այդ ժամանակից էլ պիտի հաշուել Հայոց պատմութեան Արշակունիների շրջանը։

Նախաարշակունեաց շրջանը արտաքին տեսակէտից մենք կարող ենք կոչել Աքեմենեան, *ներքին տեսակէտից՝* Տիգրանեան, *այն հարստութեան անունով, որից դուրս են եկել Արտաշէսն ու Զարիադրէսը և նրանց նշանաւոր յաջորդը Տիգրան Մեծը[1]։ Ընկերային-քաղաքական տեսակէտից այս շրջանը համապատասխանում է Պարսից պատմութեան մինչ պարթեւական շրջանին և հանդիսանում է գերազանցօրէն տոհմական յարաբերութեանց շրջան։*

---

[1] ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Սովորաբար կարծում են, որ նախա-Արշակունեաց արքայական հարստութիւնը՝ Հայաստանում՝ սկիզբ է առնում Արտաշէսից եւ Զարիադրէսից: Ըստ Ստրաբոնի Անտիոքոս Մեծի (223—187 Քր. ա.) այս երկու զօրավարները բաժանեցին Հայաստանը իրենց մէջ եւ Անտիոքոսի 189ի պարտութիւնից յետոյ՝ յայտարարեցին իրենց անկախ թագաւորներ: Բայց իրօք Հայաստանի երկու մասի բաժանումը գոյութիւն ունէր վաղուց: Իրօք այդ Աքեմենեան շրջանի 13 եւ 18.րդ սատրապութիւններն են կամ Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանը՝ Տիրիբազի եւ Օրոնտի իշխանութիւնները։ Երկուսի մէջ էլ՝ միաժամանակ սատրապութիւնների հետ գոյութիւն ունէին տեղական թագաւորութիւններ: Քսենոփոնը ծանօթ է Կիւրոսին եւ Աժդահակին՝ ժամանակակից Հայոց թագաւորին. նա ունէր երկու որդիներ՝ Տիգրանէս եւ Սաբարիս:

Պատմաբանը թագաւորի անունը չի յիշում: Ըստ Հայկական աւանդութեանց նա կոչւում էր Տիգրան եւ Կիւրոսի դաշնակիցն էր Աժդահակի դէմ: Արտաշէսի յաջորդներից նշանաւորագոյնը նոյնպէս այդ անունն էր կրում՝ Տիգրան Մեծը: Չենք կարծում, որ Արտաշէսի տոհմի ծագումը հասնում է Աժդահակին ժամանակակից Տիգրանին։ Ծոփքի թագաւոր Զարիադրէսը նոյնպէս նոյն արքայական հարստութեան տոհմից է ծագում: Անտիոքոս Մեծը կռուեց Հայոց թագաւոր Քսերքսէսի դէմ Արշամաշատում. Դեռ եւս Սելեւկոս Ա.ի օրով՝ 312—280 յիշւում է մէկ Հայոց թագաւոր, որի անունը կարդացւում է *Ardaotes* կամ *Artaontes*։ Վերջին ձեւով նա նման է, Արտանէս Ծոփաց թագաւորի անուան՝ Զարիադրէսի նախորդներից: Ըստ երեւոյթին այս անունն ընդունուած էր Զարիադրէսի տոհմի մէջ: Քսերքսէս թագաւորը՝ հաւանօրէն Զարիադրէսի նախորդներից մէկն է: Քսերքսէսի Զարիադրէսի անունների հայերէնը՝ Շաւարշն ու Զարեհը

Հայոց պատմութեան այս երկու՝ Տիգրանեան և Արշակունեաց շրջանները՝ երկրի ընկերային հոլովոյթի տեսակէտից կարելի է կոչել առաջինը՝ ոմարխների, երկրորդը՝ Ստրատեգների դար։ Շուրջ 400 թ. Քր. առաջ, տասը հազար Յոյների նահանջի ժամանակ՝ Քսէնոֆոնի հայկական գիւղերի նկարագրութիւնը՝ բաւարար չափով բնորոշում է երկրի հասարակական կեանքը։ Հայաստանը բացառապէս կազմուած էր գիւղերից, որոնց գլուխը կանգնած էին պետերը՝ Կոմարխէսները կամ Արխօն Տէս Կօմէս։ Կոմարխները վարչական օրգաններ էին՝ սատրապի հետ միասին, որ Պարսից Թագաւորի ներկայացուցիչն էր։ Յոյն պատմաբանի նկարագրած գիւղերի նահապետական պատկերից՝ դժուար չէր կռահել, որ կոմարխները՝ գիւղերի մէջ ապրող տոհմերի պետերն են։ Գիւղերի շուրջը բարձրացած հողաթումբերը, նախնական տնտեսութիւնը՝ ստորերկրեայ բնակարաններով՝ ուր մարդկանց հետ միասին տեղաւորուած են նաև կենդանիները՝ ոչխարներ, այծեր, կովեր և ընդհանրապէս ընտանի կենդանիներ։ Այս բոլորը՝ յատկանիշներ են ոչ ուրիշ քան համակեցութեան տոհմական ձեւի։ Յոյներին ուղեկցող տանուտէրը հրաժարւում է օտարականների առաջարկած ամեն բանից «երբ նա հանդիպում էր իր ազգակիցներից որեւէ մեկին՝ իսկ նրան առնում է իր մօտ»․ այսպիսի հայրական հողագործութեան մէջ չի կարելի չնկատել տոհմապետին յատուկ գծեր։

Մէկ ուրիշ պատկեր է ներկայանում մեր առաջ մի քանի դար յետոյ՝ այսինքն, Արշակունիների Հայաստանում հաստատուելու սկզբին։ Այս ժամանակ Հայաստանը բաժանուած էր 120 մասերի կամ Պրէֆէկտուրաների, որոնք կոչւում են ստրատեգութիւններ, նրանց մէջ նաև մի քանի նախկին Թագաւորութիւններ․ *dividitur in praefecturas quas strategias vocant, quasdam ex his vel singula regna quondum, barbaris nominibûs cxx*․— ասում է Պլինիոս։ Ճիշդ է այս բաժանումների էութիւնը այնքան էլ պարզ չէ և յայտնի չէ թէ ով է նրանց անուանել ստրատեգութիւններ և տեղական ինչ բառին է նա համա-

---

ընդունուած էին Արծրունի տոհմի մէջ եւ նրանք, ինչպէս պիտի տեսնենք ծագում էին Ծոփից: Անանունի մօտ յիշւում է Զարեհ, Շաւարշ եւ Արմոգ:—Ասոկ թագաւորները: Հայաստանի երկու մասի բաժանումը հեռաւոր ժամանակներին է վերաբերում եւ ինձ թւում է կախում ունի սեպագիր արձանագրութեանց երկու մեծ թագաւորութիւնների՝ Ուրարտուի եւ Մինեի հետ, որ ընդհանուր գծերով համընկնում է սատրապական շրջանի Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի հետ: Ծոփաց թագաւորութիւնը Տիգրանի օրով միացաւ Արտաշէսեան թագաւորութեան հետ: Տիգրանի դինաստիայի նշանաւոր նուաճող Տիգրան Մեծին ի պատիւ նախաարշակունեաց շրջանը մենք կոչում ենք Տիգրանեան:

պատասխանում մենք դեռ կը դառնանք այդ հարցին — բայց անկասկած է, որ *strategia*-ն զինուորական տերմին է և որպէս այդպիսին ցոյց է տալիս, որ զինուորական գործառնութիւնը գրաւում էր առաջին տեղը ստրատէգների պարտականութեանց մէջ։ Դիտենք, որ Հայոց իշխանները զինուորական ծառայութիւն էին անում և պարտաւոր էին առաջին իսկ կոչին ներկայանալ թագաւորին իրենց այրուձիու գլուխն անցած։ Ըստ այսմ հիմք կայ ընդունելու ստրատէգութիւնները որպէս ժառանգական իշխանութիւններ, թէպէտ և իրենց զարգացման նախնական փուլի մէջ։

Ստրատէգները և կոմարխները կանգնած են ընկերային տարբեր աստիճանների վրայ և բաժանուած են իրարից չորս դարով։ Նրանք երկրի ընկերային ուժերի աճման պատմութեան մէջ ցուցահանում են շատ կարեւոր սահմանագիծ։ Մեր առաջադրած խնդիրն այն է, որ պարզենք կոմարխներից ստրատէգներին՝ կամ ուրիշ խօսքով տոհմական կարգից դէպի աւատականութեան առաջնորդող՝ պատմական պրոցէսի էութիւնը։

Տոհմական կարգը ընդունւում է իւրաքանչիւր ժողովուրդի պատմութեան մէջ որպէս հոլովոյթի անհրաժեշտ նախնական աստիճան։ Հայաստանն ունէր յատկապէս նպաստաւոր դրութիւն նման կենցաղի համար՝ իր ազգագրական և աշխարհագրական պայմանների հետեւանքով։ Գտնուելով ժողովուրդների մեծ գաղթաշարժների ուղիների հանդիման կէտում՝ նա պահում էր և իր մէջ ծծում բազմաթիւ ցեղագրական հոսանքներ և տոհմական շերտեր։ Երկրի պայմանները չէին նպաստում համաձուլման։ Բարձր լեռնաշղթաները ակօսելով երկիրը ամեն կողմերից ստեղծում էր հովիտների և կիրճերի մէկ ցանց, որոնցից իւրաքանչիւրը մէկ ինքնամփոփ, փակ միջավայր էր՝ վերին աստիճանի նպաստաւոր ցեղական, տոհմական առանձնայատկութեանց պահպանման։ Այսպիսի յատկանիշների առատութիւնը առաջնորդում էր տոհմական կարգի ձեւերին և նախորոշում է նրա պահպանողականութիւնը։

A priori ենթադրուած՝ Հայոց պատմութեան տոհմական շրջանի մասին շատ քիչ փաստական տուեալներ ունինք։ Որպէս այդպիսին հանդիսանում են գլխաւորապէս հին Հայոց գրականութեան մէջ պահուած տերմինները և նրանց վերապրուկները, որոնք որոշ գաղափար են տալիս կոմարխների դարաշրջանի ընկերային կառոյցի մասին։

Ամենից առաջ ուշագրութիւն են գրաւում իրանական տերմինները՝ տոհմ՝ *tauma*, ազն՝ *zana*, վիթ-ի վերապրուկները վիս, վաս ձեւով, սե(պուհ) դեհ *danhiu*, վաճառ *habaèaris*, աշխարհ խշաթրա շահապ՝ քշաթրապա։ Սրանցից մի քանիսը Սասանեան ժամանակների փոխառութիւնն են, միւսները հասնում են հնագոյն, գուցէ Աքէմէնեան դարին։ Վարչական կարգին վերաբերող բառերի փոխառութիւնը՝ ինչպէս աշխարհ կամ շահապ՝ հասկնալի է և բացատրւում է՝ Նուաճողների քաղաքական ազդեցութեամբ։ Բայց մենք իրաւունք ունէինք սպասելու, որ յուրայատուկ տոհմական յարաբերութեանց մէջ ծագում առած, տոհմական կարգը բնորոշող տերմինները կրէին զուտ հայկական բնոյթ։ Սակայն այստեղ էլ հանդիպում ենք իրանական բառերի, ըստ որում այնպիսի նուրբ երանգաւորումով, որ չի կարելի համարել այն լոկ հասարակ փոխառութիւն

Այսպիսի երևոյթներ նկատում ենք նաև ուրիշ ծագում ունեցող բառամթերքների մէջ, որոնք մօտեցնում են Հայերին Հայաստանը շրջապատող հարևան ուրիշ ժողովուրդների հետ։ Մեզ զբաղեցնող հարցի տեսակէտից բնորոշիչ և կարևոր մի քանի տերմինների դասաւորման և լուսաբանման համար անհրաժեշտ է ծանօթանալ հայ ժողովրդի ազգագրական-ցեղային կազմի հետ։

Մինչև Հայաստանի առաջին բնակչութեան ազգագրական շերտերը պեղել առայժմ հնարաւոր չէ։ Մեզ մօտիկ պատմական շրջանով միայն սահմանափակուելով գտնում ենք, որ հայ ժողովուրդը ձևաւորուել է ոչ միայն զանազան տոհմային, այլև ռասսայական, ցեղային տարրերից։ Աքեմէնեանները օրով, այն հողամասը, որ հետագայում կոչուեց Հայաստան՝ բնակեցուած էր զանազան ժողովուրդներով և կազմում էր երկու սատրապութիւն։ Պակտերը և Հայերը իրենց հարևաններով տարածուած մինչև Սև ծով, կազմում էին 13րդ սատրապութիւնը, իսկ Մատիները, Սասպէյրները և Ալարոդները՝ 18րդ սատրապութիւնը։ Հայերը՝ արևմուտքից սահմանակից էին Կիլիկիացիների, իսկ արևելքում՝ Մատիէնների հետ, ըստ որում առաջիններից բաժանւում էին Եփրատի հոսանքներով, իսկ երկրորդից՝ Տիգրիսի վտակներից մէկով, հաւանաբար Զաբ գետով։ Ալարոդները և Սասպէյրները՝ որովհետև Մատիէնների հետ կազմում էին մէկ սատրապութիւն՝ հաւանօրէն մտնում էին նրանց հիւսիս-արևմուտքից։ Քսէրքսէսի արշաւանքի ժամանակ Հայերը կանգնած էին Փռիւգացիների հետ մէկ դրօշի տակ, իսկ Ալարոդները և Սասպէյրները՝ ուրիշ դրօշի տակ։ Սահմանակից ժողովուրդներից ամենից նշանաւորներն, Մոսքերը, Տիբարէները, Մակրոնները եւ Մոսինոյկները, Մարերն ու Կոլխերը, Ուտիները եւ Միկերը՝ ունէին իւրաքանչիւր զոյգը՝ առանձին պետեր, իսկ Մարերը առանձին հրամանատարութեան տակ էին։

Տասը հազար Յոյների նահանջի ժամանակ Ֆասիանների և էսպէրիտների, այսինքն Սասպէյրների, ինչպէս և Տաոխների երկիրը՝ արդէն համարւում էր Հայաստան և միւս Հայաստանից զանազանելու համար կոչւում էր Արևմտեան Հայաստան։ Մէկ մասի կառավարիչը կամ սատրապը՝ Տիրիբազն էր, իսկ միւսինը՝ Որոնտը։ Այդ ժամանակ սրանց հարևան ցեղերը՝ Կարդուխները, Խալիբները. Խալդերը, Մակրոնները, Կոլխերը. Մոսինոյկները, Խոյթերը եւ Տիբարէնները անկախ էին։ Հարիւր տարի յետոյ Գավգամէլի ճակատամարտում՝ Հայաստանում նորից տեսնում ենք երկու սատրապներ՝ Որոնտը և Միտրաբազը, իսկ հարևան Մարերը գտնւում էին Ատրոպատէնի հրամանատարութեան տակ. Նրանց հետ էին նաև Կադուշիները. Աղուանները եւ Շակաշէնները։

Բոլոր այս ժողովուրդները ամբողջութեամբ կամ մասամբ հաստատուել էին այն հողերի վրայ, որ յետագայում դարձաւ Հայաստան։ Թուով՝ նրանք քանից աւելի էին, բայց ըստ արիւնակցութեան մի քանի խմբաւորումների էին բաժանւում։ Հայերի մասին ասւում է, որ «նրանք զինուած էին Փռիւգացիների նման, որովհետև փռիւգական գաղթականներ էին»։ Ըստ այսմ սպառազինութեան նմանութիւնը կարելի էր համարել ազգակցութեան նշան։ Եւ որովհետև Ուտիները, Միկերը և Պարիկանները՝ սպառազինուած էին Պակտերի նման, Տիբարինները և Մակրոնները, Մոսինոյկները՝ ինչպէս Մոսքերը, Ալարոդները և Սասպէյրները՝ ինչպէս Կոլխերը, իսկ Մարերը ունէին առանձին սպառազինում, ուստի այստեղից բխում է, որ մեր թուարկած ցեղերը խմբաւորւում են Պակտերի, Մոսքերի, Կոլխերի շուրջը, չհաշուելով՝ Մարերին և Հայերին։ Այս ցեղերից մի քանիսը ոչնչացան՝ թողնելով իրենց անունը այն հողամասին, ուր ապրում էին։ Այսպէս օրինակ ասպարէզից դուրս եկան Ալարոդները, Սասպէյրները, Տաոխները, Ֆասեանները՝ որպէս ուրոյն ժողովուրդներ, բայց նրանց յիշատակը մնացել է Արարատի, Սպէրի, Տայքի և Բասէնի՝ աշխարհագրական անունների մէջ։ Պակտերի անունը պահուել է այժմեան Բոխտանի մէջ՝ Արևելեան Տիգրիսի ափերին։ Գոյութիւն ունի նաև քրտական Բոխտու ցեղը։ Պակտերին ազգակից Միկները, հայկական Մոկք-ը, մասամբ շարժուեցին հիւսիս և հաստատուեցին Քուռի և Արաքսի մէջ. Նրանցից ծագում առան Մխանք-ը՝ մէկ գաւառակ՝ Արցախում և Մուղանի յայտնի տափաստանը։ Դէպի հիւսիս քշուեցին նաև Կոլխերը, Մոսքերը և ուրիշ ժողովուրդներ։ Այս խմորումներէն ընթացակցում է Հայոց ազգայնութեան ձևաւորումը։

Նրա կերպաւորման վճռական մոմենտներից մէկը պահել է պատմութիւնը։ Նա վերաբերում է Զարիադրէսի և Արտաշէսի ժամանակներին և արտայայտւում է ամբողջ ժողովրդին մատչելի մէկ լեզուի մշակումով։ Ըստ վստահելի վկայութեանց՝ յատկապէս նրանց ժամանակ՝ սկիզբը փոքր՝ Հայաստանը ընդարձակուեց ի հաշիւ հարևան երկիրների։ Մարերից նա խլեց Կասպեանը, Փաւնիտիսը, Բասորոպեդան, Իբերներից՝ Պարիադրերի լեռնալանջերը, Տայքը, Սպէրը.

Խորձէնին, Գուգարէնը, Խալիբներից և Մոսինոյկներից՝ Կարէնիտը, Դերջանը, Կատաոնցիներից՝ Աքիլիսէնը և վերջապէս Սիրիացիներից՝ Տմորիքը։

Հաւաքման այս գործողութիւնը սկսուեց երկու կենտրոններում՝ Արտաշէսի և Զարիադէսի իշխանութեանց մէջ, որոնց ծագումը հասնում էր նախկին երկու սատրապութեանց։ Այս շարժումը ծաւալուեց ամեն կողմ և ընդգրկեց հարեւան ժողովուրդների ապրած տարածութիւնները՝ Մարաստանի, Իբերիայի, Կապադովկիայի և Սիրիայի կողմից։ Կատաոնները Կապադովկիայի բնակչութեան մասն էին կազմում։ Ըստ Ստրաբոնի՝ հին հեղինակները նրանց համարում էին Կապադովկիացիներից տարբեր ժողովուրդ, բայց իր ժամանակ նրանք ըստ լեզուի և բարքերի նմանուել էին երկրի միւս ժողովուրդներին՝ կորցնելով իրենց ցեղային յատկանիշները։ Իսկ Կապադովկիայի բնակիչները չնայած իրենց ծագման բազմազանութեան մտնում էին Սիրիական աշխարհին։ Յոյները նրանց անուանում էին Սիրիացիներ կամ «սպիտակ Սիրիացիներ» տարբերելու համար միւսներից։ Կապադովկիան, ուրեմն, ազգագրական տեսակէտից, մտնում էր սեմական ընտանիքին։ Այժմ բաւականաչափ ապացուցուած է, որ իբերական ժողովուրդներն էլ ազգակցական կապեր ունէին սեմականների հետ։

Այսպէսով Միջագետքի հարթութիւններից մինչեւ Սեւ ծով երբեմն կազմում էր ազգակից էթնիկ մէկ շրջան՝ համաձայն Ստրաբոնի այն վկայութեան, թէ հին ժամանակ Սիրիացիների անունը տարածւում էր Բաբելոնից մինչեւ Եվքսինեան ծով։ Մասամբ Ստրաբոնին հետեւելով սիրիական կամ սեմական աշխարհը անուանենք Արամէական։ Հնագոյն վկայութեանց հիման վրայ մեծ աշխարհագրագէտը այս աշխարհի մէջ դնում է նաեւ Հայերին, հակառակ Հերոդոտի, ըստ որի Հայերը դուրս են եկել Փռիւգիայից։ Հոմերոսի յիշած Էրէմբոյ ժողովուրդի մասին հների մէջ վէճ կար։ Ստրաբոնը կանգնած է Պոսէյդոնի տեսակէտի վրայ. «Թւում է թէ, ասում է աշխարհագրագէտը՝ լաւապէս Պոսէյդոնն է բացատրում՝ ելակէտ ունենալով ժողովուրդների ազգակցութիւնը և չփումները։ Զէ որ հայ, սիրիացի և արաբ ժողովուրդները երեւան են բերում լեզուի, ապրելակերպի և դիմագծի մեծ ազգակցութիւն, յատկապէս այն վայրերում, ուր նրանք ապրում են կողք-կողքի։ Յայտնի է, որ Միջագետքը ունի այս երեք ժողովուրդներն էլ և այստեղ ցայտուն ձեւով երեւան է գալիս նրանց նմանութիւնը։ Եթէ կլիմայական պայմանների հետեւանքով ստեղծւում է որոշ տարբերութիւն՝ յատկապէս հիւսիսայինների և հարաւայինների մէջ, ինչպէս և այս երկուսի և նրանց մէջ, որոնք ապրում են սրանց մէջտեղը, բայց եւ այնպէս ընդհանուր գծերը գերակշռում են։ Ասորեստանցիները և Արիանները նոյնպէս մօտ են յիշւած ժողովուրդներին և իրար։ Թւում է թէ այս ժողովուրդների անունները էլ մօտ են իրար։ Այն որ մենք սիրիացի ենք կոչում՝ իրենք Սիրիացիները անուանում են Արմեններ և Արամէացիներ. սրան նման է արմէն, «արաբ և էրէմա անունները»։ Իր աշխատանքի վերջին միեւնոյն հարցին վերադառնալով՝ աշխարհագրագէտը նորից կրկնում է արտայայտած կարծիքը, որ երեք ժողովուրդները ապրելով կողք կողքի ազգակցութիւն են երեւան բերում և կոչւում են նման անուններով՝ մէկը Արմեններ, միւսները՝ Արամեացիներ իսկ երրորդը՝ Արամբներ ճիշդ ու ճիշդ կարծէք միեւնոյն ժողովուրդը բաժանուել է երեքի՝ համապատասխան կլիմայական պայմանների։

Այս արժէքաւոր ցուցմունքներից տեսնում ենք թէ ինչ ընդհանուր բան էին գտնում հները Հայերի, Սիրիացիների և Արաբների մէջ։ Նա արտայայտւում էր ոչ միայն արտաքին տեսքի և ապրելակերպի մէջ, այլեւ լեզուի։ Նմանութիւնն ապչեցուցիչ է յատկապէս խառն բնակչութիւն ունեցող շրջաններում։ Պոսէյդոնի ստուգաբանական մօտեցումները հիմնուած են կեանքի իրական տուեալների վրայ՝ համեմատութեան դրած ժողովուրդների նմանութեան և ընդհանրութեան վրայ և ոչ թէ հակառակը, այսինքն հեղինակը չի աղաւաղում իրականութիւնը յօգուտ ստուգաբանութեան։ Որոշակի յայտարարութիւնը, թէ Պոսէյդոնը իր լուսաբանութեանց մէջ մեկնակէտ ունի ցեղագրական ազգակցութիւնը և չփումները շատ կարեւոր են։

Հայերի փռիւգիական ծագման վկայութեան հետ մենք ունինք նոյնպիսի վկայութիւն Հայերի Արամէացիների հետ ունեցած ազգակցութեան մասին։ Այս և միւս գրութեան ճշմարտութիւնը կարելի է ապացուցել միայն Հայոց լեզուի, այս նշանաւոր և բարդ յիշատակարանի վերլուծութեամբ։ Եթէ Փռիւգիացիների տակ պէտք է հասկանալ Հնդեւրոպացիներին, ապա ուրեմն Հերոդոտի խօսքերը արդարանում են։ Հայոց լեզուի հետազօտութիւնը հնդեւրոպական հնչաբանութեան տեսակէտից՝ երեւան բերեց Հայերի ազգակցական կապը հնդեւրոպական լեզուների մեծ ընտանիքի հետ։ Անկասկած, որ մի այլ պատմական ցուցմունքների օգնով կատարուած ուսումնասիրութիւնները՝ պիտի յայտնաբերեն Հայերի մօտիկութիւնը արամէական ընտանիքի հետ։ Այսպիսի աշխատանքի յաջողակ լինելը կարելի է համարել ապահովուած լեզուական այն նիւթերի հիման վրայ, որոնք գոնէ մինչեւ այժմ հաւաքուած են։

Հայոց լեզուի արիական և սեմական տարրերը որոշելու համար պէտք է ենթադրել, որ Հայաստանը նախապէս մտնում էր զանազան ցեղական խմբակցութեանց գօտիի մէջ, ինչպիսիք են կարդուխները

Մոսքերը. Սասպէրները և ուրիշները՝ արամէական տարրի գերակշռութեամբ։ Քիմրների նշանաւոր արշաւանքը Է դարում Փոքր Ասիայի մէջ առաջացրեց ժողովրդների մեծ գաղթումներ։ Փռիւգական Արմէնները իրենց բնավայրերից դուրս արուելով անցան Եփրատը և մխրճուեցին տեղական արամէական բնակչութեանց մէջ։ Նրա մի մասը մնաց հիւսիսում, մի մասը հարաւում, իսկ նուաճման գօտիի բնակչութիւնը խառնուեց յաղթողների հետ։ Եկուոր Փռիւգացիների և գլխաւորապէս արամէական ծագում ունեցող բնիկների խառնուրդից ձեւաւորուեց կորիզը Հայոց ժողովրդի։

Այս միջուկի կրկնակի, երկեակ կազմի մասին՝ որպէս լաւագոյն ապացոյցը ծառայում է Հայերի երկու անունները։ Նրանք իրենք իրենց Հայ են կոչում, իսկ հարեւանները armen-ius։ Մէկը ծագում է եկուորներից. միւսը բնիկներից: Հայոց ազգութեան ծագման գործողութիւնը զարմանալիօրէն ճիշդ է պատկերացրուած Խորենացու և Անանունի մօտ պահուած հին հայկական աւանդութիւնների մէջ։ Երկու անձնանունները՝ Հայ-կ և Արաման-եակ կամ Արմեն-ակ դիմաւորում են հնդկա-եւրոպական և արամէական երկու տարրերը։ Ինքը Արմեն Արմենիք անունը ըստ Խորենացու ծագում է Արամ-ից։ Եւ այստեղ Հայոց աւանդութիւնը յենարան է հանդիսանում Պոսէյդոնին, որ զուգադրում է Արմենիոնը Արամէյոնի հետ։ Հայ բառի իմաստի լուսաբանութեան փորձերը մինչեւ հիմա անյաջող են անցել:

Հիմնական զանգուածին միանում էին ուրիշ ցեղեր: Դէպի Նա՝ ծայրամասերից՝ Ատրպատականից, Վրաստանից, Կապադովկիայից, Սիրիայից՝ մշտապէս գալիս էին էթնիկ՝ ազգագրական նոր հոսանքներ։ Ժողովուրդների ձուլման գործողութիւնը շարունակուեց մինչեւ Զարիադէսը և Արտաշէսը։ Հէնց այդ ժամանակ էլ աւարտուեց երկրի հայացման մէկ շատ կարեւոր շրջանը։ Տիգրան Մեծի կայսրութեան վաղորդայնին՝ ցեղական տարբերութիւններն արդէն հարթուել էին այնքան, որ ամբողջ բնակչութիւնը խօսում էր մէկ ընդհանուր լեզուով։ Ընդհանուր ազգային լեզուի մշակման մոմենտը կարող է համարուել վերջնական ժամկէտ ցեղային-տոհմական կեանքի

Ցեղերի ու ժողովուրդների այսպիսի առատութիւն ունեցող մէկ երկրում տոհմական կարգը կազմում է բնական այն շրջանակը, որի մէջ ձեւաւորւում է կեանքը։ Բազմացեղ միջավայրում մարդու կեանքը պէտք է որոշուէր աւելի շուտ այս կամ այն տոհմի հիմը ունեցած արիւնակցական կապերով։ Հերոդոտի դիտողութիւնը Հայերի մասին, որպէս հովիւ ժողովրդի ցոյց է տալիս ակնբախ ձեւով՝ թէ զարգացման ի՛նչ աստիճանի վերայ էին կանգնած այն ժամանակ Հայերը։ Ինչ որ գիտենք Հայերի հետ միեւնոյն մշակութային միջավայրում ապրող հարեւան ժողովուրդների կենցաղից, որոշ գաղափար է տալիս զարգացման այդ փուլի մասին:

Տոհմական ընդհանուր սեփականութիւնը՝ աւագ անդամի գլխաւորութեամբ կառավարուելը՝ ինչպէս է Վրացիների և Արաբների մօտ, եղբայրների առաջնութիւնը որդիների հանդէպ և կանանց ընդհանուր լինելը Արաբների մօտ, հասարակական վարչութեան բնորոշիչ ձեւերը Ասորեստանցիների մօտ, մասնաւոր ժառանգութեան գոյութիւն չունենալը և ունեցուածքի՛ մեռելի հետ թաղելը Ազուանների մօտ, նոյն միջավայրից վերցրած մի քանի ժողովուրդների մօտ թագաւորի պահպանումն և ընդհանրապէս նրա կացութիւնը՝ տոհմական կենցաղի դարը բնորոշող երեւոյթներ են։

Ցետագայում Հայաստանում՝ տոհմական ազնուականութեան մէջ նկատուած մի քանի գծեր՝ ինչպէս օրինակ՝ ամբողջ տոհմի անբաժան, միասնական իշխանութիւնը հողի վրայ՝ աւագի գլխաւորութեամբ ցոյց է տալիս, թէ ուր է թաղուած այդպիսի երեւոյթի արմատները: Մեզ անյայտ է թէ մօտաւորապէս ինչ ձեւեր էին ընդունել տոհմական կեանքը Հայերին մօտ։ Բնակչութեան այդպիսի բազմացեղ կազմի հետեւանքով՝ կենսաձեւերը կարող էին լինել շատ բազմերանգ, նայած թէ տուեալ ազգագրական խմբակցութիւնը՝ հոլովոյթի ինչ աստիճանի վրայ էր կանգնած։ Բայց և այնպէս կարելի է կատարել որոշ ընդհանուր խմբաւորում՝ համաձայն էթնիկ զանգուածների գլխաւոր տարրերի։ Լեզուական վերապրուկների մէջ յատուկ ուշադրութեան արժանի են նախարարական անուանացանկի մի քանի բառերը՝ տերմինները, որոնք տոհմական կարգի ժառանգութիւնն են և ճիշդ լուսաբանելիս որոշ գաղափար են տալիս այն մասին, թէ ինչպէս էին համակցւում տոհմական շրջանում գլխաւոր էթնիկ խաւերը և ինչ ձեւով էին կատարւում ժողովրդական ուժերի համախմբումը տոհմական կարգի քայքայման շրջանում։ Այդ տերմիններն են Մաղխազ, Ասպետ. Մամակ և Տէր՝ իրենց նախնական իմաստով առած, որոնք պիտի ջանանք լուսաբանել։

* * *

Սկզբնապէս բոլոր չորս տերմինները, բառերն էլ նշանակում էին երկրի զանազան մասերում՝ իշխանութեան տէրը, սուբյեկտը։ Մաղխազը՝ Խորխոռունի իշխանների տոհմական տիտղոսն էր, նշանակում էր ընդհանրապէս իշխան, թագաւոր տէր և ծագում էր ասորեստանեան Մալխազ արաբական Մելիք բառից։ Նրան համապատասխանող իշխանութեան տարրական որպէս փոքր միաւոր կազմում էր Աղխ, Հախլ բառից, որ միեւնոյն ծագումն ունի վրացական Սախլի բառի հետ և նշանակում է տուն։ Նոյն արմատից է նաև ազախնը՝ որ ըսկըզբնապէս նշանակում էր ախլին պատկանող, և որ յետագայում ստացաւ սպասուհի իմաստը։

Միւս տերմինը՝ ասպետն է, որ նոյնպէս տոհմական տիտղոս է և պատկանում է Բագրատունեաց իշխաններին։ Այս բառը մեկնաբանւում է զանազան ձեւերով և մենք կարծում ենք անհիմն։ Իրօք նա վեր է ածւում as և pet մասնիկների. երկրորդ մասը նշանակում է գլուխ. ամբողջ դժուարութիւնը առաջին վանկի մէջ է։ Հիմք ունինք բաղդատելու այն՝ մէկ ուրիշ, ոչ պակաս անհրաժեշտ բառի հետ նախարարական միջավայրից վերցրած՝ սեպուհի հետ։ Սեպուհ բառի ստուգաբանութիւնը արդէն լուծուած է։ Սեպուհ, աւելի հնագոյն ձեւով սեպուհր՝ իրանական Վիթապուտրա բառն է, ուր պութրա նշանակում է որդի, իսկ վիթ ինչպէս մենք վերեւ տեսանք տոհմական կազմակերպութեան օղակներից մէկն է, ուստի և սե ն վիթի աղաւաղուած ձեւն է։

Սեպուհ բառը մնացել է Հայոց գրականութեան մէջ նաև Ասպուրակ ձեւով, որ Փաւստոսի մօտ նշանաւոր եպիսկոպոսի անունն էր։ Նախաչեշտային ու-ի գոյութիւնը ապացուցում է, որ ու-ն ընկած է երկու բաղաձայններից առաջ այսինքն բառը հնչւում էր որպէս սապուհրակ: Նախ ածանցի վերջումով մնում է սպուհր, որ չի կարելի չբաղդատել Սեպուհի հետ, իր հնագոյն Սեպուհր ձեւով։ Սկզբնական սա և սէ վանկերի նոյնութիւնը՝ դրա մասին ոչ մէկ կասկած չեն թողնում։

Հետաքրքիրն այն է, որ Ասպուրակը՝ հանդիպում ենք նաև վ սկզբնատառով՝ Վասպուրակ և ընդհակառակն՝ Վասպուրական շրջանի անունը, որ նոյն բառն է վերաբերում ոչ հայկական յիշատակարանների մէջ գրւում է առանց առաջին հնչիւնի՝ Ասպուրական։ Վասպուր ձեւի գոյութիւնը Ասպուրի հետ միասին ակնբախօրէն ցոյց է տալիս նրանց ծագումը Վիթապութրա բառից։ Ի դէպ՝ շնորհիւ հնչիւնաբանական մէկ երեւոյթի, ըստ որի սկզբնական վ-ն օտար էր Հայոց հնչիւնախօսութեան՝ իրանական Վիթապութրա բառը պիտի փոխանցուէր Հայերին Իտապուհր, ատապուհր ձեւով, կամ անչեշտ ա-ի անկումով՝ Իտպուհր, տպուհր ձեւով։

Երեւան հանելով Ասպուհրի և Սեպուհրի կամ ասի և սէփ նոյնութիւնը՝ մեզ հետաքրքրող ասպետ բառի ստուգաբանութիւնը պարզւում է։ Ասպետը ծագում է Վիթապատի բառից, ինչպէս ասպուրը վիթապուտրա բառից, ուրիշ խօսքով ասպետը նշանակում է Վիթի կամ տոհմի պետ, իսկ սեպուհ տոհմի որդի։ Վանմ, վամ. լրիւ վանամ բառից՝ անկասկած իրանական վիթու-մա բառն է և վերաբերում է վիթ-ին այնպէս, ինչպէս zantuma-ն zantu-ին։ Նրա նախնական նշանակութիւնն է տոհմի անդամ, տոհմային. յետագայում ստանում է տոհմիկ, բարձր՝ իմաստը։

Նախորդ տերմինի, բառի հետ ընութակից է և մամակը։ Պատմագիտական գրականութեան մէջ մենք հանդիպում ենք այն որպէս Մամիկոնեան տան յատուկ անուն։ Սկզբնապէս նա տոհմական տիտղոս էր իշխանական տոհմերից մէկի համար, իսկ յետոյ դարձաւ ընտանեկան անուն մեր քննած նախորդ երկու տիտղոսների նման — մամակ կամ մամիկ՝ Մամիկոնեան, ինչպէս ասպետից Ասպետունի, կամ Մաղխազից՝ Մաղխազունի։ Մենք կարծում ենք, որ մամակը— ոչ այլ ինչ է. եթէ ոչ իբերական մամա-հայր բառի հայացած ձեւը։ Այս բառն էլ սկիզբ է առել տոհմային կարգի մէջ և նշանակում է տոհմի հայր, տոհմապետ և նոյնանիշ է վրացական մամա սախլիսի հետ։

Հետաքրքիրն այն է, որ ըստ Հայոց աւանդութեան Մամիկոնեանները ծագել են Մամիկից։ Ենթադրեալ ստուգաբանութիւնը արդարանում է նաեւ աւանդութեամբ և նոր լոյս է սփռում նշանաւոր իշխանական տան ծագման վրայ։ Հայոց աւանդութիւնը Մամիկոնեաններին ծագած է համարում Ճեներից։ Ըստ Փաւստոսի իրենք Մամիկոնեանները հպարտութեամբ ասում են իրենց մասին, որ իրենք սերուած են «Ճենաց աշխարհի թագաւորներից»։ Փաւստոսից չի կարելի իմանալ թէ ինչ է նշանակում Ճենաց աշխարհ։ Անանունի հաղորդածներից արդէն նշմարում ենք, որ այդ անուան տակ պիտի հասկանալ Պարսկաստանից, Բալխից արեւելք գտնուող երկիրներից մէկը, այսինքն Չինաստանը։

Մամիկոնեանների ենթադրեալ նախնիքները Մամիկը և Կոնակը ըստ աւանդութեան Չինաստանի թագաւորից յետոյ՝ առաջնութիւնը վայելող՝ նշանաւոր իշխանի որդիներն էին։ Իշխանի մահից յետոյ թագաւորը ամուսնանում է նրա այրիի հետ և նրանից ունենում է մէկ որդի գահաժառանգ Չենբակուրը։ Մօր գծով վերջինիս, եղբայրները՝ Մամիկը և Կոնակը դաւադրութիւն կազմակերպեցին նրա դէմ՝ գահից մեկուսացնելու միտումով։ Մատնութիւնը չիրականացաւ և նրանք փախան Բալխ, Արշակունի թագաւորի մօտ։ Չենբակուրը պահանջեց փախստականների յանձնումն, սակայն Արշակունին մերժեց, խոստանալով որ նրանց կ'ուղարկէ դէպի արեւմուտք, աշխարհի ծայրը, ուր արեւը մայր կը մտնի։ Եւ իրօք փրկելու համար նրանց՝ Չենբակուրի հետապնդումներից՝ թագաւորը ուղարկեց նրանց Հայաստան՝ իրեն ազգակից Արշակունիների մօտ։

Պատմուածքի վերջին մասը նպատակ ունի բացատրելու թէ ինչպէս Մամիկոնեանները Չինաստանից ընկան իրենց տոհմական կալուածքը՝ Տայք։ Դուրս է գալիս, որ թագաւորը դիտմամբ նրանց բնակեցրեց աշխարհի ծայրում։ Պատմուածքի մէջ թիւրիմացութիւն կայ Ճենաց աշխարհի մեկնաբանութեան շուրջ։ Նախնական աւանդութեանց մէջ Ճենաց անուան տակ հասկանում էին ոչ թէ հեռաւոր Չինացիներին, այլ հարեւան Ճաներին, որոնք ապրում էին ոչ հեռու Մամիկոնեանների տոհմական կալուածքից՝ Տայքից։ Ցաները՝ Հայերի մօտ՝ կոչւում էին Ճան, Ճանիք՝ Խորենացու մօտ, այժմ Ջանիք։ Մամիկոնեանների տոհմական յատկանիշը՝ դիւրագրգիռ խառնուածք և գերազանց արիութիւնը՝ նրանց աւելի շատ ազգակից են դարձնում՝ դեռ ևս վեցերորդ դարում ռազմունակութեամբ աչքի ընկնող Ցաների հետ, քան մեղմաբարոյ Չինացիներին։ Այս լուսաբանութեամբ Մամիկոնեանների մասին եղած աւանդութիւնը ստանում է պատմական հիմք։

Զուգընթացաբար ասենք նաև, որ Վրաստանի Օրբելեան իշխանները իրենց նախնիքներին որոնում էին Ճենաց աշխարհում, նրանց մօտ էլ երեւում էին Չենբակուրը։ Զուգադիպութիւնը պատահական չէ, ըստ երեւոյթին մենք այստեղ գործ ունենք Մամիկոնեանների տոհմական աւանդութեանց վերապրուկի հետ և այդ կարելի է մեկնաբանել նրանով, որ Օրբէլեանները իրենց համարում էին Մամիկոնեաններից սերուած։ Զարմանալի ոչինչ կայ այստեղ։ Ինչպէս Բագրատունիները Սպերից առաջ շարժուեցին դէպի Վրաստան, Մամիկոնեաններն էլ կարող էին անցնել Վրաստան հարեւան Տայքից։ Օրբէլեանների թշնամական վերաբերումը Վրաց Բագրատունիների հանդէպ իսկ և իսկ Մամիկոնեանների տոհմական թշնամութեան արտայայտութիւնն է հայ Բագրատունիների հանդէպ։

Մեր քննութեան ենթակայ տերմիններից վերջինը տէր-ն է, որ ձեւաւորուած է տի և այր բառերից։ Բարդութեան երկրորդ մասը Հայոց լեզուի մէջ լաւ ծանօթ մարդ, տղամարդ նշանակող բառն է։ Տի-այր բառի նմանութեամբ կազմուել է տի-կին բառը։ Տի-ի իմաստը գրեթէ անվերծանելի է, նոյնիսկ շատ էլ պարզ չէ թէ ինչ յարաբերութեան մէջ է այն այր և կին բառերի հետ՝ պայմանաւորում նրանց իմաստը, թէ ընդհակառակն ինքն է պայմանաւորւում նրանցով։

Ըստ կազմութեան այս բառերը յիշեցնում են վրացական mama-upali և deda-upali բառերը. առաջին բառը յայտնի է մեզ կծկըուած, սղմուած ձեւով՝ mepe ma(m)pa(li)։ Ինչպէս հայկական տէրը, այնպէս էլ վրացական upali բառերը բովանդակութեամբ և ըստուգաբանութեամբ համապատասխանում են սեմական Բահաղ-տէր, իշխան բառին: Այս անունով էին կոչում սեմականները իրենց տոհմական՝ հովանաւոր աստուածներին։ Սեմականների մօտ երկնային տէր ցոյց տուող բառը՝ Վրացիների մօտ փոխանցուած է երկրային տիրոջը՝ թագաւորին։ Ըստ երեւոյթին նման մէկ բան էլ պատահել է հայկական տի բառի հետ։ Ըստ հնչիւնաբանական կազմի և նշանակութեան հայկական տի-ն կարելի է կապակցել հնդեւրոպական արմատական di բառին, որ յայտնի է շատ լեզուների և բազմազան կազմութեամբ։ Նրանից առաջ եկած բառերը երկու արմատների կարելի է վերածել՝ di և div, երկուսն էլ պարունակում են լոյս-օրուայ և երկինք-աստուծոյ գաղափարը։ Հայոց լեզուի մէջ պահուել է երկուսի էլ հիմքը, տիւ-օր և տիք՝ հասակ՝ իրօք օրերի իմաստով։ Di արմատի հետ կապւում է մեզ հետաքրքրող տ-ին։ Սկիզբը՝ տին, ինչպէս և լատինական deus բառը նշանակելիս է եղել բարձրագոյն արարած, Աստուած, յետոյ միայն գործ է ածուել թագաւոր և երկրային իշխողը ցոյց տալու համար, այսինքն նա էլ նոյն բախտին արժանացաւ, ինչ որ վրացական upali-ն։ Որպէսզի տարբերանար տի-ի վերջին նշանակութիւնը սկսեցին նրան կցել այր բառը=տի-այր=տէր։ Հետաքրքիրն այն է, որ մտքի այս գործողութիւնը կրկնուեց մէկ անգամ էլ յետագային երբ տի-այր բառը բոլորովին դուրս արեց տի բառին և սկսեց ցոյց տալ հաւասարապէս և երկնային և երկրային տիրոջը, ապա նորէն երեւաց նոյն այր բառը՝ երկու գաղափարները տարբերելու համար և կազմուեց տի-այր բառը։ Գրականութեան մէջ նա յայտնի է որպէս յատուկ անուն, բայց անկասկած է, որ նախօրօք նա գործ էր ածուել ընդհանրապէս իշխողի, տիրոջ իմաստով։

Նախարարական միջավայրից առնուած այս տերմինները մեր լուսաբանութեամբ տոհմական կարգի հնագոյն շրջանի ժառանգութիւններն են։ Նրանք պատկանում են այն տեղական որակումների թուին, որոնք կրում էին կոմարխները։ Ազգագրական պայմանների պէսպէսութեան հետեւանքով կոմարխները պէտք է որ զանազան անուններ ունենային։ Չորս գերակշռող հոսանքների համաձայն, որոնց կը պատկանի Հայաստանի ազգագրութիւնը en gros, պէտք է վերայիշեալ չորս տերմինների, բառերը՝ համարել ամենէն տարածուած անուանումները։ Արմէնական տարրի գերակշիռ ազդեցութեան շրջանում տոհմապետը կոչւում էր Մայխազ, Ատրպատականի կամ Իրանեան սահմանամերձ շրջանում գործածական էր իրանական տերմինը՝ սապես, սեպուհ, վսեմ. իբերական շրջերում ամենէն գործածականն էր մամակ. վերջապէս փռիւգիական բնակչութիւն ունեցող վայրերում տէր-տուն ևայլն։ Կրկնում ենք սրանով չէր սպառւում էթնիկ բազմազանութիւնը ցուցահանող տերմինները։ Բայց այն, որ մեր նշած շրջանները հեռու էին միատարր բնակչութիւն ունենալուց՝ նրանցից իւրաքանչիւրին յատուկ էր որոշ պէսպէսութիւն որ պիտի արտայայտուէր և տերմինների մէջ, կային նաև ուրիշ ազգագրական խմբակցութիւններ, այսպէս օրինակ գոյութիւն ունէր մէկ ամբողջ ժողովուրդ մարդեր, որոնց պետը կոչւում է մարդ-պետ ևայլն։

Տոհմային յարաբերութիւնների ժամանակաշրջանը Հայաստանում փակւում է Զարիադէսի և Արտաշէսի ժամանակ։ Այս ժամանակին է վերաբերում և տոհմային կարգի քայքայման սկիզբը և ընկերային նոր յարաբերութիւնների սաղմնաւորումը։ Այդ յեղաշրջման էութիւնը արտայայտւում էր ընկերային զանգուածի շերտաւորման և դասայնութեան հիմքերի ծագման մէջ։ Տոհմերի պետերը և առաջնորդները աստիճանաբար դառնում են նշանաւոր մարդիկ, տիրողներ և այդ ձևով հիմք են դնում ապագայ իշխանական տներին։ Այս փոփոխութիւնները տեղի են ունենում այն մոմենտին, երբ տոհմապետութիւնը դառնում է ժառանգական։ Սրանով նրա ժառանգները բաժանւում են և յատուկ տեղ գրաւում հասարակութեան միւս անդամների շարքում։ Ժառանգութեան իրաւունքը իր յետևից բերում է սեփականութեան իրաւունք այն բոլորի վրայ, ինչ որ ենթակայ էր տոհմապետի իրաւասութեան։ Այսպիսով՝ հասարակութիւնը՝ նախապէս միապաղաղ և նոյնիրաւ՝ բաժանւում է երկու՝ հասարակականօրէն անհաւասար մասերի։ Ոմանք՝ և քչերը՝ տոհմապետից ծագած՝ իշխում են, իսկ մնացած մեծամասնութիւնը՝ ենթարկւում է։ Իշխան դարձած տոհմապետը դիւրութեամբ իր իշխանութիւնը տարածում է նաև ուրիշ տոհմերի վրայ և աստիճանաբար իր տիրապետութեան շրջանն ընդարձակելով նա հասնում է թագաւորի աստիճանին։ Այս գործողութիւնը լաւապէս արտայայտուած է Իբէրիայի ընկերային շերտաւորման օրինակով։ Ըստ Ստրաբոնի այնտեղ կային չորս տոհմեր կամ մարդկանց աստիճանաւորումներ, խմբակցութիւններ։ Առաջինից դուրս էին գալիս թագաւորները, երկրորդից քրմերը, երրորդը կազմուած էր երկրագործութեամբ և զինուորական գործերով զբաղուողներից, իսկ չորրորդը՝ կազմում էին հասարակ մարդիկ, թագաւորի ստրուկները, որոնք հայթայթում էին կենսամթերքներ: Նըրանց ունեցուածքը ընդհանուր էր, տոհմի սեփականութիւն և ամեն տոհմ կառավարում էր տոհմի աւագագոյն անդամը։

Թագաւորի և քրմական տոհմերը՝ այսպէս ասած արհեստական տոհմեր են՝ ծագած այն մարդու ժառանգներից, որ որպէս տոհմապետ իւրացրել էր այդ կոչումի ժառանգական իրաւունքը։ Նա այն տոհմից էր առաջացել, որի մէջ սկզբնապէս մտնում էին՝ յետագային՝ սաըրկացած մարդիկ։ Ուրիշ խօսքով թագաւորը իր ստրուկների հետ կազմում էր մէկ ամբողջական տոհմային միութիւն, որի գլուխը նա կանգնած էր որպէս պետ։ Այդ պետի ժառանգաբար դառնալով՝ նրա ընտանիքը՝ սկսում է բաժանուել տոհմից և որքան նա բարձրանում է, նոյնքան էլ իջնում է տոհմի մնացած մասը։ Վերջապէս նա հասնում է թագաւորի աստիճանին՝ իր տոհմի ստրկացման գնով։ Յետագային նա իրեն ենթարկում է նաև ուրիշ տոհմերի, Իբէրիայի մնացած բընակչութիւնը, որ կազմակերպուած էր ըստ տոհմերի և զբաղւում էր մասամբ երկրագործութեամբ, մասամբ էլ ռազմական գործերով։

Կարելի էր ենթադրել, որ քրմական տոհմն էլ նման ծագում ունի թագաւորականի հետ, այսինքն առաջացել է տոհմի քայքայման հետևանքով։ Սակայն այդ պարագային նրանք էլ ստրուկներ պիտի ունենային․ ստրուկներ, որ չկայ։ Ստրաբոնը պնդում է, որ արքայական տոհմի անդամներից մէկը և ամենէն մեծը ժառանգում է գահը, իսկ նրանցից յետոյ եկողին յանձնւում է արդարադատութիւնը և զօրքերի հրամանատարութիւնը։ Այս ցուցմունքի մէջ պահուած է այն ուղին որով առաջացել է քրմական դասը։ Թագաւորը բարձրանալով տոհմապետութիւնից՝ սկիզբը կեդրոնացրել էր իր ձեռքին բոլոր գործառնութիւնները, նա միաժամանակ և իշխող էր զօրահրամանատար, դատաւոր, քրմապետ և ընդհանրապէս ընդհանուր ղեկավար։ Հասնում է մի ժամանակ, երբ մէկ մարդու համար դժուար էր այս բոլոր պարտականութիւնները ի կատար ածել և նըրան սկսում է օգնել թագաւորին մօտ կանգնած մարդկանցից մէկը՝ նա, որին պատկանում է գահակալական իրաւունքը՝ թագաւորի մահից յետոյ։[1] Յետոյ նրա վրայ է բարդւում վարչութեան որոշ մասերը՝ կրօնական արարողութիւնները և միջազգային գործերը։ Ըստ արտաքին երևոյթի երկու՝ միանգամայն տարբեր գործառնութեան համախմբումը մեկնաբանելի է նրանով, որ կրօնական աշխարհայեցողութիւնը՝ քրմերի բարձր հեղինակութեան հետ և մի քանի պաշտամունքի ընդհանուր լինելը՝ այն հիմքն է հանդիսանում, որի շուրջը կարող էին հաւաքուել զանազան մշակոյթի ժողովուրդները։ Պարագաների բերումով՝ քրմութիւնն էլ դառնում է ժառանգական տուեալ անձի ընտանիքի մէջ։ Այն ժամանակ նոյն թագաւորից յետոյ՝ երկրորդ մարդուն՝ յանձնւում է գործադրութեան ուրիշ ճիւղ՝ դատավարութիւնը և զինուորական հրամանատարութիւնը՝ ինչպէս մենք տեսնում ենք Իբերիայում։ Անկասկած յետագայում գործադրութեան այս ճիւղերն էլ քրմականի նման դառնալու են՝ տւեալ տոհմի առանձնաշնորհումն ժառանգութեան կարգով։ Եւ իրօք Արշակունիների օրով այդպէս էլ եղաւ։

---

[1] Ստրաբոնը Իբէրների մօտ զանազանում է երկու բնակչութիւն. հովիտների բնակիչները զբաղւում էին աւելի շատ երկրագործութեամբ, խաղաղ կեանք էին վարում, զգեստաւորւում էին Հայերի եւ Մետացիների նման։ Իսկ նրանք, ովքեր բնակւում էին լեռնային մասերում՝ մեծամասնութիւն էին կազմում եւ ռազմատենչ էին, իրենց կենցաղով նրանք նման էին Սկիւթացիներին, թէպէտ եւ օտար չէին երկրագործութեան։ Պատերազմի ժամանակ նրանք մեծ բանակ էին կազմում։

Այսպիսով Իբերիայի բնակչութեան չորս խմբաւորումները ոչ միայն հասարակականօրէն, այլեւ ծագումով տարբեր մեծութիւններ են։ Առաջինը և վերջինը այսինքն թագաւորի և ստրուկների տոհմերը միեւնոյն միաւորից են ծագում, քրմական տոհմը՝ սկիզբ է առնում արքայականից, Այս երկու տոհմերը առաջացել են ընտանիքից և աւելի շատ դասեր են, քան տոհմեր 1)։

Նկարագրած ընկերային այս գործողութիւնը տեղի է ունեցել նաեւ հարեւան Աղւանքում։ Եւ որովհետեւ վերջինս կազմուած էր տարբեր լեզուներով խօսող 26 ժողովուրդներից, ուստի այս գործողութիւնը տեղի ունեցաւ 26 վայրերում։ Սկիզբը՝ նրանցից իւրաքանչիւրն ունէր իր թագաւորը, յետագայում նրանք բոլորը միացան մէկ թագաւորի իշխանութեան տակ։ Այս ժողովուրդների մէջ թագաւորի իշխանութիւնը սկզբնաւորուեց այն ձեւով, ինչ ձեւով Իբերների մօտ։ Նրանց թագաւորները՝ վեհապետութեան հասած նախկին տոհմապետներն են։ Լեռնցիների յարձակումների դէմ միասնական ուժերով պաշտպանուելու անհրաժեշտութիւնը՝ հարկադրեց նրանց միանալու և կազմելու մէկ քաղաքական մարմին։ Աղւանների մօտ էլ ինչպէս Իբերների՝ քրմապետութեան պաշտօնը վարում էր թագաւորից յետոյ եկող ամենից յարգելի մարդը. նա կառավարում էր ընդարձակ և խիտ բնակչութիւն ունեցող քրմական հողերը և տաճարական ստրուկներին։ Անկասկած դատավարութիւնը և զինուորական հրամանատարութիւնը այնպէս էր դրուած՝ ինչպէս Իբերիայում, այսինքն նրանք վստահացւում էին թագաւորից յետոյ՝ եկող երկրորդ անձին։ Իբերիայում բարձրագոյն իշխանութիւնը յենւում էր տոհմերի կամ նրանց պետերի դաշնակցութեան վերայ իսկ Աղւանքում մանր արքաների կամ իշխանների դաշնակցութեան վերայ։ Ուրիշ խօսքով էթնիկ պայմանների հետեւանքով սկիզբն ստեղծուեց 26 մանր թագաւորութիւններ, իսկ յետոյ նրանք միացան իրենց հերթին։

Էթնիկ տեսակէտից Հայաստանը պակաս բազմազան չէր քան Աղւանքը և եթէ դատելու լինենք նմանութեան օրէնքով ապա, հասարակական հոլովոյթը այստեղ էլ ընթանալու էր այնպէս, ինչպէս Աղւանքում, այսինքն երկրի միութեան առաջին հետեւանքները պիտի արտայայտուէին ուժերի կեդրոնացման մէջ ըստ ազգագրական բազմազանութեան։ Համախմբումը պէտք էր սպասել որ տեղի ունենայ ամենէն կարեւոր էթնիկական շերտերում՝ մաղխազների, ասպետների, մամակների, տէրերի և այլ խմբակցութեանց շուրջը։ Այս ենթադրութիւնը արդարանում է այն սակաւաթիւ տւեալների քննութեամբ, որ մեզ մատակարարում է փաստական պատմութիւնը։

Տոհմային յարաբերութեանց քայքայումը, որին ընթացակցում է դասայնութեան առաջ գալը՝ յանձինս իշխանաւորների, յետագայ զօրաւոր իշխանների՝ աւարտւում է, վերջ է ստանում Տիգրան Մեծի փոթորկալից ժամանակաշրջանում։ Պատերազմական ժամանակի ճգնաժամը ստեղծում է նպաստաւոր մթնոլորտ տոհմական յարաբերութեանց դասայինով փոխելու համար։ Տիգրանի ժամանակի Հայաստանի քաղաքական հզօրութիւնը, ընդարձակ նուաճումները Կապադովկիայի Մաժակ քաղաքից մինչեւ Մարական էկբատանը և Իբերիայից ու Աղւանքից մինչեւ Արաբիան և Պաղեստինը՝ ամենից առաջ ցուցանիշ են երկրի ներսում կատարուած միութեան։ Ինչպէս դասաւորուեցին հասարակական խմբաւորումները և ինչպիսի տիրիտորեալ, երկրային ու հասարակական ձեւեր ընդունեցին նրանք. այդ մասին մենք չունինք ուղղակի տւեալներ պատմաբանների մօտ, որոնք գոյներ չեն խնայում արտաքին դէպքեր նկարագրելու համար։ Տիգրանի ժամանակ՝ Հայերի ունեցած զինուորական ուժերի մասին եղած ընդհանուր թուերի մէջ, բարեբախտաբար՝ մեր նպատակի համար շատ կարեւոր մի քանի դրական ցուցմունքներ էլ ենք նկատում։

Պատմաբանների մօտ Հայոց թագաւորը ներկայանում է շրջապատուած բազմաթիւ աջակից թագաւորներով։ Տիգրանի բանակը իր մէջ առնում էր բացի Հայերից և Գորդեններից նաեւ Մարերին և Ադիաբէնցիներին իրենց սեփական թագաւորների հրամանատարու-

---

1) Դատաւորի եւ զինուորական հրամանատարի համատեղելը մէկ անձի մէջ, ցոյց է տալիս որ դատաւորը կարիք ունէր բանի, հարկադրող ուժի։ Ասորեստանցիների մօտ էլ գողութեան վերաբերող վէճերը քննւում էին զինուորական հաւաքոյթի մէջ։ Այս պարագան բնորոշիչ է տոհմական կարգի քայքայման շրջանի համար։ Որքան ամուր են բնական-իրաւական յարաբերութեանց հիմքերը՝ հասարակութիւնը պահում է իր հաւասարակշռութիւնը եւ դատարանի կարիք չունի։ Ստրաբոնի բարեկամ յոյն փիլիսոփաներից մէկը արաբ-սաբայիների մայրաքաղաքում եղած ժամանակ շատ զարմացաւ այն բանի համար, որ «*օտարները միշտ դատի մէջ էին իրարու եւ բնիկների հետ. իսկ բնիկները չէին գանգատում իրար վրայ եւ ապրում էին միասին, կատարեալ խաղաղութեամբ*»։ Ըստ Ստրաբոնի նկարագրութեան Սաբայիները գտնւում էին զարգացման նախնական աստիճանի վերայ։

թեամբ, ինչպէս և Գարսից ծոցի մօտ ապրող արաբական ցեղերին, Կասպից ծովի ափերին ապրող բազմաթիւ Աղուաններին, հարեւան Իբերներին և Արաքսի ափերին թափառող ազատ վաչկատուններին։ «Շատ թագաւորներ ծառայում էին Տիգրանին, պատմում է Պլուտարքոսը. իսկ նրանցից չորսը մշտապէս գտնւում էին նրա մօտ որպէս ուղեկիցներ կամ թիկնապահներ։ Երբ նա ձի էր նստում, նրանք վազում էին յետեւից կարճ բաճկոնակներ հագած, իսկ երբ նա նըստած լինէր գահին և գործով զբաղուած՝ նրանք կանգնում էին թագաւորի շուրջը իրարու ձեռքերը բռնած»։

Արքայի մեծազդորդ անուան տակ այստեղ ակնարկւում է Հայոց իշխաններին, ըստ որում Տիգրանի մօտ գտնուող բդեշխները այն սահմանապահ իշխաններն էին, որոնք Արշակունեաց պալատում համարւում էին առաջնակարգը՝ ըստ գահի և ըստ բարձի։ Լուկուլլոսին շողոքորթ ներբողականներ հիւսողները, որոնք իրենց տեղեկութիւնները քաղում էին նրա իսկ սնապարծ զեկուցումներից, չեն քաշւում չափազանցութիւններից իրենց հերոսին փառաւորելու համար, որ իբր թէ կործանման մատնեց այդպիսի ահեղ թագաւորին։ Տուեալ դէպքում Հայոց իշխաններին բազիլէսի՝ աստիճանին բարձրացնելը այդպիսի պատճառներ ունէր միայն։

Բացի Բդեշխներից հայկական իշխաններից անունով յիշւում են մի քանի դէմքեր։ Մէկը նրանցից Բագարատն է։ Երբ Տիգրանը Անտիոքին յաղթելով գրաւում է Սիրիան, Կիլիկիան և մինչեւ Եգիպտոս տարածուող երկիրները, ապա նա Բագարատին նշանակում է նոր գըրաւած երկիրների ստրատէգ։ Վերջինս կառավարեց այդ երկիրները տասնեչորս տարի, մինչեւ 70 թիւը՝ Լուկուլլոսի արշաւանքը։ Այն ժամանակ նա հարկադրուած էր Տիգրանին օգնութեան շտապելու։ Սիւրիան նորից անցաւ Սելեւկիաններին։

Յիշւում է նաև Միթրոբարզանը եւ Մանկայը։ Առաջինը երկու հազար հեծեալներով դուրս եկաւ Լուկուլլոսի հանդէպ, երբ նա անցնում էր Եփրատը և մտնում Ծոփք, իսկ Մանկային Տիգրանը վստահել էր Տիգրանակերտ մայրաքաղաքի պաշտպանութիւնը։ Միթրոբարզանը կռուի բռնուեց Լուկուլլոսի հետ և փախուստի դիմեց. իսկ Լուկուլլոսի զորավարներից մէկը՝ Սեկստիլին՝ պաշարեց Տիգրանակերտը և փակեց այնտեղ Մանկային։ Ըստ մէկ ուրիշ՝ խիստ գունազեղուած պատմուածքի՝ Միթրոբարզանը Տիգրանի մօտիկ մարդկանցից մէկն էր։ Եւ որովհետեւ ոչ ոք չէր յանդգնում թագաւորին յայտնելու Լուկուլլոսի արշաւանքի մասին՝ նա առաջինն եղաւ Տիգրանին ճշմարտութիւնը պարզողը։ Այսպիսի յանդգնութեան համար Տիգրանը հրամայեց նրան շարժուիլ թշնամու դէմ, բերել իրեն նրա՝ հրամանատարին ողջ, իսկ մնացածներին ոչնչացնել։ Իսկ Լուկուլլոսը ուղարկեց Միթրոբարզանի դէմ Սեկստիլիի հրամանատարութեամբ մէկ բանակ։ Այս կռուի մէջ ընկաւ Միթրոբարզանը հերոսական մահով։

Վերջապէս յայտնի է նաև երրորդ դէմքն էլ՝ Գոռը։ Նա Տիգրանի հարազատ եղբայրն է համարւում և պաշտպանում է Մծբին քաղաքը Լուկուլլոսի դէմ, երբ վերջինս յետ մղուած Արտաշատի մօտից անցաւ Տաւրոսը և պաշարեց այս կարեւոր ռազմագիտական վայրը։

Բագադատես՝ սկզբնական, դեռեւս տրոհւորումի չենթարկուած հայկական Բագա-րատ բառաձեւն է՝ Բագադատա, աստծուց տրուած Աստուածատուր, յունական՝ Թեոդորոս։ Այս անունը կրող Տիգրանի ստրատէգը անկասկած հանդիսանում է Բագրատունիների նշանաւոր տոհմի նախայրը։ Նրա անձի մէջ հաշտւում են և արդարանում Հայոց երկու իրարու հակասող՝ աւանդութիւնները Բագրատունիների ծագման մասին։ Ըստ Անանունի Բագրատունիները ծագել են Հայկից՝ Հայերի նախահօրից։ Խորենացու մօտ պահուած միւս աւանդութիւնը նրանց վերագրում է հրէական ծագում։ Հենց ինքը՝ տոհմի անունը, յատկապէս նրանց տոհմական ասպետ՝ տիտղոսը որ մենք վերը լուսաբանեցինք, ցոյց է տալիս, որ այդ տոհմը սկիզբ է առել հայ-իրանական էթնիկ գետնի վրայ։ Նրա սկզբնական հայրենիքը ըստ երեւոյթին գտնւում էր, ինչպէս մենք դիտեցինք՝ Ասպատականի սահմանամերձ շրջանում։ Մենք ենթադրեցինք ստուգաբանական ազգակցութիւն Բագարատի և Բագրեւանդի մէջ։ Բագրատունիներին՝ հարաւից, հրեաներից բերող աւանդութիւնը, եթէ ի հարկ է նա Խորենացու, իրեն կռահումը չէ. ինչպէս ենթադրում են քննադատները, պէտք է համարել իւրայատուկ մէկ արտացոլումը այն փաստի, որ Տիգրանի ժամանակ Բագարատը փոխադրուեց հարաւ և նշանակուեց սեմականներով բնակեցուած մէկ երկրի՝ Սիրիայի կառավարիչ։ Ի միջի այլոց Անանունն էլ ճանաչում է Հայաստանի հարաւում, աւելի որոշ Անգեղում հաստատուած Բագրատունիներին և համարում է այն նրանց տոհմային կալուածը։ Այս աւանդութիւնը, յամենայն դէպս, կապուած է Բագարատի հարաւում լինելու հետ. Նոյնիսկ հնարաւոր է, որ Սիրիայի՝ Տիգրանից բաժանուելուց յետոյ էլ, Բագարատին յանձնուած լինէր Հայաստանի հարաւային սահմանների պաշտպանութիւնը և որ Անգեղ տան իշխանութիւնը կազմում էր մէկ ճիւղը Բագրատունիների։

Հռոմէական զօրաբանակին հանդիպող առաջին զօրավարի անունը լաւ կը լինի կարդալ Միթրոբարձանէս՝ փոխանակ Միթրոբուրձանէսի, որ հայկական Մեհրուժան է։ Այս անձը ոչ այլ ոք է, եթէ ոչ Ծոփքի իշխանը։ Եփրատը անցնելուց յետոյ, առաջին հայկական շրջանը, որին Հռոմէացիները սպառնում էին՝ Ծոփաց աշխարհն էր։ Այնտեղ խուժեցին Լուկուլլոսի լեգէոնները: Միթրոբարզանը կամ Մեհրուժանը որպէս այս շրջանի պետ, դուրս եկաւ պաշտպանելու իր երկիրը, բայց շնորհիւ իր ուժերի սակաւաթիւ լինելուն նահանջեց Հռոմէացիների ճնշման տակ: Այն բոլորը՝ ինչ որ պատմում է Պլուտարքոսը Միթրոբարզանի ելոյթի մասին անհեթեթութիւն է և տպաւորութիւն գործելու նպատակով արուած: Միթրոբարզանը պէտք է դուրս գար Լուկուլլոսի դէմ իր դիրքի հետեւանքով, որպէս երկրի իշխան և ոչ թէ նրա համար, որ Տիգրանը ուզում էր նրան պատժել, ինչպէս մեկնաբանում է պատմաբանը [1]: Կասկածից դուրս է, որ Միթրոբարզանը պատկանում է Արտաշէսի ժամանակակից Զարիադրէսի կամ Զարեհի՝ Ծոփքի թագաւորի՝ տոհմին: Այդ տոհմի մէջ Միթրոբարզան անունը շատ էր ընդունուած: Արտաշէսի հետապնդումներից ազատուելու համար Զարիադրէսի որդին փախչում է Կապադովկիայի թագաւոր Արիարատ Դ.ի մօտ և նրա օգնութեամբ վերագրաւում է հայրենական գահը նա էլ Միթրոբարզան անունն էր կրում: Տիգրանի ժամանակ Ծոփքի թագաւոր Արտանն էր նա սպանուեց Տիգրանի ձեռքով: Միհրդատը Արտանի մօտի մարդ էր, գուցէ նրա որդին կամ եղբայրը: Զրկուելով արքայական դիրքից և արժանիքներից՝ Զարիադրէս Արտանի ժառանգները իրենց ձեռքին պահեցին Ծոփաց աշխարհի ժառանգական իշխանութեան իրաւունքը:

Մեզ հետաքրքրող երրորդ անունը Մանկայոսը պէտք է կարդալ Մամկայոս կամ Մա(մա)կայոս, որ համապատասխանում է հայերէն Մամիկին: Շատ անհրաժեշտ է ձեռագիրների մէջ պրպտումներ, ճշդումներ կատարելը: Մեր հարցադրութեան արդարացման պարագային անհրաժեշտ կը լինի յետ տանել քաջարի Մամիկոնեանների ծագումը մինչեւ Տիգրան Մեծի դարաշրջանը:

Վերոյիշեալ անձերը՝ այսինքն Բագարատը, Միթրոբարզանը և Մանկայը, չխօսելով արդէն Գոռի մասին, որոնց Տիգրանը առաջնակարգ դիրքերի հասցրեց՝ ի նկատի ունենալով գալիք պատերազմները Հռոմի հետ, այն թագաւորների թուին էին պատկանում, որոնք գտնւում էին Տիգրանի արքունիքում: Մեր հիմնական միտքը, որ Տիգրանի դարաշրջանում արդէն հանդէս են գալիս դասային իշխանութիւնները, ըստ էութեան ապացուցուած է՝ անկախ այն հանգամանքից, թէ որքան հիմնաւոր են կամ ընդունելի են մեր եզրակացութիւնները վերեւ յիշուած անձերի մասին: Լուրջ հիմք չկայ կասկածելու, որ այստեղ յիշուած գործիչները հանդիսանում են նախահայրերը յետագայում մեզ լաւ ծանօթ իշխանական տների՝ Բագրատունիների, Մամիկոնեանների և Ծոփաց իշխանների: Վերջինից ծագել են Արծրունիները, ինչպէս որ կարելի է դատել նրանց տոհմի մէջ ընդունուած անուններից(*)։

---

[1] Առաջինը, որ Տիգրանին լուր բերեց Լուկուլլոսի արշաւանքի մասին՝ ըստ Պլուտարքոսի՝ գլխատուեց, իսկ ըստ Ապպիանի՝ կախուեց: Դրանցից յետոյ, Պլուտարքոսի հաւաստիացումների համաձայն ոչ ոք չէր համարձակւում ակնարկել Լուկուլլոսի մասին: Շողոքորթներ կային, որոնք օրօրում էին նրան կեղծուպատիր խօսքերով, թէ Լուկուլլոսը մեծ զօրավար կը համարուի, եթէ յանդգնի սպասելու եւ հանդիպելու Տիգրանին Եփեսոսի մօտերքում եւ չփախչի առանց յետ նայելու՝ նրա անթիւ բանակները տեսնելիս: Միթրոբարզանը միայն յանդգնեց բաց անելու թագաւորի աչքերը՝ սպառնացող վտանգի հանդէպ, բայց փոխանակ վարձատրուելու հրաման ստացաւ գնալու Լուկուլլոսի դէմ եւ նրան ողջ ողջ բերելու, միւսներին էլ ճզմելու: Ըստ Ապպիանի պատմուածքին՝ թագաւորի յանձնարարութիւնը, շատ համեստ, կայանում էր նրանում որպէսզի *Լուկուլլու էպիսքէյն տու դրոմոն*: Նա ունէր ընդամենը 2000 հեծեալ եւ Լուկուլլոսի հետ եղած ընդհարումը վերջացաւ Միթրոբարզանի փախուստով: Իսկ Պլուտարքոս հասցնում է նրա ուժերը մինչեւ 3000 հեծեալի եւ մեծաքանակ հետեւակի եւ նրանց կռուի մէջ է դնում ոչ թէ Լուկուլլոսի, այլ նրա պատուիրակ Սեքստիլլի հետ, որի հետեւանքով հայկական զօրահրամանատարի մահն է լինում: Այս տարբերութիւնը մատնում է պատմաբանների կողմնակալ լինելը: Տիգրանի պատմութիւնը սպասում է դեռեւս իր առարկայօրէն հետազօտողին: Գիտունները որպէս ճշմարտութիւն են ընդունում այն բոլորը, ինչ որ հաղորդում են պատմագիրները, մոռանալով, որ վերջիններս իրենց աշխատանքները կազմել են այն չափից դուրս ընդարձակ զեկուցումների հիման վրայ, որոնք պարտիզանական ընդհարումները եւ աւազակային յարձակումները ցոյց էին տալիս որպէս կանոնաւոր ճակատամարտեր, ուր նա 20-հազարանոց մէկ բանակով պարտութեան է մատնում 260-300 հազարանոց Տիգրանի հրաշալիօրէն զինուած ուժերին, ըստ որում այն ժամանակ, երբ թշնամին կորցնում է 100 հազար սպանուածներ, իսկ 55-հազարանոց հեծելազօրից գրեթէ ոչ մէկը չի ազատւում, ինքը Լուկուլլոսը միայն հարիւր վիրաւոր է ունենում, իսկ հինգ, նոյնիսկ աւելի պակաս սպանուած: Լուկուլլոսի զեկուցումների պատմական արժէքի եւ բնոյթի մասին կարելի է դատել հետեւեալ դասական օրինակով: Արտաշատի մօտ մղած կռիւների մասին արած զեկուցման մէջ ի միջի այլոց գրում է «*որ երեք թագաւորներից՝ որ կռւում էին նրա դէմ, գրեթէ ամենից ամօթալի փախուստ տուողը եղաւ Միհրդատը, Պոնտոսի թագաւորը. նա նոյնիսկ չդիմացաւ հռոմէացիների աղաղակներին*»: Եւ այս ասւում է պատմութեան մէջ իր անվեհերութեամբ եզակի մեծ մարդու մասին, որի անունը միայն ահուսարսափի մէջ էր գցում Հռոմին եւ որի մասին իր անկումից յետոյ ասում էին. «*յանձինս միայն Միհրդատի մեռան հազարաւոր թշնամիներ*»:

Այսպիսով իրենց նշանակութեամբ երեք ամենէն կարեւոր իշխանական տները, գոյութիւն ունէին Տիգրանի ժամանակ և հաւանօրէն հանդէս եկան առաջին անգամ։ Այդ ժամանակ էլ անկասկած յայտնի էին Մաղխազների տոհմը, որ դատելով իր անունից, աւելի հին է քան վերոյիշեալ իշխանական տոհմերը։

Երկրի դասային շերտաւորման և ազնուականացման մէջ իսկ արտայայտւում է էթնիկ բազմազանութիւնը։

Որքան էլ համաձուլման ենթարկուէին բազմացեղ զանգուածները, բայց և այնպէս վերջին հաշուով կազմիչ մասերը պահեցին իրենց երանգաւորումները։ Խորխորունիների մօտ մախազների իշխանութիւնը, ասպետինը՝ Բագրատունիների մօտ. մամակինը՝ Մամիկոնեանների մօտ և վերջապէս տէրի բարձրագոյն իշխանութիւնը՝ ցուցահանում են համապատասխան էթնիկ տարրերի գերակշռութիւնը՝ ընդհանուր խմորումների ընթացքում։

Անմիջական հարեւան ժողովուրդներին կից նրանց բնավայրերը աւելի քիչ էին ենթակայ համաձուլման, շնորհիւ խառն բնակչութեան, որ միշտ թարմանում էր հարեւան ժողովուրդներից եկող նոր հոսանքներով. նրանք միշտ մի քիչ օտարանում էին կենդրոնական մասերից։ Սրա հետեւանքը եղաւ Հայաստանի եզրաշրջաններում չորս փոքր քաղաքական միութեանց առաջանալը, այսինքն՝ Գուգարաց, Աղձնեաց, Նոշիրականի և չորրորդ՝ անունով անյայտ Բդէշխութիւնների իշխանութիւնները։ Նրանց ծագումը բոլորովին սխալ է լուսաբանուած հայկական աւանդութեանց մէջ։ Բդէշխները իրօք պաշտպանում են Հայաստանի սահմանները, բայց ոչ Հայոց թագաւորի նշանակումով, այլ ըստ իրենց կացութեան, որպէս այդ շրջանների իշխան, տէր, բայց Հայոց թագաւորի գերիշխանութեան ենթակայ։

Ազգագրական բազմազանութիւնը չի սպառւում մասնանշուած տարրերով, խմբաւորումներով. կային նաև ուրիշ՝ երկրի բոլոր մասերում ցրուած՝ ցեղական միաւորներ, որոնցից յետագայում առաջացան իշխանական տներ։ Այս տոհմերից մի քանիսը ծագել էին հին ժամանակներից, միւսները երեւան եկան համեմատաբար աւելի ուշ։ Մեծ մասամբ վաչկատուն կենցաղով եկուոր տարրերը երկիր էին մուծում կենցաղային այնպիսի գծեր, որ նա վաղուց ապրել էր ու անցել։ Ուստի և կարելի էր նկատել իշխանութեանց հետ կողք-կողքի՝ այս կամ այն չափով անջատ խմբաւորումներ՝ որոնք դեռ ևս տոհմական կեանքով էին ապրում և տոհմապետի գլխաւորութեամբ։ Էթնիկ բազմազանութիւնը բնականաբար առաջ բերեց ընկերային կացութեան բազմազանութիւն։ Պատմական կեանքի նկատմամբ մեր ընդունած բաժանումը ճիշդ է և ընդունելի, ինչպէս ամեն մէկ դարաշրջանների բաժանում, միայն ընդհանուր հոլովոյթի տեսակէտից։ Մնացած տարրերը, որոնք դուրս են մնում ընդհանուր հոսանքից՝ միշտ էլ թոյլատրելի են։

Եկամուտ տարրերից, Տիգրանի օրով իսկ հանդէս են գալիս մի քանիսը, որոնք հիմք դրեցին շատ կարեւոր իշխանական տների։

Լուկուլլոսի Արտաշատ արշաւելու ժամանակ, ըստ Պլուտարքոսի՝ Տիգրանը նրանց առաջ հանեց ստուարաթիւ մէկ հեծելազօր, որի առաջապահներն էին մարդերի ձիաւոր նետաձիգները և Իբերների կապարճակիրները։ Նրանց վրայ էր դրել իր յոյսը Հայոց թագաւորը։ Մարդերը ծագել էին իրանական այն ցեղերից, որոնք ցրուած էին Զագրոսեան լեռնաշղթայի շուրջը, վաչկատուն կեանք էին վարում և զբաղւում էին աւազակութեամբ։

Երբ Քսենոֆոնը անցնում էր Տիգրիսի արեւելեան ճիւղի Կենդրիտոսի վրայով՝ նրա վրայ Հայերի հետ միացած յարձակուեցին մարդերը։ Սրանք անկասկած Հայոց մարդերն են՝ Իրանի սահմաններից Հայաստան գաղթած։ Երբ 68 թ. Քրիստոսէ առաջ Հռոմի զօրահրամանատար Լուկուլլոսը նահանջեց Արտաշատի մօտերքից Տարօնի ուղղութեամբ՝ նա անցաւ մարդերի երկրով։ Դեռ այդ ժամանակ էլ նրանք զբաղւում էին աւազակութեամբ, յարձակուեցին Հռոմէացիների վրայ՝ բայց դիմադրութեան հանդիպելով ապաստանեցին լեռները։ Սրանից երեւում է, որ այդ ժամանակ մարդերը գրաւել էին արդէն այն վայրերը, որոնց աւելի ուշ Հայերը կոչում էին Մարդաստան, կամ Մարդոց-էք, այսինքն մարդերի երկիր(*)։ Այս մարդերից է ծագում առել իշխանական այն տոհմը, որի ներկայացուցիչը

---

*) Մարկվարտի *Eransahr*-ի մէջ արտայայտած կարծիքը շատ ճշմարտանման է։ Ծոփքի իշխանների մէկ ճիւղի տեղաւորումը Աղբակում, վերաբերում է ոչ թէ Տիգրանի ժամանակին ինչպէս ենթադրում է նոյն գիտնականը, այլ ամենայն հաւանականութեամբ Արշակունիների դարին։ Արծրունի բառը ստուգաբանուած չէ դեռեւս։ Նրա մեկնութեան բազում փորձերից եւ ոչ մէկը չի կարելի համարել ընդունելի։

*) Բացի Մարդաստանից մարդերի անունն է կրում, մենք կարծում ենք, նաեւ *Մարդաղի* շրջանը։ Հաւանաբար Մարդաղիի մարդերը ծագում են այն մարդերից, որոնք խալդերի հետ միասին Կենտրիտոս գետի ափին յարձակուեցին Քսենոֆոնի վրայ։ Ըստ երեւոյթին՝ խալդերի հետ նրանք շարժուեցին դէպի հիւսիս եւ գրաւեցին այն վայրերը, որոնք յետոյ կոչուեցին Մարդաղի եւ Խալդի։ Մարդաստանի մէջ մարդերը երեւացին հաւանաբար աւելի ուշ եւ *Ի*րանի կողմերից։

կրում էր Մարդպետ անունը, այսինքն մարդերի պետ, գլուխ։ Հետագայում այդ անունը դարձաւ տոհմական տիտղոս մաղխազի և ասպետի նման և ինչպէս վերջիններիս կրողները կոչւում էին՝ Մաղխազունի և Ասպետունի, այսպէս էլ մարդպետների տոհմը և նրանց իշխանութեան երկիրը կոչուեց Մարդպետական, այսինքն մարդպետին պատկանող։

Ըստ Պլինիոսի՝ Հայերին մօտիկ ապրում էին menobard-ները և moshen-ները: Առաջին անունը ըստ երեւոյթին պէտք է կարդալ (ar) menomardi իսկ երկրորդը՝ mosho-eni համապատասխանում է ոչ թէ Մոսքերին, ինչպէս կարող է կարծուել, այլ հայկական Մոքսին: Նշանակում է Մոկաց իշխանութիւնն էլ ունի առանձնայատուկ էթնիկ հիմքեր:

Մարդերի հետ միասին Զագրոս և Նպատ լեռների մէջ ընկած տարածութեան վրայ ապրում էին Կուրտիոյները: Մարդերի նման նրանք էլ ապրում էին Հայաստանի սահմանագլուխին՝ մարդերից հարաւ՝ այն վայրերում, որ յետոյ նրանց անունով կոչուեց Կորճէք։ Կուրտիոյները այժմեան Քիւրտերի նախահայրերն են և նրանց չը պէտք է շփոթել բոլորովին այլ ծագում ունեցող Կորդուխների հետ։ Վերջիններիս երկիրը Հայերը կոչւում էին Կորդուք: Զանազանելու համար Կորճէքից, որ Կուրդոյների երկիրն էր: Դեռ եւս Փ. Բիւզանդացու մօտ Կորճէք անունով յայտնի էր Սալմաստի շրջանը։ Աւելի ուշ նա իր մէջ պարփակում էր նաև հարեւան Կորդուէնական հողերը, ըստ երեւոյթին որպէս հետեւանք Քրդերի ազդեցութեան հզօրացման։

Կուրդոյները և Կորդուխները միւսներից աւելի քիչ էին ենթարկուած Հայերի ազդեցութեան, բայց և այնպէս աննկատելիօրէն թափանցում էին հայկական հողերը և երբեմն էլ նրանց երկիրները համարւում էին Հայաստանի մաս։ Կադմոսի կամ կադմեան իշխանական տունը ըստ երեւոյթին շատ սերտ յարաբերութեան մէջ է Կորդուէնի հետ։

Սկզբները Կուրտիոյների երկրում և աւելի ուշ նրանց հարեւանութեամբ ապրում էին մատիանէ-ները։ Հին հեղինակների տուեալները արդարանում են նոր հետազօտութիւնների եզրակացութիւններով՝ այն մասին, որ մատի ժողովուրդը ոչ միայն արիւնով, այլև անունով ազգակից է մադերի հետ։ Նոյն անուան մէկ ուրիշ ձեւն է մանդան։ Ասորեստանեան արձանագրութեան մէջ այսպէս է կոչւում այն ժողովուրդը, որի թագաւորը Աժդահակն էր: Մադան այնպէս է վերաբերում Մանդին, ինչպէս մատին Մանտիին։ Այս ձեւը ունի Մանդիանէն, Ուրմիոյ լճի անուան մէջ, որ անկասկած ծագել է նրա չուրջն ապրող մէկ ժողովրդի անունից։ Զուգահեռ ձեւերը միայն բարբառային առանձնայատկութիւններ են։ Նրանց հետ սերտօրէն կապակցւում են հայ իշխանական տների անունները՝ Ա-մատ-ունի և Մանդ-ակ-ունի. Ամատունիների կալուածները Արտազում և հայկական աւանդութիւնները, խօսում են նրանց իրանական ծագման մասին, մէկ պարագայ, որ ապացուցում է վերեւ արուած համեմատութեան ճշմարտութիւնը, Մադերը սովորաբար Հայերին ծանօթ են մար անունով։ Մարն էլ յարակցւում է մանդայի հետ։

Հայ աւանդութիւնն այն մասին, թէ Մուրացան իշխանական տունը Մարերից է ծագում ինձ թւում է թէ հիմքից զուրկ չէ։ Մարերի բնակած վայրերը, հայերէն պիտի հնչէր Մարոց, ինչպէս Մարդերի հայրենիքը՝ Մարդոց։ Այստեղից էլ Մարոց-եան կամ պարսկական -ան ածանցով՝ Մարոցան և աւելի ուշ՝ Մուրացան։

Ատրպատականից Հայաստան էին թափանցում առանձին ցեղական խմբաւորումներ։ Ատրպատականը և Կասպից ծովի եզերքները հնուց անտի բնակեցուած էին բազմաթիւ հովիւ կամ վաչկատուն կենցաղի ցեղերով։ Տիգրանի ժամանակ՝ Արաքսի ափերին թափառող՝ նրանցից շատերը՝ հասան թագաւորին օգնութեան՝ Հռոմէացիների դէմ։ Գելերի, Կադուսիների, Ամարդների հետ յիշատակւում են Ուտիները կամ Ուիտիները, որոնց հետ ազգակից են հայկական Ուտեցիները։ Սկիզբը Ուտեցիները ապրում էին Արաքսի հարաւակողմը, յետոյ հիւսիս, ըստ որում Արաքս գետը համարւում էր սահմանագիծ՝ Օտենի Ատրպատականի մէջ։ Պտղեմիոսի մօտ՝ Օտենան տարածւում է Քուռի ուղղութեամբ, ուրեմն և համընկնում է հայկական Ուտիքի հետ։

Ուտեցիների հետ միասին դէպի Արաքսի և Քուռի միջագետքն էին թափանցում նաև Գեղ-երը, որոնցից հաւանաբար ծագում է հայկական Գեղ, Գեղարքունին, ինչպէս և Անիրա-Ներք, որոնք կապակցւում են Փայտակարանի Հանի, Շիրակի Անի քաղաքի հետ։

Օտենի գաւառակներից մէկը Շակաշէնը՝ սովորաբար նոյնացւում է հին գրողների Սակասէնի հետ. իսկ Սակասէնը համարւում է Սակերի բնակութեան վայրը։ Պատմում են, որ Միջին Ասիական տափաստաններից Սակերը խուժել են հարեւան Բակտրիան և գրաւել են այն վայրերը, որ իրենց անունով կոչուել է Սակաստան, այժմեան Սէիստան։ Նրանց մէկ մասը յետոյ ուղղուել է արեւմուտք և Հայաստանի վրայով հասել է Պոնտական ծովի ափերը։ Սակերի բեկորները Հայաստանում հաստատուեցին ամենատարբեր շրջաններում, որ այնուհետեւ յայտնի եղաւ իրենց անունով՝ Սակասէնա։

Սակասէնների կապը Սակերի հետ վերջին ժամանակներս առարկութեան է ենթարկւում, բայց ինչպէս երեւում է ոչ բոլորովին հիմնաւորուած։ Արդէն Դարեհ Կոդոմանոսի ժամանակ յիշւում է Սակեսինեա ժողովուրդը՝ Աղուանների, Կադուսիանների հարեւանութեամբ ապրող։ Այս երեք ժողովուրդները մարական զօրաբանակի մէջ էին

Ատրպատէնի հրամանատարութեամբ։ Ինչպէս էլ որ բացատրենք Սակաշէնների ծագումը եւ նրանց յարաբերութիւնը Սակերի հետ, բայց այն, որ գոյութիւն է ունեցել այդպիսի մէկ ժողովուրդ՝ վէճից դուրս է։ Աղուանից աշխարհին մօտիկ հայկական շրջաններից ամենից լաւ մեզ յայտնի է Սիւնիքը։ Նա կազմում է ամբողջական և մէկ իշխանութիւն՝ ինչպէս Մոքսը և Տայքը։ Նա թէպէտ Հայաստանի մասն էր կազմում, բայց աչքի էր ընկնում իր անջատողական հակումներով։ Այս հանգամանքը անպատճառ պիտի վերագրել ամենից առաջ երկրի ազգագրական առանձնայատուկ կազմին։ Հաւանական է, որ գիտնականները Սակերի հետքերը որոնում էին ոչ միայն Սակաշէնում, այլ և հարեւան Սիւնիքում, կամ ինչպէս Իրանցիները կոչում էին Սիսականում։ Նոյնիսկ փորձ արեցին Սիսականէ կարդալ Սակասինէի փոխարէն, հակառակ բնագրային տուեալներին։ Ենթադրութիւնը անյաջող է նաև այն պատճառով, որ Սիսականը ըստ Խորենացու նոյնարժէքը ունենալով Սիւնիքի հետ, չի յիշատակւում հին յիշատակարաններում և զատելով իր ձեւից՝ Տանուտէրական, Սեպուհական, Վասպուրական տերմինների հետ միեւնոյն ժամանակի և ծագումի տերմին է և նրանց նման էլ ունի կրճատ Սիսական գունդ։

Երկնակի անուանումների ծագումը դեռ մութ է և որոշակի ոչինչ ասել չի կարելի՝ թէ ինչ յարաբերութեան մէջ են նրանք իրար եւ Սակերի հետ։ Անկասկած է միայն մէկ բան, որ Հայաստանի Աղուանքին մերձ սահմանահողերը՝ Սիւնիքը իր բնակչութեամբ մասամբ տարբերւում էր Հայաստանի կենդրոնական մասերից։ Նրա ցեղագրական բացառիկ լինելը պահւում եւ վերանորոգւում էր մօտակայ լեռնային երկիրներից եկող գաղթական հոսանքներով։ Դրանց հետքերը մնացել են աշխարհագրական անունների մէջ։ Բաղք, Սոթք, Աղահեճք, Գարգար-ացիք, Մուխանք անունների էթնիկ ծագումը կասկածի ենթակայ չէ։ Առաջին անունը կապւում է Բաղասական-ի հետ և ծագում է լեռնաբնակ բաղասճիք ցեղից, որ մեզ յայտնի է Փաւստոսից ու Բիւզանդացուց։

Սոթք-Սիւնիքի գաւառակներից մէկն է՝ իր անունը պարտական է հարաւային Աղուանքում Sodi, հայերէն Ծովդէ-ացի ժողովուրդին և համապատասխանում է Սոդուկէնէին, որ յիշւում է հին մատենագիրների մօտ՝ Օտենայում գտնուող Կողբի հետ։

Գարգար-ների մասին յիշում է Փաւստոսը այն լեռնականների շարքում, որոնք Բաղասճիք-ների հետ արշաւում էին Հայաստանի վերայ Խոսրով Կոտակի թագաւորութեան ժամանակ։ Այս նոյն Գարգարցիները ըստ Խորենացու Ուտիի, Գարդմանի և Ծովդէացիների հարեւաններն էին։ Աւելի ուշ Գարգարական դաշտ կոչւում էր հին Ուտին կամ Օտենան Par excellence Պարտաւ քաղաքի հետ միասին։ Պարտաւի մօտիկ հոսող Քուռի վտակներից մէկը մինչեւ հիմա էլ կոչւում է Կարկար։ Հայ Գարգարները, պարզ է, որ ծագում են լեռնցի այն Գարգարներից, որոնք ապրում էին Աղուանքից աւելի հիւսիս Քերավանի ստորոտներում, Կովկասեան լեռնաշղթայի Աղուանից ճիւղերի վերայ։

Մուխ-ան-ք՝ Արցախի նահանգի ենթամասն է, իր սկիզբն առել է Մի-կոյ-ից՝ Կասպից ծովի շուրջը ապրող մէկ ցեղից։ Նրա յիշատակը պահուած է՝ Մուղան-դաշտ տափաստանի անուան մէջ, այսինքն՝ Մուխ-երի դաշտ։

Այսպէս էլ Պաղկան-քը, աւելի ճիշդ պարսկանք նոյն Արցախում՝ ծագում է Պարսիոյ ժողովրդից, զուգէ և Kusti Parens՝ որոշ կապ ունի Պարասիոյի հետ։

Բոլոր վերոյիշեալ և դեռ շատ ուրիշ էթնիկ խմբերը այն տարրերն են, որոնցից կազմուած են համապատասխան իշխանական տները։ Նոր տարրերի իմիգրացիան, ներգաղթը, առանձին ցեղագրական հոսանքների թափանցումը՝ շարունակուեց և յետագայում։ Շըրջակայ երկիրներից գալիս էին մասամբ նոր խմբեր, որոնցից նոյնպէս ժամանակի ընթացքում՝ իշխանութիւններ էին ձեւաւորւում։ Այսպիսի պայմաններում երկրի ազնուականացման գործողութիւնը մէկ անգամից չէր կարող տեղի ունենալ և եթէ մենք նշում ենք Տիգրան Մեծի դարաշրջանը որպէս տոհմական հասարակակարգի անկման և նոր դասային իշխանութեան ծագման շրջան, ապա այս պիտի ընդունել ճիշդ՝ ընդհանուր ձեւով։

Այս ձեւաւորման, փոխակերպման հետեւանքն այն եղաւ, որ կամարխները և տոհմապետները դարձան փոքրիկ իշխանութիւններ։ Նրանցից կազմուեց այն 120 ստրատեգիաները, որոնց մենք հանդիպում ենք Հայաստանում Արշակունիների երեւան գալիս։ 120 ստրատեգիաների ձեւաւորումը կարելի է համարել նոր կարգի սկիզբը՝ Հայաստանի հասարակական—քաղաքական զարգացման պատմութեան մէջ։

* * *

ԳԼՈՒԽ Գ.

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՒԱՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

I. Տիգրանեան հարստութեան փոխարինումն Արշակունիներով։ Նոր հարստութեան հիմնադիրը՝ Տրդատը, նրա անձը. նրա պատմական դիմագծի անդրադարձումը հայկական աւանդութեանց մէջ. Տրդատի վերաբերումը 120 ստրատէգների հանդէպ։ Երկրի կացութիւնը Արշակունիների երեւան գալիս։ Աւատական իրաւակարգը Պարթեւական պետութեան մէջ և նրա հիմքերը։ Իրանի դասային կառոյցը Արշակունիների օրով, շահրդարան, վասպուրական, վազրական եւ ազատան՝ *իրենց փոխյարաբերութեան մէջ։ Արշակունեաց կարգերը Հայաստանում՝ հողերի և պաշտօնների բաշխումը՝* նախարար, նահանգ, ազատ։ *Տոհմական տարրերի խառնուելը պետականի հետ՝ անդրադարձ-կրկնուող երեւոյթներ՝* տանուտէր *և* նահապետ։

II. Հայաստանի աւատական դիմագիծը, աւատականութեան էութիւնը, հռոմէական և գերմանական նախընթացները Արեւմտեան Եւրոպայի աւատականութեան զարգացման մէջ։ Հայրենիք եւ պարգեւականք, *որպէս հողային սեփականութեան ձեւեր նման ալլոդական և բենեֆիսային հողատիրական ձեւերին։ Վասալութիւն՝* ծառայութիւն-*servitium*։ *Աւատական կարգի տարրերը՝ սենիորութիւնը որպէս աւատականութեան հիմնական հաստատութիւն։*

Հայ իշխանական տիրապետութիւնները՝ fiefs-seigneuries։ Սենիորական իրաւական յարաբերութիւնները՝ «տանուտէրութիւն» սենիորի յատկանիշները։ Նեղ իմաստով ֆէոդալական յարաբերութիւնները, homage, auxilia, consilium՝ համապատասխան գաղափարները Հայերի մօտ։ Ենթաֆէոդալական բաժանումը և նրա ծագումը, ոստանիկ ազատութիւններ։

III. Գիւղացիական հողատիրութիւն։ Դրութիւնը արեւմուտքում։ Հարկային դրութիւնները Իրանցիների մօտ։ Հիմնական պարտահարկերը՝ խարաջ և ջիզիէ կամ սակ և բաժ= ցենզ և chevage bahrak= champart, կոռ բէգար = corvée. Հարկերի քանակային կողմը։ Մեր եզրակացութիւնները Խորենացու համեմատութեամբ, Խորենացին որպէս նախարարութեան պատմաբան։

I.

Մեր թուարկութեան սկզբում, այսինքն 36 թ. Տիգրան Դ-ի մահով Հայաստանում ընդհատուեց Տիգրանեան հարստութիւնը և սկըսուեց մէկ դաժան ու երկարատեւ պատերազմ հարեւան պետութիւնների մէջ թափուր մնացած գահի տիրապետութեան համար։[1] *Հռո-*

---

[1] Տիգրանեան հարստութեան ծագումը հասնում է մինչեւ Կիւրոսի եւ Աժդահակի ժամանակները։ Նրանց ժամանակ կար Հայոց թագաւոր, որ ունէր երկու որդի՝ Տիգրան եւ Շաւարշ: Նրանցից ծագում են

1. Արտաշէսը 190 թ. Քր. առաջ:
2. Տիգրան Ա. Տիգրան մեծը սրա որդին էր.
3. Արտաւազդ Ա, 94 ին մեռած.
4. Տիգրան Բ. Մեծը. 94-56. Նրա որդին էլ կոչւում էր Տիգրան, ամուսնացել էր Պարթեւ թագաւոր Հրահատի աղջկայ հետ: Տիգրանի աղջիկը ամուսնացած էր Ատրպատականի թագաւոր Միհրդատի հետ: Խորենացու մօտ խառնուած են Պոնտացի Միհրդատը մարական Միհրդատի հետ: Առաջինի աղջկայ՝ Կլէոպատրայի հետ ամուսնացել էր ինքը՝ Տիգրանը, իսկ Տիգրանի աղջիկը ամուսնացած էր երկրորդի հետ:
5. Արտաւազդ Բ. 56-30. գերի բռնուեց 33 թ. եւ սպաննուեց Եգիպտոսի Կլէոպատրա թագուհու հրամանով 30 թուին.
6. Արտաշէս Ս. Արտաւազդի որդին սպաննուած,
7. Տիգրան Գ. Արտաշէսի եւ Երատոյի եղբայրը:
8. Արտաւազդ Գ. գահընկէց արուեց 1. թ. Քր. յ.
9. Արիոբարզան մար.
10. Երատոյ. Քոյրը եւ կինը. Տիգրան Գ. Բ. անգամ գահակալեց։
11. Վոնոն. Պարթեւ.
12. Արտաշէս Գ. Զենոն. Պոլեմոն թագաւորի որդին.
13. Արշակ. Արտաբան մարի որդին
14. Տիգրան Դ. Գլխատուած 36 թ. յետ. Քր.
15. Միհրդատ. Իբերացի.
16. Հռադամիզդ. սպաննուած 54-ին. Տրդատի հակառակորդ 50 թ.
17. Տրդատ Ե. Կապադովկիայից, Հռոմէական թեկնածու Տրդատի դէմ։

Արշակունեաց Հարստութիւն

1. Տրդատ 50 թ. վերջնականապէս հաստատուեց 66-80.
2. Էկսոդար. մեռած 110 թ. Տրդատի եղբայր Բակուրի որդին.
3. Պարթամասիր. - 111-114 Էկսոդարի եղբայրը:

մէացիները գործում էին Իբէրների միջոցով և պաշտպանում էին նրանց արքայորդիների թեկնածութիւնը Արշակունիների ոտնձգութեանց դէմ։ Վաղարշ Ա. յիսուն թուին պարթեւական գահը բարձրանալով Հայաստանից դուրս արեց Հռոմի կողմից գահ բարձրացած Հռադամիզդին և շուրջ 53 թ. Հայաստանի թագաւոր նշանակեց իր եղբօրը Տրդատին։ Դրանից յետոյ անմիջապէս երևացին Հռոմէական լէգէոնները Կորբուլոնի հրամանատարութեամբ և հարկադրեցին Պարթեւներին մաքրելու Հայաստանը։ Այդ պահուն էլ ժամանեց Ներոն կայսեր կողմից Հայաստանի արքայական իշխանութեան համար՝ որոշուած Տիգրանը։ Վրկանական կռիւներում զբաղուած լինելով՝ Վաղարշը չկարողացաւ հակահարուած տալ Հռոմէացիներին, մինչ Տիգրանը պահում էր իրեն գրգռիչ ձեւով և ասպատակում հարեւան Ադիաբէնը։ Տիգրանի այս ելոյթը Պարթև ազնուականութեան կողմից դիտուեց որպէս վիրաւորական քայլ։ Ամենից շատ վրդովուած էր Ադիաբէնի կառավարիչ Մոնոբազը և հայկական գահից արտաքսուած Տրդատը։

«Ծանր տպաւորութիւն էր թողնում յատկապէս Տրդատը, ասում է պատմաբանը՝ Տակիտոսը՝ իրեն լռութեամբ եւ զուսպ գանգատներով։ Մեծ պետութիւններ իրենց գոյութիւնը չեն պահում, տրտնջում էր նա՝

---

4. (Վաղարշակ) 117.
5. Անտոնինոս Պիոսի նշանակած թագաւոր.
6. Սոհէմոս 159-162.
7. Բակուր 162-164. Սոհէմոս երկրորդ անգամ 164-169.
8. Սանատրուկ. 190-197.
9. Վաղարշակ 197 216.
10. Տրդատ՝ Բ. 217. Երրորդ դարի թագաւորներն անծանօթ են մեզ։ Գոյութիւն ունեցող տուեալները շատ խառնակ են, [illegible] են.
11. Տրդատ Գ, 253 թ. եւ
12. Արտաւազդ 269 թ.
13. Տրդատ Գ. Քրիստոնեայ. Գրիգոր Լուսաւորչի ժամանակակիցը.
14. Խոսրով.
15. Տիրան գահընկեց 344 թ.
16. Արշակ 346-369.
17. Պապ 369-374
18. Վարազդատ 374-378.
(Մանուէլ) 378-385
19. Արշակ եւ Վաղարշակ.
20. Վռամշապուհ
21. Արտաշէս.

անգործունէութեամբ, այլ մարդկանց եւ զէնքի մրցմանց միջոցով։ Մարդկային կեանքի մէջ արդարը այն է, ինչ որ ուժեղ է։ Միայն իր ունեցածը պահելը՝ մասնաւոր մարդկանց գործն է, իսկ ուրիշների ունեցածի համար պայքարելը՝ արքայական փառքն է կազմում»։

Այս խօսքերի ազդեցութեան տակ Վաղարշը խորհուրդ է հրաւիրում և իրեն շատ մօտ նստեցնելով Տրդատին՝ այսպիսի ճառ է ասում. «Իմ հարազատ եղբօրս՝ Տրդատին, որովհետեւ նա ինձ զիջեց աւագութեան կարգով արքայական կոչումը, նշանակեցի Հայաստանին իշխելու համար, որ կազմում է մեր տիրապետութեան երրորդ աստիճանը, որովհետեւ Մարաստանը մինչ այդ վերցրել էր Բակուրը։ Թւում էր թէ հակառակ եղբայրների մէջ գոյութիւն ունեցող հինաւուրց թշնամութեան եւ մրցութեան, ես, ինչպէս հարկն էր լուծեցի, կարգաւորեցի մեր ընտանեկան յարաբերութիւնները։ Բայց Հռոմէացիք թոյլ չեն տալիս այս. եւ խաղաղութիւնը, որ նրանք երբէք չեն խախտել առանց ի վնաս իրենց. դրժում են եւ այժմ յանուն իրենց իսկ կործանման։ Չեմ ժխտում, որ ես աւելի կը գերադասէի իմ նախորդներից ձեռք բերածը պահպանել արդարութեամբ, քան արիւնով. աւելի իրաւունքով կամ զէնքով։ Եթէ ես վրիպեցի իմ դանդաղկոտութեամբ, ապա ես այն կը շտկեմ իմ արիութեամբ»։ *Սրանից յետոյ նա կապում է Տրդատի գլուխը ապարօշը և հեծեալ մէկ բանակով Մոնէզի հրամանատարութեամբ ուղարկում է Հայաստան՝ յանձնարարելով դուրս անել այնտեղից Տիգրանին և գրաւել գահը։*

Տրդատը և Մոնէզը փայլուն գործ տեսան և Կորբուլոնին այնպիսի կացութեան մէջ դրեցին, որ նա «բազում տարիների ընթացքում ստացած փառքը կորցնելու վախից», *ինչպէս նկատում է պատմաբան Տակիտոսը, խնդրեց կայսրից ուրիշ զօրահրամանատար նշանակել Հայաստանի պաշտպանութեան համար։ Իր յաջորդը Ց. Պետոսը՝ անտաղանդ մէկ մարդ՝ կատարեալ պարտութիւն կրեց և բանակցութեան մէջ մտաւ Պարթեւ թագաւոր Վաղարշակի լիազօր հեծելազօրի հրամանատար Վասակի հետ։ Նա համաձայնեց ամօթալի պայմաններին՝ հռոմէական լէգէոնները դուրս բերել Հայաստանից և բոլոր ամրութիւնները և պաշարեղէնը յանձնել թշնամուն։ Պետոսին ազատելու համար նորից եկաւ Կորբուլոնը։ Հռոմէացիները համաձայնեցին Հայաստանը Տրդատին զիջել՝ պայմանով որ* «նա Կեսարի արձանի առաջ դնէր իր արքայական իշխանութեան նշանները եւ նորից յետ առնէր ոչ այլ կերպ քան Ներոնի ձեռքից»։

Այս նպատակով Տրդատը իր ընտանիքի՝ կնոջ և զաւակների, Վաղարշի և մարական Բակուրի, ադիաբէնական Մոնոբազի որդիների ու երեք հազար հեծեալների հետ միասին բռնեց հեռաւոր ուղին և ինը ամիս ճամբորդելուց յետոյ ժամանեց Իտալիա։ Եւ որովհետեւ այդ պահուն Ներոնը գտնւում էր Նէապոլում, ուստի Տրդատը ուղեւորուեց այնտեղ: Հայոց Թագաւորի ընդունելութիւնը կազմակերպուած էր այնպիսի շքեղութեամբ, որին Հռոմէացիների կողմից չէր արժանացել ոչ մէկ օտար իշխող։ Նէապոլը, նոյնիսկ Հռոմը տօնական կերպարանք էին ստացել։ Առաջինը հրավառուած էր ու զարդարուած ծաղկեշղթաներով։ Ամբողջ քաղաքը դուրս եկաւ Թագաւորին ընդունելու և տեսնելու համար։ Ամբոխը պատուարել էր փողոցները և նոյնիսկ տանիքները։ Հրապարակի կենդրոնում, ուր տեղի պիտի ունենար Թագադրութիւնը, շարքով կանգնած էր ժողովուրդը ճերմակազգեստ և դափնեայ պսակներով։ Չորս բոլորը շարուած էր զօրքը։ Հանդիսաւոր և շքեղ տօնակատարութիւն։

Թագադրութիւնից յետոյ տեղի ունեցան Թատերական ներկայացումներ ի պատիւ Թագաւորի։ Թատրոնը այդ առթիւ ոսկեզարդուել էր: Այս բոլորը ցոյց էր տալիս, թէ որքան բարձր էին գնահատում Հռոմէացիք՝ իրենց ինքնասիրութիւնը շոյող արտաքին ձեւերը, որի տակ թագնուած էր իրենց՝ Հայաստանում կրած պարտութիւնը։ Պարթեւները հասան իրենց աւանդական նպատակին և հաստատուեցին Հայաստանում Հռոմի ցնծութեան աղմուկների մէջ։

Տրդատից սկսւում է հայ Արշակունիների գիծը, հակառակ ազգային աւանդութեանց, որ Վաղարշակին է առաջ քաշում որպէս այդ հարստութեան հիմնադիր: Արշակունիների իրական նախահայրը Տրդատը մեծ հետաքրքրութիւն առաջ բերող դէմքերից մէկն է ոչ միայն հայ այլ եւ նշանաւոր այս տոհմի պարթեւ ներկայացուցիչների մէջ։ Նա իր անձի մէջ միատեղել էր զինուորական արիութիւնը քաղաքական խորաթափանցութեան հետ: Պատմաբանի՝ նրա բերանը դրած խօսքերը այն մասին, թէ ինչպէս պետութիւններ իրենց գոյութիւնը պահում են կռիւներով, լաւապէս բնութագծում են նրան որպէս զինուորական և պետական մարդու: Նրա մեծ եղբայրը՝ Վաղարշը աւելի մարդկայնական տեսակէտ ունէր, մտահոգւում էր արդարութեան առաջնութիւնը՝ արիւնի և իրաւունքինը՝ զէնքի հանդէպ։ Բայց յետագայ դէպքերը ցոյց տուին թէ որի կողմն էր ճշմարտութիւնը և որքան խորն էր թափանցել Տրդատը իրերի դրութեան մէջ։

Ցանդուգն անկեղծութեամբ յայտնած միտքը id aequius quod validius՝ ճշմարիտ է և մեր ժամանակների համար՝ ուժեղի արդարացիութեան իր ուսմունքով։ Այս խոստովանութիւնը բնորոշիչ է այն ժողովուրդի՝ պետի համար, որ ճաշակել էր իր կեանքի մէջ թոյլ լինելու դառնութիւններն ու աղէտները։

Արշակունեաց հպարտ իշխանը խոնարհեց իր գլուխը իրեն ատելի մարդու արձանի առաջ միայն նրա համար, որ ստանայ արդէն իրեն պատկանող թագը։ Նա ընդառաջ գնաց այդ ստորնացուցիչ արարողութեան ոչ թէ նրա համար իհարկէ, որ նրան պակասում էր հպարտութիւնը։ Հին մատենագիրների դիտողութեամբ՝ ամբարտաւանութեան հասած արժանապատւութեան գիտակցութիւնը և անվեհերութիւնը կազմում էին ընդհանրապէս Արշակունիների յատկանշական գիծը: Այս յատկութիւնները ոչ պակաս չափով զարդարում էին նաև Տրդատին, որին ապացոյց ծառայում է նրա յամառ պայքարը Հռոմէացիների դէմ։ Հազիւ զսպուած բնական հպարտութիւնը՝ ամեն վայրկեան պատրաստ էր պոռթկալու։ Երբ Տրդատը Նէապոլում ներկայացաւ Ներոնին՝ նրանից պահանջեցին քակելու իր սուրը. ինքնասէր իշխանը կտրականապէս մերժեց կատարելու այդ պահանջը եւ համաձայնեց պահելու այն միայն պատեանի մէջ։ Պարագաները ստիպեցին Տրդատին յաղթահարելու իր հպարտութիւնը, ինչպէս ասում է պատմագիրը՝ Դիոն Կասիուսը՝ ենթարկուել անխուսափելիութեան՝ իր իսկ շահերի համար։

Արշակունեաց հարստութեան հիմնադիր Տրդատի անձը խոր կերպով մխրճուել է ժողովուրդի յիշողութեան մէջ և թողել է պայծառ հետքեր ժողովրդական պատմուածքներում։ Հայերի պատմական աւանդութիւնները նոյնիսկ այն ձեւով, ինչպէս նրանք պահուած են Մով. Խորենացու մօտ, երբեմն զարմանալիօրէն ճիշդ են արտացոլում առանձին մոմենտները և փաստերը։ Յաճախ ազգային աւանդութիւնները ծածկւում են կեղծ պատճառախօսութեամբ, որ նրանց հագցնում է Խորենացին կամ այն հեղինակը, որ առաջին մշակողն է այդ աւանդութիւնների:

Աւանդութեանց մէջ մնացած Տրդատ Թագաւորի նկարագրի գծերը ցաք ու ցրիւ և ցայտուն երեւան են գալիս Վաղարշակի, ժողովրդական երգիչներին՝ սիրելի Արտաշէսի և նոյնիսկ Լուսաւորչին ժամանակակից Տրդատի դիմագծերի մէջ։ Ըստ հայկական աւանդութեան հայ Արշակունիների հիմնադիրը կոչւում է ոչ թէ Տրդատ, այլ Վաղարշակ: Այսպէս էր կոչւում Իրանում Թագաւորող Տրդատի աւագ եղբայրը։ Նա մօտիկ մասնակցութիւն ունեցաւ Տրդատի բախտի տնօրինման մէջ և հաւանաբար սրա համար էլ նրա անունը անցաւ իր եղբօրը վերայ։ Պարթեւ Թագաւորը նշանակեց նրան Հայաստանի Թագաւոր, գծեց նրա իշխանութեան սահմանները և ի միջայլոց ասաց. «Սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանեն՝ այնքան ունին»։ Այս տողը զարմանալիօրէն յիշեցնում է վերեւ մէջ բերուած Տրդատի խօսքը՝ id aequis quod validius և պայծառօրէն արտայայտում է նրա հիմնական միտքը։

Մորրիլիկը որի դէմ կռւում է Վաղարշը ոչ այլ ոք է, եթէ ոչ Հռոմէացի զօրավար և Տրդատի հակառակորդ Կորբուլոնը:

Վաւերական պատմութեան տուեալներով Արշակունեաց առաջին թագաւորը՝ Տրդատը կասեցրեց Ալանների արշաւանքը և դուրս արեց նրանց Հայաստանից 75 թուին։ Ազգային աւանդութիւնը այս փաստը վերագրում է Արտաշէս Բ-ին Սաթենիկ արքայադստեր վիպական պատմութեան մէջ։ Նոյն Տրդատի մի քանի գործերը՝ Խորենացու մօտ փոխանցուել են Գրիգոր Լուսաւորիչի ժամանակակից նոյնանուն թագաւորին։ Արտաշէսին է վերագրում օղաթոկի, պարանի յայտնի պատմութիւնը, որ իրօք պատահել է Տրդատի հետ 75 թուին Ալանաց արշաւանքի ժամանակ: Խորենացու պատմած սխրագործութիւնները Տրդատ թագաւորի մասին արձագանգն են այն պատմական փաստերի, որ տեղի են ունեցել Ներոնի կազմակերպած հանդէսների ժամանակ ի պատիւ Տրդատի։ Հայոց թագաւորը մէկ սլաքով գետին թաւալեց երկու ցուլեր։

Տրդատի ժամանակների վերապրուկները և արձագանգները աւելի ուշ ժամանակների աւանդութեանց մէջ, ապացուցանում են, որ առաջին Արշակունու մասին եղած յուշերը դեռ շատ պայծառ էին և և որ նրա թագաւորութեան շրջանը մեծ հետաքրքրութիւն էր ներկայացնում։ Թագաւորի փառքը, պիտի ենթադրել չէր հիմնւում միայն արտաքին դէպքերի վրայ, այլեւ նրա ներքին շինարարական աշխատանքների վրայ։ Ազգային աւանդութիւնները առաջին Արշակունուն տալիս են երկրի վերանորոգչի պատկերը և նրա ժամանակը համարում են Հայաստանի վերածնութեան սկիզբը։ Սրա մէջ կայ ճշմարտութեան որոշ բաժին: Մովսէս Խորենացու՝ Վաղարշակի բարենորոգչական ուրուագիծը՝ արտացոլումն է պատմական Տրդատի։ Շուրջ 50 թուին գահ բարձրանալով, կարճ ընդհատումով Տրդատը թագաւորեց մինչեւ 80 թիւը: 66 թ. ստեղծուած նոր պայմանները՝ նպաստաւոր էին շինարարութեանց համար, որին չէր կարող խանգարել 75 թուի Ալանների կարճատեւ արշաւանքը։

Ամենից առաջ միտք է ծագում Տրդատի ժամանակի հետ կապել Հայաստանի 120 Պրէֆէկտուրաների կամ ստրատէգութիւնների բաժանումը: Նրանց մասին առաջին խօսողը Տրդատի ժամանակակից Պլինիոսն է, որ 79 թուին զոհ գնաց Վէզուի ժայթքումներին: Քր. յետոյ 23 թուին մեռած և Հայաստանի գործերին շատ լաւատեղեակ Ստրաբոնը ոչինչ չգիտէ 120 ստրատէգութիւնների մասին, բայց նա յիշում է Կապադովկիայի նոյնանուն բաժանման մասին։ Եթէ Հայոց ստրատէգութիւնները ծագել են Ստրաբոնից մինչեւ Պլինիոսի ժամանակները և որեւէ մէկի նախաձեռնութեամբ, ապա այդ կարող է լինել միայն Տրդատինը։

Ինչ են յիշատակուած բաժանումները և ինչու են կոչւում ստրատէգութիւններ՝ շատ էլ պարզ չէ։

Դասական հեղինակների մօտ օտար ծագում ունեցող բաժանման վերաբերող բառերի գործածութիւնը աչքի չի ընկնում պարզութեամբ։ Եպարխիա-ին կամ պրովենցիայ-ին հակառակ ստրատէգիան հանդիսանում է ամենէն անորոշ և մութ արտայայտութիւններից մէկը՝ նշելու համար ամեն վարչական-երկրային բաժանում, որ չի համապատասխանում հռոմէական հաստատութիւններին:

Ինչ ժամանակի էլ մենք վերագրելու լինենք այս բաժանումը, անկասկած է, որ նրանք տեղական ծագում ունեն։ Դրան չի խանգարում նոյնիսկ յունական անունը, ճիշդ այնպէս, ինչպէս Պարթեւ թագաւորների դրամները պարթեւական են՝ չնայած նրանց վերայի յոյն գրութիւններին:

Պլինիոսը յիշում է Պրէֆէկտուրութեան կամ ստրատէգութեան անուններից մէկը՝ Կարանիտի շրջանը՝ հայկական Կարինը և սրանով էլ բացատրւում է 120 բաժանման իմաստը տերիտորեալ տեսակէտից։ Սրանք դասական Հայոց գրականութիւնից մեզ յայտնի հայկական կանտոններն են, գաւառակները:

Պլինիոսը Հայաստան է համարում Եփրատի ափին գտնուող Դասկուսիա քաղաքից մինչեւ Կասպից ծով և Տիգրանակերտից մինչեւ Իբերիա տարածուող երկիրը, այսինքն ճիշդ այն սահմանները, որ ցոյց է տրուած Հայոց Աշխարհագրութեան մէջ: Ըստ Պլինիոսի այս ամբողջ երկիրը բաժանւում էր 120 ստրատէգութեանց barbaris nominibas: Աշխարհագրութեան մէջ յիշւում են 185 մանր շրջաններ։ Հանել այս թուից աւելի հին 120 շրջանները դժուար չէ: Ստրաբոնի, Պլինիոսի և Պտողեմէոսի մօտ մենք հանդիպում ենք աւելի քան 50 անուն։ Պլինիոսի յիշած բաժանումները վարչական բաժանումներ չեն միայն, նրանք ծագել են անկախ մասնաւոր նախաձեռնութիւնից։ Առաջին Արշակունուն կարելի է վերագրել միայն նրանց կանոնաւորման կամ որոշ համակարգութեան բերելու գործը։ Նոր հարըստութիւնը հաստատեց այն դրութիւնը, որ գտաւ երկրի մէջ։

Բաժանման ընկերային-քաղաքական դիմագծի և ընդհանրապէս երկրի մասին դրական ցուցմունքներ չունինք։ Տրդատի պատերազմների պատմաբանները ճանաչում են բնակչութեան երկու շերտ՝ proceres և plebs՝ աւագանին եւ հասարակ ժողովուրդը։

Ուրիշ բառով աւագանին կոչւում էր megistanes կամ primores կամ ուղղակի nobiles։ Այս բառերի ընկերային բովանդակութեան մասին կարող ենք կռահումներ անել այն հիմքով, ինչ որ ասուած է վերը։ Մենք տեսանք՝ որ Տիգրանեան դարաշրջանում տոհմական կարգը քայքայուեց, տոհմը ճեղքուեց երկու մասի և նրանցից մէկից դուրս եկաւ ազնուականութիւնը, աւագանին։ Բոլոր այս proceres-ները, megistanes-ները ոչ այլ ոք են, եթէ ոչ զանազան անուններ կրող նախկին տոհմապետները, որոնք հասունացել են, հասել իշխողների աստիճանին։ Թագաւորական տոհմական գետնի վերայ ստեղծուած nobilitas-ը կազմում էր փակ միջավայր, ուր շարունակում էին գործել նախկին տոհմական կեանքի շատ նորմերը։ Այս միջավայրը փոխադրուեց նաև տոհմական կարգի տերմինոլոգեան: Նշանաւոր տոհմերի պետերը առաջուայ պէս շարունակուեցին կոչուել տէր, ասպետ, մաղխազ, մամակ և այլն, չնայած տոհմի բնոյթի փոխուած լինելուն։

Մանուկ, սեպուհ, որեար, աղախին բառերը, որոնք նախկին պայմաններում ցոյց էին տալիս տոհմական համայնքի որդիներին, ըսկսեցին գործ ածուել բացառապէս նշանաւոր տոհմերի որդիներին և անդամներին ցոյց տալու համար։ Ըստ այսմ մանուկը եւ աղախինը բացի սրանցից պահեցին նաև իրենց ընդհանուր իմաստը։ Նման երեւոյթ նկատում ենք նաև լատին լեզուին մէջ. ուր liberi նշանակում է և երեխաներ և ազատներ, ինչպէս և patres և patrici, որոնց մէջ գոյութիւն ունի այնպիսի յարաբերութիւն, ինչպէս ասպետի և սեպուհի մէջ։ Patricius-ը ածանցուած է pater-ից և ցոյց է տալիս ընտանիքին պատկանելը: Patrieci- հայրերի, սենատորների liberi-ներն են։

Մի շարք բառեր՝ ազգ, ազն, տոհմ, զարմ նշող՝ նոյնպէս ազնըւականութեան երանգաւորութիւն են ստանում։ Հաւասարապէս տունն էլ ստանում է իշխանական տոհմի կամ երկրի իմաստ:

Ազնուականութեան չպատկանող բնակչութեան մնացած մասը plebs ըստ տարբեր շրջանների կոչւում էր գեղջուկ, շինական, ռամիկ, գռեհիկ, գուցէ և մշակ եւայլն: Ռամ-իկը և մշ-ակը ըստ երեւոյթին բնիկների էպոնիմներն էին, ցեղանունները, որոնք նուաճուեցին և ենթարկուեցին եկուոր տարրերին և սրա հետեւանքով նրանց անունը ստացաւ այդպիսի նշանակութիւն։ Նոյն պատճառով էլ հայ աղախինը սպասուհու իմաստ ստացաւ։ Գռեհիկ բառը համապատասխանում է վրաց գլեխի բառին եւ միեւնոյն ծագումն ունի։

Մօտաւորապէս այսպիսի կացութեան մէջ էր Հայաստանը նոր հարստութեան երեւան գալու պահուն։

Ազնուականացման հոլովոյթը վերջանում էր և որպէս դրա հետեւանք ստեղծուեց 120 մեծ և փոքր իշխանութիւններ։ Ցեղագայի ամենէն կարեւոր իշխանական տները արդէն պատրաստ էին։

Ըստ ազգային աւանդութեանց Արշակունիների օրով ընկերային յարաբերութիւնները մտել էին հոլովոյթի այն փուլի մէջ, որ կարող ենք բնորոշել նախարարութիւն բառով։

Մենք տեսանք, որ Արշակունիների տիրապետութիւնը Իրանի

պատմութեան մէջ յայտնի է ընկերային-քաղաքական այնպիսի կարգով, որ մեզ յիշեցնում է Արեւմտեան Եւրոպական աւատականութիւնը։ Հայաստանում նրա արտայայտութիւնն էլ նախարարական կարգն է։

Արշակունեաց աւատականութեան ծագման մէջ ուսումնասիրողները մեծ տեղ են տալիս նուաճումին, որ շատ էլ ճիշդ չէ (*)։ Տոհմական կարգը իր յետագայ զարգացման մէջ ինքնաբերաբար հասցնում է աւատական կարգին նմանուող ձեւերին։ Իրանցիների մօտ, տոհմական կարգից յետոյ, պիտի ստեղծուէր աւատականութիւնը, որպէս, որոշ իմաստով անհրաժեշտ զարգացման փուլ։

Խնդիրն այն է, թէ գոյութիւն ունէ՞ր արդեօք կողմնակի պաբագաներ, որոնք արագացնէին բնկման գործողութիւնը։ Իրանի պետութիւնը կառուցուել էր վաղուց մեռած պետութիւնների՝ Ասորեստանի և Բաբելոնի քաղաքակրթական հարստութեամբ պարարտացած հողի վերայ։ Նա դրանցից ժառանգեց շատ բան, մանաւանդ պետական կառուցուածքից: Նրանք ունէին կառավարական համակարգութեան բաւական զարգացած ձեւ, որ այս կամ այն չափով պիտի արտայայտուէր Իրանական պետութեան ստեղծման մէջ։ Տոհմական կազմակերպութեան հետ միասին Իրանցիների մօտ գոյութիւն ունէր հին ժամանակներից ի վեր պետական բնոյթի հաստատութիւններ։ Dahiu ի մօտ կար Satra-ն սատրապի գլխաւորութեամբ։ Արքայից արքայի այս ամենակարող ծառաները հասարակ պաշտօնեաներ չէին կամ կառավարիչներ, նրանք ստանում էին երկիրներ անձնական կառավարութեան համար, բայց իրականութեան մէջ այդ երկիրները ամուր կապում էին իրենց հետ պաշտօնի ժառանգաբար դարձնելու միջոցով: Այս իմաստով սատրապութիւնը ոչ միայն քաղաքական նշանակութիւն ունէր, այլեւ ընկերային գործօն էր։

---

*) Արշակունեաց կարգի աւատական բնոյթի մասին առաջինը Գիբբոնն է, որ արտայայտուեց, իսկ հարցի բանաձեւումը պատկանում է Սէն-Մարտէնին: 1821ի Փարիզի Ակադեմիայի նիստում խօսած իր ճառի մէջ նշանաւոր հայագէտը ասում էր. «Ընդունուած է մտածել, որ կառավարելու այն ձեւը, որ տիրապետող էր մի քանի դար առաջ եւ որ կոչւում էր աւատական սիստեմ, Եւրոպայի բացառիկ առանձնայատկութիւնն էր եւ որ նրա ծագումը պիտի որոնել Գերմանիայի անտառներում... բայց եթէ համեմատելու լինենք Ժ.Բ. դարի Եւրոպան Արշակունիների Ասիայում հիմնած միապետութեան հետ՝ մեր թուարկութիւնից երեք դար առաջ՝ ապա մենք կը տեսնենք այնտեղ նման սովորութիւններ եւ հաստատութիւններ։ Մենք կը գտնենք միեւնոյն որակումներով բարձր աստիճանաւորներ՝ մարկիզներ, բարոններ, ասպետներ եւ զէնքի հասարակ մարդիկ: Այստեղ էլ մարդկանց մի զգալի մասը վայելում է ազատութեան բոլոր իրաւունքները, մինչ աւելի շատ մարդիկ բոլորովին զրկուած են նրանից։

Սէն-Մարտէնը աւելի առաջ է գնում եւ պնդում է, որ եթէ աւատական սիստեմը Եւրոպան չէ որ գտել է, ապա թող չկարծեն թէ այն Պարթեւների հնարածն է. «*Qu'est ce que le gouvernement féodcl*— շարունակում է նա,— *c'est tout simplement l'occupation militaire d'un vaste territoire, partagé entre tout les soldats: les rangs y sont distribués comme les grades dans une armée. c'est la consequence inévitable d'un gouvernement militaire ou d'une conquéte. Les Arsacides ne furent pas les inventeurs de ce mode gouvernement, puisqu-ils ne furent pas les prémiers conquérants de l'Asie*»։ *Discours sur l'origine et l'histoire des Arsacides. Histoire des Arsacides*, II 293. յաւելուած: Սէն-Մարտէնի աւատականութեան բնորոշումից նկատելի է որ համբաւաւոր գիտնականը կանգնած է գերման դպրոցի տեսակէտի վերայ, մի բան որ այժմ հնացած է:

Սատրապների դրութեան էին հասած և այն մարդիկ որոնց հողեր էին շնորհւում թէպէտ կառավարիչներ չէին, բայց Թագաւորի պալատումն էին և նրան էին սպասարկում: Հողերի բաշխումը տեղի էր ունենում կամ կառավարելու կամ պարզ տիրապետութեան կարգով։ Բաժանելով սատրապութիւնները իրեն մօտիկ մարդկանց մէջ, Իրանի Կիւրոս Թագաւորը իր մօտ մնացածներին ասում էր. «Ես կարծում եմ, որ ձեզնից նրանք, որոնք մնացել են ինձ մօտ եւ որոնց ես կարող էի ուղարկել նուաճուած ժողովուրդների մօտ զանազան յանձնարարութիւններով, անհրաժեշտ է, որ այնտեղ իրենց տրամադրութեան տակ ունենային տներ եւ հողեր, որպէսզի նրանց հասոյթը դուք ստանայիք այստեղ, իսկ այնտեղ գնալու պարագային դուք մեկ տեղ ունենայիք մնալու որպէս ձեր տանը»։ Այս խօսքերից յետոյ շարունակում է պատմաբանը — Քսէնոֆոնը, Կիւրոս իրեն մօտիկ մարդկանց շատերին հողեր բաժանեց և հպատակ մարդիկ տուեց նուաճուած զանազան երկիրներում: Եւ հիմա էլ այդ հողերը՝ ցրուած շատ վայրերում, գտնւում են այն ժառանգների ձեռքին, որոնց հայրերը իր ժամանակ ստացել էին Թագաւորից. Նրանք էլ միշտ մնում են Թագաւորի մօտ։

Այս մարդիկ կազմում էին ոչ միայն պալատական, այլեւ ընդհանրապէս պետական ծառայութեան, աստիճանաւորների դասը։ Աքէմէնեանների օրով արդէն գոյութիւն ունէին բացի սատրապներից նաեւ ուրիշ պաշտօնատարներ՝ հարկահաւաք, ծախսարար, հանրային աշխատանքի վերահսկիչ, գանձարանի տնօրէն, մատակարարապետ, ախոռապետ, որսի կարգադրիչ, հետեւակ և հեծեալ բանակապետներ,

հրամանատարներ։ Թագաւորն ունէր նոյնպէս բարապան, հացթուխ, խոհարար, մատռուակ, լողացնող, սպասաւորներ, հաւաքարար՝ ճաշի և ննջարանի եւայլն։

Հասարակական ու պալատական սպասարկութեան վերոյիշեալ բոլոր մարմինները զանազանւում էին շրջանային վարիչներից։ Ըստ այսմ երկու տեսակ հողատիրութիւն գոյութիւն ունէր։ Մէկի համար հողը գոյք էր, կալուած, սեփականութիւն. իսկ միւսի՝ սատրապների համար՝ նա հողային տիրապետութիւն էր, իշխանութիւն այսինքն հողային սեփականութեան հետ միացւում էր պետական կարգի իրաւունքներ։ Այս է ընդհանուր և գլխաւոր հիմքը աւատատիրութեան։

Սատրապներին իրենց պաշտօնավայրերն ուղարկելով՝ Կիւրոսը պնդում էր նրանց՝ ամեն բանի մէջ իրեն ընդօրինակելու, ի միջի այլոց պահանջելու հողի և իշխանութեան տէրերից, որպէսզի նրանք ներկայանան սատրապի պալատը, յանձնեն նրան իրենց երեխաներին դաստիարակութեան համար և ընդհանրապէս ծառայեն սատրապին։

Ըստ այս ցուցմունքի տուեալ սատրապութեան մէջ հողատէր ազնուականութիւնը սատրապին այնպէս է վերաբերւում, ինչպէս իրենք սատրապները արքայից արքային։ Սատրապը իւրատեսակ մէկ Թագաւոր էր կամ տէր իրեն վստահացուած սատրապութեան մէջ։ Նրանից էին կախուած հողային և իրաւական իշխանութիւն ունեցողները, երկու հիմնական յատկանիշներ, որոնց միացումը ստեղծում է աւատական հողատիրութիւն։ Այս առումով Աքէմէնեանների պետութիւնը արդէն իր մէջ սաղմնաւորուած ունէր աւատական կարգը։

Հողաբաշխման միջոցներով կառավարելու այս սիստեմը գոյութիւն ունէր նաեւ Արշակունեաց դարում։

Աքէմէնեանների նման, որոնք սատրապութիւնները բաժանում էին իրենց ազգականների մէջ, Արշակունիներն էլ կանգնած լինելով տոհմատիրական տեսակէտի վերայ՝ նուաճուած երկիրների կառավարելը յանձնում էին իրենց ընտանիքների անդամներին։ Պարթեւական Թագաւոր Վաղարշը իր եղբայրներից մէկին նշանակելով Մարաստան, միւսին Հայաստան, ենթադրում էր, որ սրանով կարգաւորում է իր ընտանեկան գործերը, familae nostuae penates rite composuisse, Արշակունեաց Թագաւորների մօտ գոյութիւն ունէր աւագների խորհուրդ ordo probulorum, որ կազմուած էր գլխաւորապէս նշանաւոր տների ներկայացուցիչներից։ Պատմաբանի՝ Յուստինի, վըկայութեամբ, այդ խորհրդից է, բացառապէս, որ նշանակւում էին հրամանատարներ պատերազմի ժամանակ և կառավարիչներ խաղաղութեան ժամանակ ex hoc duces in bella, ex hoc in pace rectores habent: Rectorees տակ պիտի հասկնալ ոչ միայն շրջանների վարիչները, այլ ընդհանրապէս պաշտօնէութիւնը, սպասարկու մարմին-

ները։ Բիւզանդական հեղինակներից մէկի մօտ պահուած տեղեկութեանց համաձայն Մարերի=Պարթեւների մօտ, ըստ մէկ հին օրէնքի՝ եօթ նշանաւոր ընտանիքները, ժառանգաբար վարում էին պետական կեանքի ամենէն պատասխանատու և պատուաւոր գործերը։ Նրանցից առաջինը Արշակունիների հարստութիւնն էր, որ ունէր իր ձեռքին արքայական իշխանութիւնը. նրան էր պատկանում նաեւ թագադրութեան իրաւունքը։ Ապա հետեւում են հետեւեալ գործառնութիւն ունեցող ընտանիքները՝ զօրահրամանատարութիւն, քաղաքացիական վարչութիւն, դատավարութիւն, հեծելազօրի հրամանատարութիւն, հարկերի բաշխման և հաւաքման վարչութիւն, զինամթերքի և ռազմազգեստաւորման վարչութիւն (*)։

Այս տեղեկութիւնները վերաբերում են պարթեւական դարաշըրջանին, ինչպէս նկատելի է առաջին տոհմի մասին եղած խօսքերից։ Եթէ նոյնիսկ ենթադրենք թէ Պարթեւները եօթ նշանաւոր տոհմեր ունէին, ապա նրանք, յամենայն դէպս, ոչ մէկ կապ չեն ունեցել Դարեհի եօթ սատրապների հետ։ Շատ բախտորոշ նշանակութիւն կ՚ունենար ուժերի այդպիսի դասաւորումը մէկ երկրում, որ մէկից աւելի անգամ ենթարկուել էր դինաստիական և ուրիշ վերիվայրումների։

Այս ցուցմունքի մէջ անվիճելին և էականը այն է, որ պարթեւական պետութեան մէջ որոշ պաշտօններ համարւում էին շատ յարգի և իւրացուած էին որոշ տոհմերի կողմից, որպէս ժառանգական իրաւունք։ Ուրեմն սատրապների նման պետական պաշտօններն էլ դառնում էին ժառանգական սեփականութիւն։ Այս բանը շատ մօտ է fief-office *գաղափարին, Արեւմտեան Եւրոպայի աւատականութեան մէջ։*

Այսպիսով տոհմական սկզբունքին զուգահեռ հնուց անտի գործում էր զուտ պետական սկզբունքը՝ պաշտօնավարելը, ծառայութիւնը, որ տոհմական միջավայրի ազդեցութեան տակ հանգաւ աւատական կարգի դասայնութեան ստեղծման։ Մենք տեսանք, որ դասայնացումն առաջացաւ նաեւ տոհմական կենցաղի քայքայման գետնի վերայ։ Ինչպիսի հետեւանքներ էին ունենում կրկնակ այս գործողութիւնները և ինչ ձեւեր ընդունեց դասային կարգը Արշակունիների մօտ յայտնի չէ։ Դրա մասին քիչ թէ շատ գաղափար կարելի

(*) Վերեւ յիշուած պաշտօնների վարիչ ընտանիքների ծագումը պատմաբան *Թէոֆիլակտը* հասցնում է մինչեւ Դարեհի ժամանակները՝ ինչպէս երեւում է եօթ սատրապների մասին եղած պատմուածքների ազդեցութեան տակ։ Եօթ իրանական ականաւոր տների մասին խօսում են նաեւ արաբ հեղինակները։ Նոյնիսկ մէկ պատմութիւն է մնացել այն մասին, թէ Արշակին էլ եօթ սատրապներն են գահ բարձրացրել, ինչպէս Դարեհին։ Հաւանական է, որ որոշ պաշտօններ համարուել են ամենէն պատուաւոր, յարգին՝ ինչպէս Աքեմենեանների, այնպէս էլ Արշակունիների ժամանակ եւ որ այս առումով գոյութիւն ունէր համապատասխան թուով նշանաւոր ընտանիքներ, բայց որ Արշակունեաց ընտանիքները իրենց ծագումով հասնէին Դարեհի եօթ սատրապներին՝ շատ անհաւանական է։ Դարեհի սատրապների շարքում Տաբարին մուծում է *Կարէնին*, *Սուրէնին*, *Սպենդիարին*, որոնք, ինչպէս յայտնի է պատկանում էին գերազդեցիկ պարթեւական տոհմերին։ Նրանց քոյրը կոչւում էր՝ ըստ Խորենացու *Կոշմա* եւ նրա տոհմն էլ ամուսնու անունով՝ *Ասպահապետական*։ Ըստ երեւոյթին *Կոշմա*, այնպէս էր կապուած *Կոմիսէնէի* հետ, ինչպէս Կարէնը *Կարինայի* հետ։ Դեռ արաբական ժամանակ Կարէնեանները ապրում էին Նեհավէնդում, հին Կարինի մօտերքում։ Պարթեւական տոհմերի շարքին է պատկանում նաեւ Միհրանի հզօրագոյն տունը։ Թէոֆիլակտը նրան համարում է մարական=պարթեւական եօթ տոհմերից մէկը։ Միհրանեանների տան մէջ գործածական էր Վշնասպ անունը՝ *Եզատ—Վշնասպ, որդի Աշտատայ ի Միհրան տոհմէ*։ Ղ. Փարպեցին նրան համարում է Պերոզի «*դայեակորդի*». նշանակում է Պերոզի դաստիարակը նրա հայր *Աշտատն* էր։ Եղիշէի մօտ դաստիարակը կոչւում է *Ռահամ*, *որդւոյն Յազկերտի՝ դայեակ Ռահամ ի Միհրան տոհմէն*։ Վահրամ Չուբինի հայրը կոչւում էր *Bahram Gusnasp*։ Միհրանեան տոհմից ամենազօր իշխան *Միհր—Ներսէհի* որդին կոչւում էր *Մահ—Գուշնասպ*։ Վշնասպը յորջորջումն էր սրբազան կրակի, որի տաճարը գտնւում էր Ատրպատականի Գանձակ—Շիզ քաղաքում. «*Հրատ մեծ որում Վշնասպ կոչէին*» — ասում է Սեբէոսը։ *Գանձակի մօտերքում մէկ շրջան կար. Սօրօ Միտրինէ* որ հաւանաբար Միհրանեանների նստավայրը լինէր։ Գուցէ եւ *Վշնասպը* լինէր տոհմական տիտղոս։ Կրակը պաշտւում էր որպէս տեսանելի խորհրդանիշը Միթրա, Միհր մեծ աստծու, որից եւ ծագում է Միհրանը։ Նրան ձիեր էին զոհաբերում, ինչպէս Արամազդին՝ կովեր։ Տոհմական անուն է նաեւ Ջիկը եւ անկասկած պարթեւական ծագումով։ Յուստիանոսի մօտ 562. ուղարկած իրանական դեսպանը անունով կոչւում էր Եստիկուսնաֆ, իսկ կոչումով՝ Ջիկ։ Պատմագիրները այսպիսի կոչում են համարում նաեւ Սուրէն եւ Միհրանը։ Փաւստոսի մօտ Սուրէնը յիշւում է Կարէնի հետ։ Պարսից թագաւորը Ջիկին նշանակելով Հայոց Խոսրով թագաւորի դաստիարակ՝ ի նկատի ունէր հաւանաբար նրա ազգակցութիւնը Հայոց թագաւորի հետ։ Եթէ իրօք Պարթեւները եօթ նշանաւոր տներ ունէին, ապա թուած՝ Սուրէնի, Կարէնի, Սպենդիարի, ասպահապետ—Կոշմի, Միհրանի եւ Ջիկի վերայ թերեւս պէտք է աւելացնել նաեւ *Նիխորական* տունը, որի կալուածները գտնւում էին Ուրմիոյ լճի արեւելեան եզերքներին։

է կազմել Շապուհ Ա. (240–270) Հաջի-Աբատի արձանագրութեան հիման վրայ։ Արձանագրութիւնը գծագրուած է թագաւորի որսորդական զբօսանքներից մէկի ժամանակ. այնտեղ ի միջի այլոց կարդում ենք հետեւեալ պարբերութիւնը՝ «Ես նետն արձակեցի ներկայութեամբ Satradaran va barbitan va raban va aratan, որ պահլաւերէն կը թարգմանուի այսպէս.

Շաթրադարան ու վասպուհրական ու վաչարական ու ազատանի։

Այստեղ թուարկուած են ազատ դասի զանազան կարգերը։ Թէ խօսքը վերաբերում է ոչ թէ պատահականօրէն ընտրած անուններին, այլ խստօրէն որոշուած դասային օղակներին, երեւում է այն բանից, որ արաբական հեղինակներն էլ գիտեն Իրանի ազնուականութեան չորս աստիճանի մասին, թէպէտ սխալմամբ համարում են այդ հաստատուած Սասանեան Արտաշիրի կողմից։ Ճիշդ է վերոյիշեալ արձանագրութիւնը Սասանեան Շապուհինն է, բայց այնտեղ յիշուած դասային փաստերը արդիւնք են նախորդ, Արշակունեաց շրջանի։ Արձանագրութեան կազմած ժամանակ նոր դինաստիան դեռեւս երկրում էական փոփոխութիւն չէր առաջացրել, եւս առաւել, որ նա երկար ժամանակ զբաղուած էր իր քաղաքական դրութիւնը ամրապնդելու հարցով։

Արձանագրութեան մեզ հետաքրքրող պարբերութեան առաջին բառը կազմուած է Satra երկիր և dar պահել բառերից և համապատասխանում է satrapa, հայերէն շահապ, նոյն satra և pa-պահել Աքէմէնեան շրջանի բառից։ Այն հանգամանքը, որ շաթրադարան ուղեկցում են թագաւորին որսի ժամանակ, ցոյց են տալիս, որ նրանք սովորական սատրապներ չեն կամ նահանգների կառավարիչներ, այլ որ նրանց տակ թաքնուած է աւելի լայն գաղափար։ Անկարելի է ենթադրել, որ սատրապները նահանգներից թագաւորի մօտ էին կանչւում որսորդական կարիքների համար։ Այդ մարդիկ, ըստ երեւոյթին մշտապէս մայրաքաղաքում էին լինում և հաւանաբար կապուած էին արքունիքի հետ։ Արձանագրութեան մէջ շաթրադար ոչ թէ վարչական մեծութիւն է ցոյց տալիս, այլ աւելի շուտ ընկերային կամ դասային։ Սրանք անուանի՝ մագնատներն են, խոշոր հողատիրութեան ներկայացուցիչները։ Ծագման տեսակէտից նրանք սերւում են թագաւորի այն մօտիկ մարդկանցից, որոնց ինչպէս մենք տեսանք տրւում էր հողեր։ Իրենց ընկերային կոչութեամբ նրանք հաւասար էին սատրապներին, բայց առանց ծառայութեան կամ վարչական պարտաւորութիւնների։

Հետեւեալ աստիճանը կազմում են վասպուհրական։ Այս՝ տոհմական կարգից մնացած մեզ ծանօթ բառն է, որ նշանակում է տոհմի որդի, իսկ տոհմական կարգի քայքայումից յետոյ՝ նշանակում էր իշխանի որդի։ Տոհմական աշխարհում տոհմի որդիները բարձր էին դասւում, շնորհիւ այն բանի, որ նրանք տոհմապետի գլխաւոր աշխատակիցներն էին, ինչպէս թշնամու դէմ կռուելիս, այնպէս էլ աւար որոնելիս, աւարառութեան պահուն։

Վասպուրների բարձր դիրքը նշուած է նաև աւեստական գրականութեան մէջ։ Այստեղ նեմանոպատին գնահատւում է վատ տեսակի մէկ եզով, վիսպատին՝ միջին տեսակի եզով, զանդուպատին՝ առաջին կարգի եզով, դահիւպատին, չորս ձիաքարշ սայլի արժէքով։ Վիսպուհրան առանձնանում է այս խմբից և գնահատւում է առաջին կարգի եզան արժէքով, այսինքն այնքան, որքան զանդուպատին։ Վիսպուհրան, նշանակում է աւելի վար է դասւում մէկ դահիւպատից։

Վերջինս իր դիրքով հաւասարարժէք է սատրապա-յին կամ շաթրադարին, որպէս Դահհիու = շաթրայի շրջանի կառավարիչ։ Աւեստական աւանդութիւնները՝ այսպիսով, համերաշխ են արձանագրութեան հետ՝ վասպուրների դիրքի նկատմամբ, որովհետեւ արձանագրութեան մէջ էլ վասպութրականը հետեւում է շաթրադարանին։

Վասպութրական-ները շահրադար-ների որդիներն են։ Այս անուան տակ պէտք է հասկանալ ոչ միայն որդիներին՝ բառի իսկական իմաստով, այլ ընդհանրապէս գերդաստանի բոլոր արական ներկայացուցիչներին՝ բացի պետից, շահրադարից, Շահրադարի կենդանութեան օրով նրա որդիները պայմանական մեծութիւն են, որպէս նրա ժառանգներ։ Այս պատճառով էլ նրանք իրենից ցած են, բայց բարձր են բոլոր միւսներից:

Երրորդ աստիճանը vacarkan-ը, resp-վազրկանը, որ նշանակում է աւագ, պետ. վազրակ-ից ծագել է իրանական buzurg-մեծ բառը։ Այս անունը ամենից լաւ յարմարւում է այն մեծատոհմիկներին, որոնք ծագել են հին տոհմապետներից։ Habacaris կամ հլեսբէրա ակորա, որի հետ մենք ծանօթացանք վերը. մէկ հնոց է, ուր տոհմի գլխաւորները կերպարանափոխւում էին անուանի մարդկանց, իշխանների։

Habacaris-ը պահլաւերէնի մէջ կարող էր հնչել vacar, ինչպէս ցոյց է տալիս հայերէն վաճառը: Երրորդ աստիճանի անուանումը կարելի է կարդալ vazrakan կամ vacarakan, վերջին դէպքում նա ծագած պիտի լինի vacar-ից, որպէս habacaris-ի մասնակից կամ նրա անդամ։

Այստեղ յաճախում էին միայն ապահով մարդիկ և զբաղւում էին զինուորական գործերով։ Այս երեւոյթն էլ նախապատրաստեց նրանց արտօնեալ դաս լինելը։ Մեզ թւում է, որ անկախ ստուգաբանութիւնից vazarkan-ը պէտք է համարել այն ազնուականութեան ընդհանուր որակումը, որ ծագել էր տոհմական արմատներից։

Ինչ վերաբերում է վերջին աստիճանին՝ azat-an-ին, ապա նա վերաբերում է vazrakan-ին այնպէս, ինչպէս վասպուհրականը շահրդարանին։ azat-an յոգնակի թիւն է azata-յի, անցեալ ժամանակի azan, a.za բայի որ նշանակում է ծնել։ Ազատ-ները որդիներն են ու ժառանգորդները վազրուկների և իրաւական տեսակէտից բախտակից էին վասպուրներին։ Նրանք համարւում էին ուժեղներ, իրաւատէրեր, որպէս ապագայ **վազրակներ**։

Այսպէս է պատկերանում մեր առաջ մատնանշուած դասային աստիճանները իրենց փոխադարձ յարաբերութեան մէջ։ Նրանցով լրանում է դասայնութեան հոլովոյթը Արշակունեաց շրջանում և այս դրութիւնը ի նկատի պիտի ունենալ Հայաստանի Արշակունեաց կարգերը ուսումնասիրելիս։

Տոհմերի և զուտ-պետական հաստատութիւններից ծագած դասային ազնուականութեան այս կրկնակի հոլովոյթը պէտք է համարել ճիշդ և Հայաստանի վերաբերմամբ։ Հողի և պաշտօնի բաշխման սովորութիւնը ընդունուած էր նաև Հայաստանում Արշակունիների մօտ։ Քրիստոնեայ Արշակունիների պատմաբան Փաւստոսը վկայում է, որ հայ իշխանները շատ բաներով պարտական էին Արշակունիներին և ամենից առաջ հողային սեփականութեամբ։ Թագաւորները պարգեւում էին նրանց մեծ շրջաններ, երկիրներ, գիւղեր և ուրիշ կալուածներ. բարիքներ էին անում շնորհելով նրանց պաշտօններ, պատիւներ, իշխանութիւն և ծառայութիւն։ Ինչպէս մենք տեսանք **իշխանութիւնը** տարբերւում էր **գործակալութիւնից**, իշխանական դիրքը ծառայութեան կամ պաշտօնեաների դիրքից։ Մէկը ճանաչւում էր ըստ գահի, միւսները ըստ աստիճանի՝ **մեծամեծ յիւրաքանչիւր գահու գործակալի յիւրաքանչիւր չափու**։

Արշակունիներից առաջ էլ Հայաստանում իշխաններ կային, իսկ պաշտօնէութեան, ծառայութեան մեքենան նրանք մուծեցին։ Ըստ Խորենացու առաջին Արշակունու շինարարական գործը նրա մէջն էր, որ նա բաժանեց հասարակական և պալատական զանազան գործակալութիւններ տեղական իշխանական տների մէջ։ Մատնանշուած պարթեւական պետութեան ծառայութեան օրգանները, հաստատութիւնները գոյութիւն ունէին նաև Արշակունեաց Հայաստանում։

Թագաւորութեան պատւոյ պաշտօնը Իրանում համարւում էր Սուրէնեան ընտանիքի արտօնութիւնը, իսկ Հայաստանում Բագրատունիներինը։

Բանակի բարձրագոյն հրամանատարութիւնը **սպարապետութիւնը** Իրանում ժառանգաբար գտնւում էր Ասպարապետների ընտանիքի մէջ, իսկ Հայաստանում Մամիկոնեանների։ Մեծ նշանակութիւն ունէր **հազարապետի** պաշտօնը։ Բոլոր իր յատկանիշներով նա համապատասխանում էր Թէոֆիլակտի մօտ յիշուած երրորդ վարչութեան, որ իր մէջ պարփակում էր **տասպոլիտիկաս Ֆրոնտիդաս**, հակառակ **պոլէմիքիս սինտաքսիոսի**։ Փաւստոս պատմագրի մօտ հազարապետութիւնը կամ հազարապետութեան ծառայութիւնը որոշ իմաստով հակադրւում էր սպարապետութեան։

Առաջինը բնորոշւում է որպէս **աշխարհատես խնամակալութիւն** և տարածւում է **դեհկանութեան** վերայ, այսինքն հողագործ գիւղացիութեան վերայ։ Հազարապետութեան իշխանութեամբ օժտուած Գնունիների տոհմը կոչւում էր **շինականաշէն**։ Որպէս Սպարապետ Մամիկոնեանները կանգնած են **ի վերայ իշխանութեան բովանդակ**, այսինքն բոլոր իշխանութիւնների վերայ, **ի վերայ ամենայն զօրաց զօրավարութեան**, բոլոր զօրավարներից, հրամանատարներից վեր։ Հայկական բանակը կազմուած էր իշխանական տների մատուցած զօրքերից. ամեն մէկ բանակին հրամայում էր իր իշխանը, իսկ ընդհանուր հրամանատարութիւնը պատկանում էր ժառանգական սպարապետներին՝ Մամիկոնեաններին։ Այս իմաստով է, որ նրանք կանգնած էին բոլոր իշխանների և նրանց բանակների գլուխը։

Հազարապետի իշխանութեան ենթակայ էր բովանդակ գիւղացիական բնակչութիւնը։ Հազարա-պատի, **խիլիարխոս** հազարապետ՝ զինուորական տերմին է, որ Աքէմէնեանների օրով փոխադրուել է քաղաքացիական գործերի սահմանը։ Քսէնոֆոնի պատմածի համաձայն Կիւրոսը մտահոգուած լինելով եկեւմուտքի կանոնաւորումով՝ ի նկատի ունենալով ընդարձակ պետութեան հսկայական ծախքերը՝ որոշեց այդ սահմանում կիրառել զինուորական սիստեմի բաժանումը և ստեղծեց դեկուրեաններ, լոխագներ, խիլիարխներ և միրիարխներ դիւրացնելու համար կառավարելը։ Ըստ այս սիստեմի հազարապետը պիտի նշանակէր պետական եկամուտների վարչութեան բարձրագոյն աստիճանը։ Այսպիսով հասկանալի է դառնում և նրա կապը հարկատու բնակչութեան, գիւղացիութեան հետ։

Թւում էր թէ հազարապետը պիտի վարէր հարկային բաժինը, բայց վերոյիշեալ ցուցակից յայտնւում է, որ հարկի ենթարկելը և հարկի հաւաքումն կազմում էին առանձին, ուրոյն վարչութիւն։ Հաւանաբար այս էլ, սկիզբը մտնում էր հազարապետի պարտաւորութեանց շրջանակի մէջ, իսկ յետոյ անջատուեց և դարձաւ առանձին մաս։ Սասանեան ամենակարող իշխանը՝ Միհր-Ներսէհը հայ պատմաբանների մօտ կոչւում է **մեծ հազարապետ**. իսկ Տաբարիի մօտ Buzurg-framadar որ իր իսկ թարգմանութեամբ նշանակում է **Մեծ վեզիր**։ Հէնց Միհր-Ներսէհի ժամանակ ոմն Մահգուշնասպ վարում էր հարկային մասը և կոչւում էր vastriliosansalar. այսինքն հողագործների պետ։ Այս որակումը յարմար է հազարապետութեան այն իմաստով, որ գործ է ածւում Փաւստոսի մօտ և կիրառւում է Գնու-

նիների տոհմի նկատմամբ։ Կարող է պատահել, որ նախկին հազարապետութիւնը բաժանուել է երկու մասի, մէկը նման պոլիտիկաս Ֆրանգիստան-*ին, վարում էր* Buzurg framadar-*ը, իսկ միւսը* vestriliosansalar-*ը, մինչ Հայաստանում նա մնաց առաջուայ նման։*

Դատական իշխանութիւնը կամ արդարադատութիւնը գտնւում էր մոգերի ձեռքին, ընդհանրապէս հոգեւորականութեան ձեռքին։ Քրիստոնէութեան ընդունելով նա անցաւ եկեղեցուն և ամեն շրջանում գտնւում էր տեղական եպիսկոպոսի ձեռքին։ Փաւստոսի մօտ Դանիէլ եպիսկոպոսի իշխանութիւնը կոչւում էր գործակալութիւն մեծի դատաւորութեան։ *Հայաստանում և Իրանում հոգեւորականութեան միջամտութիւնը քաղաքական գործերի մէջ և նրանց մեծ ազդեցութիւնը մեկնաբանւում է մասամբ նրանով, որ նա հանդէս էր գալիս որպէս արդարադատութեան մարմին։*

Այրուձիու հրամանատարութիւնն էլ տէսիպպու, *կազմում էր առանձին ընտանիքի սեփականութիւնը, բայց որի, յայտնի չէ՝ ցուցմունքներ չլինելու հետեւանքով։ Հայերի զօրքը կազմուած էր գըլխաւորապէս այրուձիուց և գտնւում էր սպարապետի հրամանատարութեան տակ։ Ըստ մի քանի տուեալների՝ Իրանում այրուձին գըտնըւում էր Սպանդիատի տոհմի ձեռքին։* 1)

---

1) Իրանական ժողովրդական վէպի մէջ Սպանդիատը՝ Վշտասպի որդին՝ յայտնի է՝ իւր ժողովուրդների վերայ տարած իր յաղթանակներով։ Նրան է վերագրւում Ալանաց դռների կառուցումը եւ *«երկաթէ քաղաք»* ամրոցի գրաւումը։ Նրա սխրագործութիւններին է նուիրուած *Paikar nama* գիրքը։ Անկասկած է, որ նա ինքն էր քաջ Սպանդիատը, որի մասին բարբարոսները պատմում էին *«հասեալ պատերազմաւ մինչեւ ցայս վայր, ցցեալ զնիզակն իւր ի գետնի»։* Մ. Կաղանկատուացին նմանեցնում է նրան, ինչ որ Տանգրի—խան աստծու հետ, որին Հոները ձիեր էին զոհաբերում. *«Հսկայի, ումեմն վայրագի անճոռնւոյ ծիախոռով զոհիւք պաշտօն մատուցանէին՝ կարդալով զնա Թանգրի–խան աստուած, զոր Պարսիկք Ասպանդէատ կոչեն... Ասպանդէ «ատ» այ ումեմն վայր հսկային ծիովի այրեցելովք զոհ մատուցանէք։»* Սպանդիատին մատուցուող զոհերը նրա պաշտամունքը մօտեցնում են կրակին, Ատրպատականի Ատր—Վշնասպի, Միհրանեանների պաշտամունքի հետ։ Սպանդիատը Արշակունեաց ծագում ունի եւ նրա մասին յիշում է Սեբէոսը՝ Արշակունի Զուբինի մասին խօսելիս։ Ձիերի զոհաբերութիւնը խորհրդանիշ չէ արդեօք Սպանդիատների տոհմի որպէս այրուձիու հրամանատարի։ Այս անունը իր աւելի հնագոյն ձեւով *Սպանդարատ՝* *Spanda-dara* մենք հանդիպում ենք Կամսարականների ընտանիքի մէջ։ Կարելի է արդեօք այս հիմունքներով եզրակացնել նրանց ազգակցութեան՝ արիւնակցութեան եւ անուան մասին Սպանդիատների հետ։

Տօն Օպլօն Կայսէս Պոլէմիքէս էսթէտոս-ի վարչութիւնը համապատասխանում է մեր ժամանակի համբարակային վարչութեան — էնտինդանտութեան և ըստ երեւոյթին կապ ունի մարդպետական տոհմի հետ։ Պատմական յիշատակարանների մէջ մատնանշւում է նրանց բարձր դիրքի մասին քրիստոնեայ Արշակունիների պալատում, սակայն նրանց գործառնութեան մասին ունեցած մեր պատկերացումները շատ մթագին են և այս խնդրի մասին մեր տեղեկութիւնները շատ խառնաշփոթ։

Վերը մեր բացատրած՝ մարդպետ *տիտղոսի ծագումը մոռացուած էր գրերի գիւտի ժամանակ։ Թւում է, որ նա արտաքնապէս, կազմըւած է հայերէն* մարդ *բառից, և այս սխալ զուգադիպումն խանգարեց խորանալու նրա պաշտօնի էութեան մէջ։ Մ. Խորենացին մարդպետին նոյնիսկ չի յիշատակում և անկեղծօրէն խոստովանում է, որ իրեն ոչինչ յայտնի չէ* հայր *իշխանական տոհմի մասին։ Մարդպետը տոհմական իշխանական տիտղոս է և ընդհանրապէս որեւէ կապ չունի պաշտօնի հետ։ Իշխան մարդպետը ըստ պաշտօնի կոչւում էր թագաւորի հայր,* մարդպետ որ անուանեալ կոչէր ըստ գործոյն հայր թագաւորին, *ուստի և* մարդպետութիւն եւ հայրութիւն *գործ են ածում որպէս նոյնանիշներ։ Իրականութեան մէջ ինչ է նշանակում բարձըբազդորդ այս անունը՝ անյայտ է։ Գիտենք միայն, որ մարդպետի պարտաւորութեանց շրջանակի մէջ մտնում են արքայական գանձերի և ամրութիւնների կառավարչութիւնը, ուր պահպանւում էին նըրանք և որ «այդ գործունէութիւնը և հայր կոչուած մարդպետութիւնը հնուց անտի ներքինների իրաւունքն էր»։ Յաւակնութեամբ լի մարդպետ անուանումը ցոյց է տալիս, որ նա աւելի մօտիկ կապակցութիւն ունի արքայական պալատի հետ։ Որպէս ներքիններ՝ մարդպետներին էր յանձնուած թագուհու պաշտպանութիւնը* 1)։ *Թը-*

---

1) Զինուորական ցուցակի մէջ ճիշտ նշուած են մարդպետի երկու գործառնութիւնը, *մարդպետական որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուց։* Ներսէսի *Վարքի* մէջ գանձերի պահպանումն վերաբերում է սենեկապետի պարտականութեան։ *Ներսէս լինէր սենեկապետ ի վերայ ամենայն գանձուց նորա։* Փաւստոսի համապատասխան մասում խօսւում է միայն այն մասին, որ Ներսէսը որպէս սենեկապետ պահում էր արքայական սուրը մարգարտազարդ գօտիից կախուած՝ թագաւորի գլխավերեւը կանգնած։ Վարքի մէջ այս մասը կարդացւում է՝ *զարքունական մատանին,* որ աղճատումն է Փաւստոսի *զարքունական=սուսերն ոսկի=պատեանն խօսքի։* Ուշադրութեան առնելով՝ Մարդպետի խօսքերը՝ *զտեղիս արքունի սենեակ կազմեցից,* Փաւստոսի մօտ, կարելի է կարծել, Մարդպետը կապ ունի *սենեակի* հետ։

ւում է, որ նրանց էլ պատկանում է վերահսկողութիւնը արքայական հանդերձատան։ Որոշած լինելով սպաննել Գղակ մարդպետին՝ Պապը հրամայում է հագցնել նրան չափազանց անհամաչափ լայն զգեստներ, տանել նրան տուն պատմուճակաց և այնտեղ գլխատել։ Եթէ հանդերձատունը գտնւում էր Գղակի գործավարութեան մէջ, ուստի և նրա տիրոջ. վարիչի սպանութիւնը՝ այդ տան մէջ աւելի վիրաւորական պիտի համարուէր, որ եւ հետապնդում էր թագաւորը։ 1)

Գուցէ եւ *սենեկապետ* գանձերի պահպանման պաշտօնի անունն է, եւս առաւել, որ Փաւստոսի մօտ *գործակալութիւն սենեկապետ* հասկացւում է շատ լայն որպէս՝ *հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեան ի ներքոյ եւ արտաքոյ։*

1) Փաւստոսը ծանօթ է մարդպետների տոհմի մի քանի ներկայացուցիչների։ Տիրանի ժամանակ ապրում էր *այր մի անօրէն որ ունէր զպատիւ մեծի մարդպետութեան, այր ներքինի, որում եւ հայր կոչէին։* Նոյն ինքը Ներսէսի շախմբի մէջ էր *զհայր մեծ իշխան մարդպետութեան*, զոր սպանեց Շաւասպ Արծրունու ձեռքով։ Միւս մարդպետը Արշակի գերութիւնից յետոյ մտաւ Արտագէրս ամրոցը եւ վիրաւորանք հասցրեց թագուհուն. *եմուտ զաղտ ի ներս ի բերդն հայր մարդպետ ներքինին եւ թշնամեաց զտիկինն։* Նա սպանուեց Մուշեղ Մամիկոնեանի ձեռքով եւ նրա փոխարէն նշանակեցին *ի տեղի հայրութեան մարդպետութեան զ (Դ) գղակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հօրն նորա զամու միոջ լեալ նոյն գործ մարդպետութեանն։* Նա էլ գլխատուեց Պապի օրով՝ Իրանի թագաւորի կողմն անցնել փորձելիս։ Նա Մուշեղի համախորհրդակից էր՝ *հայր մարդպետ*, որ յիշւում է Ներսէսի մահուան ժամանակ։ Ապա Արշակի ողբերգական մահուան պահուն հանդէս է գալիս նաեւ մէկ ուրիշ մարդպետ՝ Դրաստամատը

Նրանցից իսկական պատմական անձ՝ Գղակն է, որ լաւ յայտնի է Ամմիանին։ Գղակը սպանուեց իր գործակցին Արտաւանի (= Փաւստոսի Մուշեղի) հետ՝ Իրանի թագաւորի ներշնչումով։ Ըստ Փաւստոսի Մուշեղը Գղակից յետոյ խորհեց անցնել կայսեր կողմը եւ *հայր մարդպետի* հետ համախոհ էր: Իրականութեան մէջ նա ոչ այլ ոք է եթէ ոչ նոյն ինքը Գղակը: Ամմիանի համաձայն էլ Գղակը եւ Արտաւանը դիմեցին Վաղենտիանոս կայսեր օգնութեան որ եւ նրանց կործանման մատնեց։ Ըստ Ամմիանի Արտագէրս ամրոցում փակուած Փառանձեմ թագուհու հետ բանակցում էին Գղակը եւ Արտաւանը։ Նրանք գործում էին Իրանի թագաւորի համար, բայց բանակցութեանց ժամանակ խղճահարուեցին անօգնական կնոջ վերայ եւ փոխեցին իրենց միտումները։ Հետեւապէս Փաւստոսի մօտ յիշուած այս մարդպետը, որ վիրաւորանք հասցրեց թա-

Մատնանշուած պաշտօններով չէր սպառւում Արշակունեաց պետութեան պաշտօնեաների, ծառայութեանց շարքը։ Այդ պաշտօնէութիւնը նկարագրելու նպատակն այն էր, որ ապացուցուի պետական կառուցուածքի նմանութիւնը Իրանի և Հայաստանի Արշակունիների մօտ։ Հողերի և պաշտօնների բաշխման սովորութիւնը Հայաստանում էլ պիտի հասցնէր այն հետեւանքներին, ինչին հասցրեց Իրանում՝ ընկերային այնպիսի միութիւնների ստեղծման, որոնք ըստ իրենց գիրքի, դրութեան նման էին տեղական իշխաններին, որպէս հողային սեփականատէրերի, բայց տարբեր էին նրանցից՝ իրենց ծագումով։ Իրանական Արշակունիները այդպիսի դրութիւն ստեղծեցին իրենց ազգակիցների համար. իսկ հայ Արշակունիները, գոնէ քրիստոնէա-

---

գուհուն Արտագէրս ամրոցում միեւնոյն անձն է Գղակի հետ: Փաւստոսը հաւաստիացնում է, որ Գղակը երբեմն Արշակի ժամանակ եւ նոյնիսկ Տիրանի օրով մարդպետի նոյն պաշտօնն էր վարում. այս հաստատում է նաեւ Ամմիանը, ըստ որի Գղակը եւ Արտաւանը փախստականներ էին Հայոց թագաւորից եւ ապաստանած Շապուհի մօտ։ Այս պարագան մղում է մեզ նոյնացնելու Գղակին առաջին մարդպետի հետ՝ Տիրանի ժամանակներում ապրող։ Ոչ Շաւասպ Արծրունին, ոչ էլ Մուշեղ Մամիկոնեանը ոչ մէկ մարդպետ չեն սպանել: Այս զուտ դաստիարակչական տարրն է Փաւստոսի պատմութեան մէջ՝ յանցանքը պատժելու նպատակով արուած: Արծրունիների տոհմի կոտորածի պատճառով մարդպետը սպանւում է Շաւասպի ձեռքով, որ միակ ազատուածն էր Արծրունիներից: Իսկ Հայոց թագուհուն հասցրած վիրաւորանքի համար՝ նրանից վրէժ է լուծում Մուշեղը։

Դրաստամատի մասին էլ Փաւստոսն ասում է, որ նա ծառայում էր Տիրանի մօտ։ Կարելի է կարծել, որ Գղակի փախուստից յետոյ՝ նրա տեղը բռնեց Դրաստամատը։ Ամմիանը ոչինչ չգիտէ Դրաստամատի մասին եւ Արշակը մեռնում է ըստ նրա՝ դահճի ձեռքով։ Դատելով Durast amat անունից՝ *ճիշտ ժամանակին եկաւ*, Դրաստամատը աւելի շատ հէքիաթային անձ է, որ ստեղծուած է Արշակի ողբերգական վախճանը զարդարելու համար։

Առաջին երկու մարդպետներին փաւստոսը *հայր* է կոչում, որ կարելի է ընդունել որպէս յատուկ անուն կամ կոչում։

Մեր մեկնաբանութիւնը՝ նոյնացնելու նրանց Գղակի հետ՝ հարցը լուծում է յօգուտ այն բանի, որ *հայրը* կոչւում է։ Նոյն մեկնաբանութեան հետեւանքով կապուած է առաջ գալիս այն մասին, որ մարդպետները ներքինիներ էին։ Իսկ Գղակը ներքինի էր: Ամմիանը նրան անուանում էր spado։ Նրա դէմքը չորս անձերի բաժանումը՝ այս պատմական յատկանիշը՝ փոխադրուել է մարդպետների վերայ։

կան շրջանում՝ առաջ էին քաշում գլխաւորապէս տեղական ազնուականութեան ազդեցիկ ներկայացուցիչներին: Հաւանական է, որ ըսկիզբը նրանք էլ առաջնութիւնը տուած լինեն իրենց մօտիկներին։ Թէ այս և թէ միւս դէպքում մէկ նոր բան էր մուծւում տեղական իրաւակարգի մէջ. կամ տոհմական ազնուականութիւնը ստանում էր պաշտօնական մարմնի երանգաւորում, կամ ստեղծւում էին նոր ազնուական տներ, որ իր իրաւունքների ծագումով տարբերւում էր տեղական իշխաններից։

Այս նորը արտայայտւում էր համապատասխան բառով, տերմինով, որ Նախարարն էր։ Դժբախտաբար այս բառը դեռեւս ստուգաբանական վերլուծութեան չի ենթարկուել։ Սկիզբը, հաւանօրէն նա նշանակել է շրջանների կառավարիչներ, reectores։ Որպէս ընկերային գաղափար նախարարը հաւասարազօր է իրանական շաթրդարին։ 1)

Համապատասխան հողային միաւորը՝ Նահանգ՝ հաւասար է շահրին։ Հաւանական է, որ ազատ բառը նշանակէր նախարարի որդի։

Նոր բառերը գործածութիւնից չհանեցին հներին, որովհետեւ նրանց արտայայտած գաղափարները ոչ թէ փոխարինեցին նրանց, այլ պահեցին իրենց գոյութիւնը հների հետ միասին։ Նոր յարաբերութեանց մէջ տոհմական հին տերմինները ենթարկուեցին որոշ հարթեցման։ Բոլոր տերմիններից, որոնց տակ յայտնի էին տոհմապետները՝ տէր դարձաւ գերակշռող, միւսները կամ կորան, կամ մասնակիանալով, մեկուսանալով, մնացին այս կամ այն տոհմի մէջ որպէս ժառանգական տիտղոսներ։

Տէրը դարձաւ տեխնիկական բառ իշխանական տոհմերին, պետերին կամ աւագ անդամներին նշող։ Ձեւաւորման հարթման ենթարկուեցին և այն արտայայտութիւնները որոնք ցոյց էին տալիս տոհմի ներեխաներին կամ որդիներին։ Սեպուհը իւրացուեց բացառապէս իշխանական ընտանիքի կողմից, իսկ միւս բառերը պահեցին իրենց սկզբնական սովորական, հասարակ իմաստը։ Այսպէս տուն տերիտորիալ արտայայտութիւնը դարձաւ մասնագիտական բառ ցոյց տալու համար համապատասխան հողամասի գաղափարը։

Այս ձեւով տոհմական կարգի տէր, սեպուհ, տուն գաղափարների հետ առաջացան Նախարար, ազատ, Նահանգ վարչական կարգի գաղափարներ։ Տոհմական աւանդութիւններն այնքան ուժեղ էին, որ ինչպիսի նոր յարաբերութիւններ էլ որ ստեղծուէին, նրանք պէտք է կաղապարուէին նրանց շրջանակի մէջ։ Այս պատճառով էլ աղբիւրների, յիշատակութիւնների մէջ տէր և նախարար, սեպուհ և ազատ, տուն և նահանգ՝ յաջորդում են իրար որպէս հաւասարարժէք գաղափարներ։ Որքան պետականութեան սկզբունքը ուժեղանում էր, նախարարը ստանում էր գերակշռութիւն իշխանի, ազնուատոհմի իմաստով, իսկ տէրը դառնում է ոչ բնորոշիչ արտայայտութիւն տիրոջ, տանուտիրոջ համար։ Նրբերանգելու համար իշխանական տան պետերին, աւագ անդամներին անհրաժեշտ համարուեց երկրորդական կարգի արտայայտութիւններ՝ Նահապետ, տանուտէր՝ տէր և Նախարար բառերի փոխարէն։ Առաջին բառի ծագումը պարզ չէ, բայց երեւում է, որ նա էլ նահանգին այնպէս է վերաբերում, ինչպէս տանուտէրը տուն-ին։ Նոր գոյացումները պիտի փոխարինէին տէր և նախարարին իրենց սկզբնական իմաստով՝ թէպէտ և նրանք վերջնականապէս դուրս չարին գործածութիւնից տէր և նախարար-ին, բայց առաւելապէս գործ կ՚ածէին նրանցից առաջ բոլոր այն դէպքերում, երբ պէտք էր երանգաւորել տոհմի պետին:

Այսպէս է պատկերանում մեզ Հայերի ընկերային կեանքի ամենէն բնորոշիչ տերմինները իրենց պատմական յաջորդականութեան մէջ: Մեր պրպտումները մենք կատարեցինք ընդհանուր պատմական

---

1) Մինչեւ հիմա արած փորձերն անյաջող են։ Հ. Ինճիճեան, համեմատում է նախարարը լատին prae-fectus-ի հետ, ծագեցնելով այն հայերէն նախ եւ արար բառերից։ Այս մեկնաբանութիւնը ընդունում է նաեւ Էմինը՝ թեթեւ ուղղումներով։ Մառի առաջարկած ստուգաբանութեամբ նախ կամ նահ, կապուած նահանգի հետ, միեւնոյն ծագումն ունի արաբերէնի իրանական նահիէ բառի հետ, իսկ -րար-ը, շեշտումն է, փոփոխակը րադի, զենդական ratu-ի, տէր բառի։ Նշանաւոր իրանագէտ Անդրէասը ենթադրում է որ Նախարարը կապ ունի nohodares-ի հետ, որ Ամմիենի մօտ իրանական մէկ զօրահրամանատարի անունն էր։ Անկասկած է, որ բառի երկրորդ մասը՝ -րար ծագում է -դար-ից եւ ոչ թէ -րատու-ից։ Դժուարութիւնը առաջին վանկի մէջ է։ Այդ մեկնաբանելու համար պէտք է հաշուի առնել նախ-ը = առաջին՝ նահ-ատակ, նահ-անգ, իրանական նախ-ուստ, նահիէ զուգէ եւ նիխոր ական եւ ուրիշ բառերը: Պատմական ենթադրումները մղում են համեմատելու նախարարը շաթրադարի հետ: Այս պատճառով էլ ուշադրութեան արժանի է Մառի արած ենթադրութիւնը Նահ, Նահր, շահ-շահր բառերի կապակցութեան մասին: Համեմատել Նահ-ատակ եւ շահ-ատակ: Հետաքրքիր է, որ Եղիշէն Իրանի արքունիքի ազնուատոհմիկներին բաժանում է՝ վզրուկք եւ պատուական նախարարք դասի, որ համապատասխանում է buzurgan եւ շաթրադարան գաղափարին:

Ի նկատի ունենալով որ Նախարարի ստուգաբանութիւնը դեռեւս դուրս չի եկել կռահումների եւ ենթադրութիւնների շրջանակից, աւելորդ չի լինել յիշատակել եւ այն, որ Նահ հանելուկային խօսքը կարող է լինել da-nhiu բառի մասնաւոր ձեւը, ուր կորած է, ընկած է ըսկզբնական da-ն եւ որ Նահողարը կապակցւում է դա-ննուղարին այնպես, ինչպես Նահապետը՝ դա-ննուպատի-ն։

խորհրդածութեանց լոյսի տակ՝ բայց չշեղուելով այն իրականութեան տուեալներից, որ մեզ մատակարարում է պատմական գրականութիւնը։ Օգտուելով վերը բերուած համեմատութիւնից՝ կարող ենք ասել, որ ելակէտ ունենալով ուսումնասիրուող ծառի կատարը՝ մենք աշխատեցինք յայտնաբերել նրա արմատները այն ուղեցոյց թելերով, որոնք ընձեռնում են մեզ ծառի տեսանելի կամ մեզ մատչելի մասերը։ Ըստ այսմ ձեռք բերած արդիւնքները, մեր կառուցումը այնքան նշանակութիւն ունի, որքան ընդհանրապէս ամեն կառուցողական աշխատանք։

Այժմ մենք անցնենք մեր ուսումնասիրութեան նիւթի քննութեան գոյութեան այն փուլի մէջ, երբ գտաւ նրան Հայոց գիրը և որ մեզ հիմք ծառայեց ex silentio հին պատմութեան քննութեան համար նախորդ էջերում:

II

Արշակունեաց Հայաստանը Հայ պատմագիտական գրականութեան մէջ ներկայանում է մէկ երկիր, որ բաժանուած էր մի քանի տասնեակ իշխանական տերիտորեաների։ Իրաւաբանօրէն նոյնիրաւ, փաստօրէն նրանք միմեանցից տարբերւում են իրենց քաղաքական կշռով և թագի հետ ունեցած կախման աստիճանով։ Ամենէն անկախ իշխանութիւնները նրանք էին, որոնք տեղաւորուած էին սահմանագլուխներին և ամենից առաջ այսպէս կոչուած բդեշխներ, ապա Սիւնեաց, Մոքսի, Տայքի, Ծոփաց իշխանութիւնները։ Ներքին իշխանութիւններից առանձնապէս նշանաւոր հանդիսացան Մամիկոնեանները, Բագրատունիները, Մարդպետունիները, Արծրունիները, Խորխոռունիները և Կամսարականները։ Մնացած մեծամասնութիւնը մանր իշխանութիւններն էին, որոնք ըստ տոհմագրութեան և կալուածների մեծութեան կանգնած էին անհամեմատ վար և մեծ մասամբ ապաստանում էին հզօրագոյն իշխանութիւնների ազդեցութեան շրջանակում։

Ըստ կեցութեան բոլոր տերիտորեալ միաւորները համարւում էին հաւասար և կազմում էին տուն, որի գլուխը կանգնած էր տէրը կամ տանուտէրը և կոչւում էր տանուտէրութիւն կամ նախարարութիւն.

Տանուտէրութիւնը փակ միջավայր էր, օժտուած պետական կարգի առանձնաշնորհումներով՝ դատական—վարչական անկախութեամբ և գերագոյն իշխանութեան ուրիշ յատկանիշներով։ Սրանք իւրայատուկ փոքր պետութիւններ էին. նրանց իշխաններն էլ՝ արքայիկներ, մանր թագաւորներ։ Նրանց իրաւունակութեան սահմանը de facto կախուած էր այդ պահուն իրենց ունեցած ուժից։ Պատմաբանները յաճախ խօսում են մեծ սէնիորների, մեծամեծ աւագանի մասին և զանազանում են աւագ տանուտէրներին և նախարարներին կրտսերներից՝ հաւանաբար նրանց ունեցած ուժի կարողութիւնը ի նկատի ունենալով։ Տանուտէրութեան ընդհանուր կացութիւնը որոշւում էր իշխանների և թագաւորի իրական ուժերի յարաբերութեամբ և արտայայտւում էր երբեմն կենտրոնաձիգ, երբեմն էլ կենտրոնախոյս ուժերի, միտումների գերակշռութեամբ։ Հնարաւոր պարագաներում թագաւորները չէին քաշւում յանցաւոր իշխանների կալուածների բռնագրաւումից։

Մատնանշուած յատկանիշներով Հայաստանի քաղաքական դիմագծի այս ընդհանուր պատկերը՝ թւում է թէ բաւական է, որ նրա ներքին կառոյցը ազգակցուի այն կարգի հետ, որ յայտնի է աւատականութիւն անունով։ Քաղաքական մարմնի բազմագլուխ կմախքը պետական թոյլ միաւորումով, ահա ինչն է բնորոշում աւատական պետութիւնը։

Աւատականութեան դասական երկիրը՝ Ֆրանսիան՝ աւատական կարգերի ծաղկման դարաշրջանում՝ նոյնպիսի մէկ պատկեր էր ներկայացնում, ինչպէս Արշակունեաց Հայաստանը. երկիրը կտորակուած էր բազմաթիւ մեծ ու փոքր իշխանութիւնների մէջ. նրանք օժտուած էին զանազան աստիճանի պետական իրաւունքներով. ոմանք խստօրէն զարգացած աւատական միաւորներ էին, միւսները մեծ սէնիօրութիւններ էին նոյնպիսի իշխանութեամբ. և վերջապէս գոյութիւն ունէին մանր տիրապետութիւններ՝ սահմանափակ իրաւունքներով։ Գերիշխանութեան տեսակէտից բոլոր իշխանութիւնները բաժանւում էին երկու խմբի՝ խոշոր և մանր սէնիօրութիւններ, grandes seigneuries, petites seigneuries։ Առաջինները թւով մօտ քառասուն. օգտւում էին պետութեան յատուկ բոլոր իրաւունքներով, droits regaliens և կազմում էին զանազան գրաֆութիւններ, հերցոգութիւններ, դերկոմսութիւններ, duchés comtés, vicomtés։

Մանր սէնիօրութիւնները, որոնք բազմաթիւ էին և կազմուած էին դղեակատէրերից, երկրորդական vicomtés, vidamies, avoueries, չունէին քաղաքական այնպիսի նշանակութիւն և իրենց տէրերն էլ իրաւունքների սահմանափակման հետեւանքով՝ յաճախ չէին տարբերւում վասալներից: Արշակունեաց Հայաստանի աւատական նկարագիրը արտայայտւում էր ոչ միայն արտաքին քաղաքական դիմագծի մէջ. նմանութիւնը աւելի խորն էր և ընդգրկում էր նրանում գործող իրաւակարգի էութիւնը։

Աւատականութիւնը որոշ քաղաքական — ընկերային կառոյց է յատուկ ոչ միայն միջին դարերին։ Նա որոշ իմաստով մարդկային հասարակութիւնների զարգացման անհրաժեշտ փուլն է և նկատւում է տարբեր ժողովուրդների և քաղաքակրթական կեանքի տարբեր դարաշրջաններում։ Պատմական գիտութիւնը յայտնագործեց, որ աւատականութիւնը երեւան է գալիս վերընթաց և վայրընթաց կարգով, այսինքն կամ քաղաքակրթական կեանքի վերելքի ընթացքին կամ նրա անկման և քայքայման պահուն։ Այս տեսակէտից **ռոմանագէտների** և **գերմանագէտների** վէճերը՝ աւատականութեան ծագման մասին՝ դադարում են իրար մերժող, հակասող իմաստ ունենալուց։ Երկու կողմերն էլ ճիշտ են,նոյնիսկ իրենց միակողմանիութեան մէջ։ Անկման դիմող Հռոմէական կայսրութիւնն արդէն յայտնաբերում էր աւատական անկման երեւոյթներ։ Հռոմէականութեան յաղթանակող բարբարոսութիւնը՝ տոհմական կարգի քայքայման հետ զուգընթաց, որոնց մէջ նա գտնւում էր դեռևս հինգերորդ դարում, ինքն էլ բռնեց աւատականութեան ուղին։ Երկու գործողութիւնները՝ մէկը միւսից անկախ առաջնորդում էին միևնոյն հասարակակարգին։ Նրանց հանդիպումը և խառնումը գերման նուաճումներից յետոյ՝միայն բարդացրեց ծնուող հաստատութիւնների բնոյթը։

Աւատական կարգի ամենէն բնորոշիչ յատկանիշը՝ գիտունները ընդունում են **կոտորակումն** կամ **ցրումն** գերագոյն քաղաքական իշխանութեան։ Ըստ այս բնորոշման աւատականացումն տեղի է ունենում այն ժամանակ, երբ հողը, գերագոյն իշխանութիւնը և ընդհանրապէս պետական իրաւայարաբերութիւնները մասնատւում են բազմաթիւ շրջանային կառավարիչների մէջ և զարգանում են խմբաւորումները՝ մասնաւոր՝ փոխանակ ընդհանուր— պետական ենթարկման, հպատակութեան։ Ըստ այսմ նկատէտ հանդիսանում է խոշոր հողատիրութիւնը, որ կազմում է ամբողջ այս կառոյցի հիմքը և որից բըխում է նրա մնացած յատկանիշները։

Աւատական հողատիրութեան հիմքում ընդունում են հողի երկու տիպ. **ալլոդը**՝ հայրենական հողը և արքայական **բենեֆիսիան** հողաշնորհումն։ Վերջին հողատիրական տիպից, ինչպէս ենթադրում են, առաջացաւ աւատը, ֆէոդը, որից՝ ամբողջ սիստէմը ստացաւ իր անունը: Feodum կամ *fief* բառը յիշատակարանների մէջ հանդիպում ենք Ժ դարից ոչ առաջ։ Սկիզբը գործ էր ածւում բենեֆիսի իմաստով և նրա հետ համահաւասար, բայց յետոյ դուրս արեց նրան գործածութիւնից ԺԱ. դարի սկզբից։

Հէնց այդ ժամանակից ֆէոդ, աւատ սկսեց նշանակել այն հողը, որից օգտուելը պայմանաւորւում էր զինուորական ծառայութեամբ, ըստ որում ֆէոդը, աւատը բենեֆիսից տարբերւում էր, ըստ հետազօտողների նրանով, որ նա տրւում էր որպէս ժառանգական տիրապետութիւն, մինչ բենեֆիսիան միայն ցկեանս օգտագործման համար։

Ինձ թւում է, որ աւատի, ֆէոդի ծագումը և նրա՝ բենեֆիսիայի հետ

ունեցած յարաբերութիւնը ոչ բոլորովին ճիշտ է մեկնաբանւում աւատականութեան ուսումնասիրողների կողմից։ Feodum, *fief* բառը, թէպէտ և փաստաթղթերի մէջ երեւան է գալիս տասներորդ դարում, բայց անկասկած է, որ նա աւելի հին ծագում ունի։ Աւատական գաղափարների և տերմինների վերլուծման ժամանակ պէտք է զատորոշել հռոմէական և գերմանական նախադրեալները։ Ֆէոդը, ինչպէս և ալլոդը՝ գերման կեանքի արդիւնք են, ստացուածք։ Հռոմէական իրականութեան մէջ նրանց համապատասխանող գաղափարն էր **Լատիֆունդիան** և **Բենեֆիցիան**, որպէս ընկերային գործոններ՝ հաւասարազօր առաջիններին։

Ալլոդները որպէս հայրենական կալուածներ՝ ժառանգական հողեր՝ ազատ ամեն մէկ պարտաւորութիւններից՝ իրենց ծագումով հասնում են հողային այն տիրապետութեանց, որոնք երբեմն պատկանում էին համայնքներին, իսկ յետոյ նրանց քայքայումով անցաւ նրանց պետերի, աւագների ձեռքը, կամ այն ուժեղ մարդկանց, որոնցից կազմուեց յետագայ ազնուական դասը: Իսկ ֆէոդը, ամենայն հաւանականութեամբ, սկզբնապէս, հակառակ ալլոդին, մատնանշում էր այն հողը, որ ենթակայ էր հարկի,հողատուրքի և որոշ պարտաւորութեանց։ Եթէ ալլոդը՝ իր բառային կազմով՝ all — բոլորը և od — կալուածք, ցոյց է տալիս՝ նրա լրիւ, ամբողջական սեփականութեան բնոյթ,(կամ աւելի ճիշտ ամբողջ տոհմի կամ համայնքի սեփականութիւն լինելը), ապա *feodum*՝ *fief*= *fich* և od բառերից, ուր *fich*=գերմ. *vich*=միևնոյն արմատն ունի լատինական pecusի հետ և նրա նման էլ նշանակում է pecus և pecunia, ու բնորոշում է հողերի որոշ տեսակ՝ նրա բերած pecuniaի հասոյթի տեսակէտից։ Այս լուսաբանութեամբ ֆէոդը, աւատը կարող էր նշանակել և ցենզիվա և բենեֆիս նայած պարտաւորութեանց բնոյթին, որին նա ենթակայ էր։ Սրանով մեկնաբանւում է այն, որ աւատական դարաշրջանում, երբ ֆէոդը դարձաւ ժառանգական բենեֆիցիա, Ֆրանսիայի մի քանի վայրերում ֆիէֆ նշանակում (նաև ցենզիվա՝ terres roturières՝ ռամկական, հասարակ ժողովրդի հողաբաժինը։ Սկզբից և եթ ֆէոդին յատուկ էր ժառանգական լինելը։ Ժ դարում մենք հանդիպում ենք perpetuum beneficium արտայայտութիւնը, որ ցոյց է տալիս, թէ բենեֆիսիալ հողերի զարգացումն էլ գնում էր ժառանգական դառնալու ուղիով. շատ հաւանական է, որ այս պարագան էլ պատճառ դարձաւ բենեֆիսի ձուլման, միաւորման ֆէոդի հետ և նրա չքացման։

Աւատական կարգի բնորոշիչ գիծն այն է, որ հողային յարաբերութիւնները սերտօրէն հիւսւում են անհատների մէջ եղած յարաբերութիւնների հետ։ Հողը ոչ միայն հարստութեան աղբիւր է դառնում, այլ մարդկանց վրայ իշխելու միջոց: Ազատ հողերի տէրը դառնում է սէնէօր, իսկ աւատառուն՝ աւատատէր կամ սէնէօրից կախուած՝ վասալ։ Ենթարկումի այսպիսի ձևը՝ նորէն իր արմատներն ունի գերմանական և հռոմէական անցեալի մէջ: Հռոմէացիների մօտ, յատկապէս նրա անկման շրջանում, գոյութիւն ունէին պատրոնատութեան, հովանաւորութեան և կլիէնտութեան զանազան ձևեր. գերմանացիների մօտ յայտնի էին սէնէօրները, գասինդները, վասսերը, այսինքն ուղեկիցները կամ զօրախումբը, որոնք կազմուած էին սէնէօրին նուիրուած մարդկանցից: Սէնէօրին արած ծառայութեան համար, նրանք օգտւում էին նրա հովանաւորութիւնից: Այս ծառայութիւնը տարբերւում էր կախման այն ձևից, որ հաստատուեց աւատական դարաշրջանում։ Ծառայութիւնը, ի բաց չառնելով և զինուորականը, հնարաւոր էր նաև առանց հողային վարձատրութեան և ցոյց կախման այսպիսի ձևն էր, որ կարող ենք կոչել վասալական։ Բայց աւատական կարգի վասալութեան էութիւնը կազմում է հողի համար արուող ծառայութիւնը և գլխաւորապէս զինուորական ծառայութիւնը։ Հողատիրութեամբ պայմանաւորուած այս ծառայութեան մէջ է կայանում անձնական կախման աւատականացումն։

Այսպէս ուրեմն ալլոդը և լատիֆունդիան ընկած էին ազատ կամ սէնէօրական կալուածատիրութեան հիմքում, իսկ ֆէոդը և բենեֆիցիան՝ պայմանական կամ աւատական։ Սէնէօր — սուզէրէնը ընկերաբանօրէն ծագում էր գերմանական սէնէօրից և հռոմէական մագնատից, իսկ վասալը՝ vassi-ից և clientes-ից։

Հիմնական տարրերը, որոնցից կառուցւում էր աւատական կարգը գոյութիւն ունէին նաև Հայաստանում: Ամեն բանի հիմք կազմող հողատիրութիւնը, ոչ միայն իր տիպով, այլև մասամբ իր ծագումով՝ շատ բաներով նման էր աւատականութեան։ Հայերն էլ տարբերում էին հողերի երկու տեսակներ՝ հայրենիք եւ պարգեւականք, այսինքն հայրենական հողեր և բենեֆիցիա։ Բացի դրանից յիշատակւում է նաև քսակագինք, այսինքն գնումով ձեռք բերուած հողեր։ Այսպիսի հողեր կային նաև արևմուտքի աւատական աշխարհում և հանդէս են գալիս 12րդ դարից։ Սակայն հողային անշարժ սեփականութեան գլխաւոր տիպերը ինչպէս արևմուտքում, այնպէս էլ Հայաստանում՝ հայրենիքը և պարգեւականք հողերն են։

Մերովինգեան դարաշրջանի ալլոդները, որպէս հողային հարստութեան մէկ տիպ՝ միանգամայն համընկնում էին հայկական հայրենիքի հետ։ Երկուսն էլ հայրերից են ստացուած, հայրենական ժառանգական հողեր են, որ անցնում են սերունդից սերունդ կատարեալ սեփականութեան իրաւունքով: «Հայրենիք» ընդհանուր անուան տակ հասկացւում է իշխանական տոհմերի տիրապետութիւնը, որի միաւորը համարւում է տունը։ Գրականութեան մէջ այս տները պատկերացնում են սէնէօրական գծերով. նրանք կազմում են տէրութիւն — պետութիւն: Այսպէս էլ աւատական dominium-ը որպէս ալլոդիալ հողատիրութեան միաւոր՝ ընկած է սէնէօրութեան հիմքում։

Ինչ վերաբերում է պարգեւականք հողերին, ապա գուցէ այս տերմինը պատմաբանի մօտ՝ Փ. Բիւզանդի — ցոյց է տալիս փոքր հողամասեր, գիւղեր և գիւղակներ, որոնցմով վարձատրւում էին իշխանները այս կամ այն ծառայութեան համար։ Բայց աւելի հին ժամանակներում վարձատրութեան նիւթ ծառայում էին նաև աւելի ընդարձակ տերիտորիաներ։ Ինչպէս վերև մատնանշուած է, Արշակունեաց պատմագրի վկայութեամբ «իշխաններից շատեր եղան շրջանների, մեծ երկիրների, մեծ գիւղերի տէրեր շնորհիւ Արշակունեաց թագաւորների»։ Այս բառերը արդարանում են պատմաբանների մօտ բերուած չօշափելի փաստերով։

Մենք այն ենթադրութիւնը արինք, որ նահ-անգը պարգեւական հողերի հետ այնպիսի կապ ունի, ինչպէս տունը տոհմական կամ հայրենական հողերի: Նա միաժամանակ նաև վարչական միաւոր էր։ Նրանց տէրերը նախարարներն էին, ինչպէս տան գլուխը կանգնած էին տէրերը կամ տանուտէրերը, իսկ նրանց տիրապետութիւնը համապատասխան ձևով կոչւում էր տանուտէրութիւն։ Ըստ էութեան նախարարութիւնը ոչնչով չէր տարբերւում տանուտէրութիւնից։ Երկուսն էլ տերիտորիալ-քաղաքական միութիւններ էին՝ նման սէնէօրութեան՝ ըստ որում նախարարութիւնը կարելի է բաղդատել արևմըտեան comtés-ների duché-ների հետ, որոնք ծագել էին հռոմէական նախկին նահանգներից, իսկ տանուտէրութիւնները կարող ենք համեմատել ալլոդական սէնէօրութիւնների, alleux souverains-ի հետ:

Ալլոդների հոլովոյթը կատարուեց երկու ուղղութեամբ: Նրանցից ոմանք աստիճանաբար ընդարձակելով իրենց սահմանները՝ կազմեցին այնպիսի հողային ուժ, հարստութիւն, որ նրանց տէրերի համար դժուար չէր ձեռք բերելու քաղաքական իրաւունքներ այսպէս կոչուած իմմունիտէտի ուղիով։ Արքայական իշխանութիւնը նրանց էր յանձնում դատարանը. հարկերի հաւաքումը և հանրային իրաւունքի ուրիշ խնդիրներ ալլոդի շրջանակում։ Յաճախ նրանց էր յանձնւում պետական պաշտօններ ինչպէս օրինակ գրաֆութիւնները։ Ձեռք բերած իրաւունքները և առաւելութիւնները յաճախ դառնում էին ժառանգական։ Մտնելով քաղաքական ուղին, ալլոդները ձգտում էին սէնէօրութեան, և իրօք յետագայում բոլոր մեծ ալլոդները վերածուեցին սէնէօրութիւնների։

Ալլոդների մնացածը և մեծագոյն մասը հնարաւորութիւն չունենալով մեծանալու և՛ հողային և՛ քաղաքական տեսակէտից, ընդհակառակն իրերի բերմունքով, հարկադրուեցին կորցնելու իրենց իրատական բնոյթը, որպէս ազատ ժառանգական հողերի և մնացած բենեֆիցեալ հողերի տեսակին կամ պայմանական—ծառայութեան և հաւատարմութեան, ֆէոդին, աւատին։ Այսպիսի հողատէրերը դառնում էին վասալներ, աւատատէրեր աւելի մեծ, ուժեղ սէնիորներից կախուած։

Կարելի՞ է արդեօք երեւան բերել նման երեւոյթներ և գործողութիւններ նաև հայկական հողային յարաբերութեանց մէջ և ամենից առաջ ինչպէ՞ս որակել հայ իշխանական տների յարաբերութիւնը գահի հանդէպ՝ աւատական հասկացողութիւնների տեսակէտից։

Հայկական յիշատակարանների նկարագրութեամբ՝ իշխանները, նախարարները կամ տանուտէրները թագաւորի ծառաներն են, ծառայ։ Նրանց յարաբերութիւնը նրա հանդէպ ծառայութիւն էր։ Թագաւորը նրանց համար տէր էր, գերիշխան։ Ծառայ, ծառայութիւն տերմինները համապատասխանում են servitium և obsequium բառերին, որոնցմով նշւում է վասալների ծառայական յարաբերութիւնները սէնիորի հանդէպ։ Ինքը՝ վասալը ոչ այլ ոք է քան famulus ծառայ(*)։ Ծառայական, ծառայութեան կապը դուցէ հիմնուած է fides-ի վրայ կամ ֆէոդի, աւատի վրայ։ Հայոց յիշատակարանները պարզ չեն պատկերացնում խնդրի այդ կողմը։ Մի կողմից իշխանները պատկերանում են որպէս իրենց կալուածների կատարեալ տէրեր՝ այնպիսի անքակտելի իրաւունքներով՝ ինչպէս թագաւորը։ Միւս կողմից հազուագիւտ չեն դէպքերը, երբ թագաւորը բռնագրաւում է այս կամ այն իշխանի կալուածները յօգուտ արքունիքի կամ նրանց նուիրում է նոր կալուածներ։ Օտարացումի և շնորհումի իրաւունքը վերաբերում է dominium directum-ին, որով բնորոշւում է սէնիորի յարաբերութիւնը ֆէոդալի, աւատատիրոջ հանդէպ։ Արշակունիների մօտ իշխանական կալուածների բռնագրաւումը կարելի է դասել forfaiture իրաւունքի տակ, որ ունէին սէնիորները իրենց մեղապարտ վասալների հանդէպ։ Հայաստանում իրերի կացութիւնը աչքի չէր ընկնում կայունութեամբ, մէկ բան, որ յատուկ է աւատական միջավայրին։ Հայոց իշխանական կալուածատիրութիւնը աւելի շատ մօտենում էր աւատական այն ձեւին, որ աւատականութեան պատմաբանների մօտ կոչւում է fief seigneuries:

Պատմաբանները զանազանում են իսկական աւատները այնպիսիներից, որոնք թէև կոչւում են աւատներ, բայց իրենց իրաւական դրութեամբ որակւում են, մօտենում են սէնիորութիւններին։ Աւատների այս երկու տեսակները յենւում են աւատական կալուածատիրութեան երկու հակառակ սկզբունքների վրայ։ Մի կողմից աւատը համարւում է պայմանական կալուածատիրութիւն, որը յետ առնումի, զրաւումի ենթակայ է այն դէպքում, երբ տէրը խախտում է ծառայութեան երդումը, միւս կողմից աւատատէրը չցանկանալով այլևս ծառայելու տալով սէնիորին՝ իր կալուածով, հողով անցնում էր ուրիշ սէնիորի մօտ՝ ծառայութեան, այսպէս կոչուած կոմենդացիայի յանձնարարումի ուժով։ Նման անցումները, փոխադրումները ապացուցանում են, որ անցնողը հողի լիակատար տէրն էր և նա ազատ էր ծառայելու նրան ում որ ուզենար։ Նշանակում է այս դէպքերում աւատատիրոջ անձնական կախումը գերակշիռ էր՝ հողային կալուածական կախումից։ Սէնիորութեան այսպիսի ձեւը՝ յատկապէս նկատելի է աւատականութեան նախնական շրջաններում։ Նորագոյն պատմաբաններից մէկի կարծիքով գրաֆների և իշխանների տերիտորեալ գերիշխանութիւնը տարածւում էր միայն իրենց սեփական կալուածների վրայ. կալուածներից դուրս նրանց իշխանութիւնը գործադրւում, կիրառւում էր տերիտորիաների վրայ աւելի քիչ քան անհատների, որոնք կապուած էին նրանց հետ վասալական հաւատարմութեան երդումով։

Այսպէս կարելի է բնորոշել նաև Հայաստանում՝ թագաւորի յարաբերութիւնը իշխանների հանդէպ։ Նրանք աւելի շատ կրում են անձնական քան տերիտորեալ կախումի բնոյթ։ Թագաւորը այս կամ այն յանցանքի համար զրկում է իշխանին իր իշխանութիւնից, բայց այս պատիժը չի տարածւում նրա ժառանգների վրայ։ Պատժուած իշխանի մերձաւոր ժառանգը տէր է դառնում իր իրաւունքին, բռնագրաւած հողը վերադարձւում է նրան, որպէս նրա տոհմի՝ անքակ-

---

(*) Տեսնել Փաւստոս Բիւզանդը.— «Ապստամբեաց յարքայէն մի ի ծառայից նորա մեծ իշխան Աղձնեաց... զձարեկիր ծառայս իւր զիշխանն Կորդուաց, Ծովփաց... կար բդեաշխն Վաղինակ ի ծառայութեան արքային... մեծ ծառայն արքային Հայոց Մանաճիհր Ռշտունի...»։

Հայ իշխանները դիմում են պարսից արքային. «Զի զնա արտաքսեցին եւ նմա միամտութեամբ ծառայեսցին... Գտեալ իւրեանց զարքայն պարսից եւ կային ի ծառայութեան նորա. ծառայից գրել առ իւրեանց տէրն... զկաստակ եւ զհպատակութիւն, զոր ծառայիցն պարտ է առ իւրեանց տեարսն... ի ժամանակէ յորմէ հետէ կարգեալ ենք ի ծառայութիւնդ... ծառայն ձեր Վարդան (Մամիկոնեան)... ձեր արեաց տեառն աքքանեկութեան արժանի եղէ, ի մտի եղի... ձեր ծառայութիւն առնել... արքայից արքայի ի ծառայութենէ մի ելանէք... մեր բնիկ տեարք էք եւ մեք ձեր բնիկ ծառայք եմք... մեր բնիկ տեարք էք եւ հարցն մերոց եւ նախնեաց եւ մեք ծառայութեան առնեմք։ Եղիշէ—հարքն մեր.— կացին ի ծառայութեան փաստակն... եւ մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք... եւ այլն»։

տուլի, սեփականութիւնը: Ի դէպս Հայաստանում, ինչպէս ընդհանրապէս աւատական միջավայրում՝ ընկերային յարաբերութեանց կանոնաւորողը հանդիսանում է ոչ թէ իրաւական նորմերը, կանոնները, այլ իրական, չօչափելի ուժը և ըստ այնմ էլ յարաբերութիւնները դասաւորւում էին չափազանց բազմաձեւ։ Ինչպէս արեւմուտքում սէնիօրներից ոմանք իսկական պետութիւններ էին, որոնց համար թագաւորը, միայն աւատական պետ էր, գլուխ. ոմանք էլ օգտւում էին միեւնոյն իրաւունքներով աւելի պակաս չափով, բայց և այնպէս համարւում էին գերիշխաններ. սուվէրէններ։ Վերջապէս գոյութիւն ունէին զանազան երանգաւորումները՝ աւատներ ծառայութեան պայմաններով, կոմենդացիայի իրաւունքներով, այնպէս էլ Հայաստանում սահմանապահ իշխանները, այսինքն բդեշխները արքայիկների դիրքի վրայ էին դրուած. աւագ տանուտէրութիւնները փաստօրէն տէր էին անհամեմատ մեծ իրաւունքների, քան կրտսէրները և կային իշխաններ էլ, որոնց ստորադասութիւնը չափազանց խիստ էր։

Ըստ ընդունուած սխեմատիզացիայի աւատական սիստէմը կազմըւած էր անձնական և հողային կախումի երեք եղանակներից. ա. սէնիօրը և իր կալուածը կամ սէնիօրութեան մէկ մասը, որ գտնւում է նրա անմիջական շահագործման համար. բ. մի շարք վասալներ և նրանց աւատները կամ հողային մասերը, որ նրանց տուել է սէնիօրը. գ. ռամիկը, հասարակը և ցենզիվա կոչւող իրենց հողաբաժինները։

Առաջ աւատականութեան հիմնական գիծը համարւում էր պայմանական հողատիրութիւնը, աւատը. իսկ այժմ պատմաբանները առաջին գծի վրայ քաշում են անձի կոմենդացիան, յանձնարարումը հողի հետ միասին որով աւատական կարգի ծանրութեան կենտրոնը փոխադրում են սէնիօրութեան վրայ: Իսկապէս՝ կոմենդացիան չէ հակասում պայմանականութեան սկզբունքին։ Նա միայն նախապաշտպանում է աւատը ճորտացումից և պայմանական հողատիրութեան յատկանիշը մնում է աւատին. որովհետեւ աւատի տէրը՝ ուրիշ սէնիօրին անցնելով չի ազատագրւում ծառայութիւնից։

Աւատական յարաբերութեանց ամեն համակարգում կարեւորը և անկարեւորը տարբերելը՝ իւրայատուկ վերացութիւն է, տեսական կառուցում։ Իրական կեանքում այդ յարաբերութիւնները արտայայտւում են բազմատեսակ ինքնատիպ զուգադիպութեամբ և ձեւերով։ Պատմական ուսումնասիրութեան տեսակէտից արդիւնաւոր է, և երեւոյթներն քննարկել իրենց կոնկրէտ, չօչափելի բարդութեանց մէջ քան կանգ առնել այս կամ այն կողմի համեմատական կարեւորութեան վրայ։ Մենք աւելի ճիշդ տեսակէտի վրայ կանգնած կը լինենք, եթէ աւատական կարգի իրաւայարաբերութիւնները՝ բաժանէինք երկու մասերի՝ սէնիօրական և աւատական բառի իսկական իմաստով՝ համապատասխան աւատական հասարակութեան երկու կարգի մարդկանց՝ սէնիօրների և աւատականների և քննարկէինք նրանցից իւրաքանչիւրը առանձին։

Արշակունեաց Հայաստանը իր ամբողջութեամբ կարելի է դիտել որպէս մէկ մեծ սէնիօրութիւն, որի մէջ սէնիօրը Արշակունեաց տէրն է և վասալները՝ նրա իշխանութիւնը ճանաչող իշխանները. իսկ մնացած բնակչութիւնը՝ հասարակ ժողովուրդն է, գիւղացիութիւնը։ Նախարարութեան՝ թագաւորի հանդէպ ունեցած յարաբերութիւնից բխում է, որ նրանցից իւրաքանչիւրը այս կամ այն չափով կարող է հաւասարուել հասարակ սէնիօրին։ Ֆրանսիայի թագաւորութեան նըման, որ ամենից առաջ մէկ բարձրագոյն սէնիօրութիւն էր, Արշակունեաց թագաւորութիւն էլ մէկ խոշոր նախարարութիւն էր, իսկ նախարարութիւնները իրենց կողմից ջանում էին դառնալ Արշակունեաց տիպի փոքրիկ, մանրանկար թագաւորութիւններ, իրենց հողամասերում։ Հայկական միջավայրի սէնիօրութեան և աւատականութեան ուսումնասիրութեան ժամանակ անհրաժեշտ է նշել այն յատկանիշները, որոնք բնորոշում են նրան, անկախ այն հանգամանքից թէ նրանք արքայական իշխանութեան թէ նախարարութեան յատկանիշներն են։

Հայաստանի մէջ կեանքը աւելի շատ ենթարկւում էր բարքերին ու սովորութիւններին, քան օրէնքին. ուստի և իզուր է այստեղ որոնել յարաբերութեանց այն օրինաչափական կանոնաւորումն, որ նկատելի է արեւմտեան աւատականութեան մէջ։ Այն ինչ որ արեւմուտքում բանաձեւուած է որպէս իրաւաբանական վաւերագիր, Հայաստանում երեւան է գալիս սովորոյթի տարազի տակ։ Բայց այս մեզ չի խանգարում բաղդատել նրանց, որովհետեւ աւատական օրէնսդրութիւնը վաւերացնում է միայն այն փաստական կարգը, որ մշակում է կեանքը։

Այն ինչ որ Ֆրանսիայում կոչւում է seigneurie, Անգլիայում manor, և Գերմանիայում grundher rhaft, Հայերի մօտ կոչւում էր տէրութիւն կամ նախարարութիւն ու նահապետութիւն։ Ըստ այնմ էլ սէնիօրը կոչւում էր կամ տէր, տանուտէր և կամ նախարար ու նահապետ։ Մեզ հասած պատմական յիշատակարանների մէջ այս բառերը, տերմինները հետեւում են իրարու որպէս իրական, նոյնանիշ գաղափարներ, այն տարբերութեամբ միայն, որ հեղինակներից մէկի մօտ գործ է ածւում գլխաւորապէս նրանցից մէկը, իսկ միւսների մօտ՝ մէկ ուրիշը(*)։

(*) Փաւստոսը գործ է ածում՝ Նախարար, Նահապետ։ Տանուտէր

Տէրութիւնը կամ նախարարութիւնը քաղաքական գաղափար է, որին համապատասխանող տերիտորեալ գաղափարը տունն է, աշխարհը, գաւառը և այլն։ Այսպիսի տերիտորեալ միաւորի կենտրոնավայրը կազմում է ոստանը, որ նշանակում է բակ, բառացի՝ չէմք և համընկնում է արեւմուտքի սենիորական curtis dominicalis-ի հետ, ուրիշ ձեւով նա կոչւում է նաև գահ, գահոյք՝ նստավայրի, աթոռանիստի իմաստով(*)։ Արշակունիները ունէին իրենց սենիորութիւնը parexcellence. ինչպէս եկեղեցու պետը համարւում էր Հայաստանի կաթողիկոս, բայց Արարատեան եպիսկոպոս, այդպէս էլ Արշակունեաց թագաւորները Հայաստանի թագաւորներն էին՝ միաժամանակ և Արարատեան իշխաններ։ Իշխանական կալուածատիրութիւնից տարբերուելով նրանց կալուածները կոչւում էին արքայական, արքունի տուն, արքունի ոստան։

Որ տանուտէրութիւնը միայն հասարակ կալուածատիրութիւն չէ, այլ սենիորութիւն, այսինքն պետական կարգի երկրամաս՝ երեւում է նրա՝ թագաւորական իշխանութեան հանդէպ ունեցած յարաբերութիւնից։ Լաւ յայտնի է, որ տանուտէրական իշխանութիւնը ժառանգական էր տոհմի մէջ և անցնում էր մէկ անդամից միւսին աւագութեան կարգով՝ բոլորովին այնպէս՝ ինչպէս աւատական սենիորութեան մէջ(**)։ Չնայած սրան՝ գերագոյն իշխանութիւնը միջամտում էր նախարարական գահակալութեան մէջ։ Արշակունի թագաւորները և նրանց անկումից յետոյ էլ Պարսից թագաւորները մշտապէս հետեւում էին՝ թէ ո՞վ է ժառանգում տանուտէրական իշխանութիւնը։ Պատմաբանները պատմում են նաև այն մասին, որ թագաւորը նշանակում էր տանուտէրներին, կամ բաժանում էր տանուտէրական իշխանութիւնը(*)։ Ժառանգական խիստ կարգի գոյութեան

հանդիպում են հազուադէպ, միայն եօթն անգամ, ըստ որում երեք անգամ *նահապետի* հետ միասին. հազուագիւտ դէպքում հանդիպում են եւ *տէր*, տէրութիւն՝ սենիորական իմաստով։ Ղազար Փարպեցուն անծանօթ է *նահապետ*, նա գործ է ածում *տանուտէր*, *տէր*, *նախարար*։ Եղիշէն գերադասում է *նախարարը* եւ ոչ մէկ անգամ չէ յիշում *նահապետ* կամ *տանուտէր*։

(*) Որոշ շրջանում Արշակունեաց ոստան էր Վաղարշապատը. Կամսարականներինը՝ Երուանդաշատը. Արծրունիներինը՝ Ադամակերտը. Բագրատունիներինը՝ Դարոյնքը, Ռշտունիներինը՝ Ոստանը եւ այլն...։

(**) Եղիշէն նշում է ժառանգութեան կարգը՝ *զեղբարս կամ զորդիս կամ եղբարցն զորդիս*։ Աւագութեան կարգով ժառանգութիւն տեսնում ենք Մամիկոնեան տան մէջ՝ Փաւստոսի մօտ։ Խոսրով թագաւորի ժամանակ տոհմի *նահապետը* Արտաւազդի որդի *Վաչէն* էր։ Նրանից յետոյ իշխանութիւնն անցաւ նրա միակ որդուն՝ *Արտաւազդին, զի այլ յազգին ոչ գտաւ ծոծկու*։ Տիրանի օրով Մամիկոնեանների ներկայացուցիչներ երեւան են գալիս՝ *Արտաւազդը եւ Վասակը*։ Արշակը *կացոյց զՎարդան զերէց՝ եղբայրն ի նահապետութեան ազգին իւրեանց*. ուստի Վարդանը կոչւում է *Մեծ նահապետ Մամիկոնեան տոհմին*. ապա՝ *տանուտէր նահապետն Մամիկոնեան տոհմին երէց եղբայր Վասակայ*։ Վարդանին յաջորդեց նրա եղբայր Վասակը՝ *զիւրմէ տանուտեառն է Վասակայ*։ Վասակը միաժամանակ նաեւ սպարապետ էր։ Նրանից յետոյ *լինէր սպարապետ՝ նրա որդի Մուշեղը*, հաւանաբար նաեւ նահապետ էր։ Վարազդատը սպանեց Մուշեղին եւ սպարապետութիւնը յանձնեց Բաբու Սահառունուն եւ *ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր նահապետ կացոյց Վաչէ անուն ի նմին տոհմէ*։ Մանուէլի աքսորից վերադառնալուց յետոյ Վաչէն, *որ յառաջն լեալ էր նահապետ... ետ զնա զպատիւ իշխանութեան, քանզի նա էր երէց յազգին. եւ Մանուէլն ունէր զնահապետութեան ազգին տանուտէրութեան պատիւ եւ Վաչէ լինէր երկրորդ*։ Մանուէլին յաջորդեց իր որդի Արտաշիրը։ Արտաշիրի որդին հաւանական է, որ լինէր Սահակ կաթողիկոսի փեսան՝ *Համազասպեան*, որ ունէր երեք որդի՝ Վարդան, Հմայեակ եւ Համազասպեան։ Տանուտէրը, ըստ Փարպեցու Վարդանն էր, իսկ նրանից յետոյ միւս եղբայրների անժամանակ մահուան պատճառով՝ նրա ազգական՝ Վահանը։

(*) Ըստ Փաւստոսի Արշակը Վարդանին նշանակեց Մամիկոնեան տան նահապետ. Վարազդատը՝ Վաչէին։ Մանուէլը գերագոյն իշխանութեան տիրանալով *կացուցանէր նահապետս եւ տեարս գաւառաց գաւառաց*։ Ղ. Փարպեցու մօտ Մարզպանն ասում է.— *Ոչ զտէրութիւն զպատիւ հանեմք յումեքէ*։ Վասակի անկումից յետոյ, Պարսիկները նշանակեցին նրա թշնամի, ուրացող Վարազ-Վաղանին *տէր ի վերայ աշխարհին Սիւնեաց*։ Պարսից թագաւորն ասում էր, եթէ նա ընդունի մազդեզական կրօնը *իւրաքանչիւր ուրուք զտանուտէրութիւն տամ եւ զգահ եւ զպատիւ... ի պարսկաց զտանուտէրութիւնն գնեալ ուրացութեամբ... ցոյց ինձ այր մի... որ թէ առանձնաւ թագաւորութեամբ արժանաւորապէս հասեալ է ի տէրութիւն, այլ որեար աւազակ... ընդ կրակի փառս գնեն եւ տէրութիւն*։ Վահանը պայման էր դնում, որ *ումէք յաջագս մոգութեան գահ եւ պատիւ չտայք*։ Նա ինքը միջնորդում էր թագաւորին *շնորհել զտանուտէրութիւն Կամսարականին*, ինչ որ կատարուեց. *եղիցի վասն քո տուեալ զտէրութիւն Կամսարականին*։ Տանուտէրութեան նշանակման դէպքում ուշադրութիւն էին դարձնում մատուցած ծառայութեանց վերայ. մերժելով Վահանի նման միջամտութիւնը Արծրունեաց տոհմի նկատմամբ՝ թագաւորը մասպայմաններում, թւում է թէ՝ թագաւորի միջամտութեան կարիք չի պիտի լինէր և ատեաններ չկան, որ թագաւորը գործել է աւագութեան իրաւունքի դէմ։ Ակնյայտ է, տանուտէրական տեղերի նշանակումն ու բաժանումն, որոնց մասին գրում են պատմագիրները, պէտք է հասկնալ այն իմաստով, որ թագաւորը ընդունում էր կամ հաստատում էր օրինական ժառանգների իրաւունքը։ Եթէ տանուտէրութիւնը ունենար մասնաւոր—կալուածատիրական բնոյթ, ապա թագաւորի հաստատելը դառնալու էր աւելորդ։ Տանուտէրութիւնները ունէին կարեւոր գործառնութիւններ և տանուտէրի՝ իր իշխանութեան մէջ բարձրագոյն իշխանութեան հաստատումն նպատակ ունէր ապահովել նրա՝ պետութեան հանդէպ ունեցած պարտաւորութիւնը՝ վասալական ծառայութիւնը։

Աւատական աշխարհում վասալի մահով ընկնում էր, վերջանում նրա տիրապետութեան իրաւունքը։ Սէնիորը պէտք է նրան բարձրացնէր նոր վասալին յանձնելու համար և սովորաբար նա այդ իրաւունքը վերապահում էր մեռածի որդուն՝ ի նկատի ունենալով իր իսկ շահերը։ Հայաստանում թագաւորի կողմից տանուտէրի ժառանգի իրաւունքների ճանաչումը ընդհանուր երեւոյթ չէր։ Նա աչքի էր ընկնում բացառիկ կարեւորութիւն ունեցող դէպքերում։ Այս ճանաչումը նշանակում էր մուծել, ներս մտցնել կալուածի մէջ, որ արեւմուտքում ինվեստիդուրա էր կոչւում։ Ինչպէս յայտնի է ինվեստիդուրայի խորհրդանիշը արեւմուտքում կանաչ ոստն էր կամ հողը խորհրդանշող հիմի մէկ կտոր, ինչպէս և գլխարկ, կնքամատանի, դրօշակ և այլն. նայած թէ ինչն էր ընդունուած իւրաքանչիւր վայրում: Սրա նման մի բան նկատելի է նաև նախարարական կեանքում։ Մենք գիտենք, որ ամեն տանուտէր ունէր իր կնքամատանին, որ միաժամանակ ծառայում էր և որպէս կնիք. ամեն իշխանական տուն ունէր իր դրօշը, գլխարկը փոխարինուել էր կապով, հերակապով, պատիւը, որպէս մասը նրա հետ յարգարանքի։ Կապի և կնքամատանու մասին յայտնի են դէպքեր, երբ նրանք յանձնւում էին տանուտէրութեան մուծումի, յանձնումի ժամանակ, մէկ փաստ, որ նշանակալից է և տալիս է նրան ինվեստիտուրի բնոյթ(*)։ Այդպիսի նշանակութիւն ունէր անպատճառ և դրաւը(**)։ Վերեւը մենք առիթ ունեցանք յիշելու ճիւղի և պսակի մասին, որոնցով Պարսից թագաւորները պատւում էին Հայոց իշխաններին։ Ինչ իմաստ ունէին նրանք՝ չգիտենք։ Արեւմուտքում հողին շնորհման ժամանակ գերիշխանը յանձնում էր վասալին կանաչ ճիւղ կամ ճիմ որպէս հողը խորհրդանշող։ Ամենայն հաւանականութեամբ ճիւղի և պսակի նուիրումը Հայերի մօտ էլ ունեցել է նման խորհրդանշող նշանակութիւն։

Բացի այս յատկանիշներից հայկական տանուտէրութեան սէնիորական բնոյթի մասին մատնացոյց է անում այն հանգամանքը, որ տէրութիւն բառը՝ հին և սովորական յորջորջումն տանուտէրական իշխանութեան՝ յետագայում ստացաւ պետութեան իմաստ։ Միւս կողմից տանուտէրական հողամասը կոչւում էր աշխարհ, գաւառ, այսինքն որոշւում էր պետականութեան բնոյթ ունեցող տերմիններով։

Այս բոլորը հիմք են տալիս տանուտէրութիւնը համարել քաղաքական—ընկերային միութիւն՝ միջնադարեան աւատական սէնիորութեան ոգւով։ Ինչպէս էին ձեւաւորւում տանուտէրական իրաւունքները՝ այդ մասին տուեալներ քիչ կան։ Արեւմուտքում սէնիորական իշխանութիւնը ընդգրկում էր կեանքի ամենէն կարեւոր կողմերը։ Սէնիորը ունէր օրէնքներ դնելու իրաւունք, droit de bon և հրատարակում էր որոշումներ, constitutiones կամ assiseae, պարտադիր՝ նրան անմիջականօրէն ենթակայ հողերի սահմաններում։ Իսկ եթէ նրանք վերաբերում էին ամբողջ սէնիորութեան՝ իր մէջն առած և ֆէոդ—աւատներին, ապա ուրեմն պահանջւում էր վասալների համաձայնութիւնը, որի համար էլ հրաւիրւում էր խորհրդակցութիւններ՝ սէնիորի պալատում՝ euria plenaria։

Օրէնսդրական իրաւունք ունէր Հայաստանում նաև արքայական

նանում է այն բանը, որ անհրաժեշտ է սպասս ինչ արժանաւորապէս ցուցանել առ մեզ եւ վաստակս ինչ յօգուտ արեաց աշխարհիս վաստակել։ Ըստ Եղիշէի թագաւորը աստիճանազրկում է իշխան Գարեգինին հանեալ ի բաց զտէրութիւն ի նմանէ... Ամենայն հայրենի գաւառքն հատաւ ի նոցանէ... ետուր դմա զտէրութիւն Սիւնեաց։ Թագաւորը խոստացաւ տալ նոցա զիւրաքանչիւր իշխանութիւն ըստ կարգի պատւոյն... Ըստ Սեբէոսի Խոսրովը տայ Սմբատայ զտանուտէրութիւն. Նրա որդուն տայ զիշխանութիւն տանուտէրութեան։ Նրա որդի Սմբատ՝ն զորդի նորա զանդրանիկ կարգեաց արքայ ի պատիւ հարիւրոյ, տուեալ նմա զիշխանութիւն բնիկ տանուտէրութեան ասպետութեան(ասպետների տոհմի)։

(*) Փաւստոսի մօտ. ի հայրենի բարձ գահուն մատուցանէին... առաջի թագաւորին զհօրն պատիւ ի գլուխ դնէին... Առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին. Թովմա Արծրունի — տայ մատանի ի ձեռս Աշոտայ եւ տիրացուցանէ սեփական ժառանգութեան։

(**) Ըստ Փաւստոսի, ամեն նախարարական տոհմ ունէր իր դրօշը. նրանք պատկերացնում էին ի միջի այլոց՝ աղաւնի՝ աղաւնադրօշ = աղաւնաւ — դրօշ, աղաւնեակ՝ վարձնականիշ = վարուժանակ — անիշ արծիւ՝ արծուենշան։

իշխանութիւնը. այդպիսի իրաւունքներով, անկասկած օգտւում էին այս կամ այն չափով նախարարները կամ տանուտէրները։

Եթէ մեզ հասած յիշատակարանների մէջ յիշատակութիւն չկայ օրէնսդրական փաստերի մասին, ապա այդ մասամբ բացատրելի է այն բանով, որ կեանքը ղեկավարւում էր գլխաւորապէս անցեալի աւանդութիւններով և հարկադրական կարիք չէր զգացւում օրէնսդրական կարգաւորման։ Այս միջավայրում գործում էին աւելի շուտ բարք և սովորութիւնը՝ քան օրէնքը(*)։

Ամեն նախարար՝ աւատական սենիորի նման դատաւոր էր իր կալուածների մէջ(**)։ Արեւմուտքում ազդեցիկ իշխանները որպէս seigneurs justiciers, վասալների վրայ դատ էին անում։ Հայոց թագաւորը որպէս գերագոյն սենիոր օժտուած էր այդպիսի իրաւունակութեամբ իրեն ենթակայ իշխանների նկատմամբ(***)։

Միջնադարեան սենիորը վարում էր վարչական գործերը վասալների խորհրդի հետ միասին։ Գոյութիւն ունէին վարչական բազմազան մարմիններ, ministeria, որոնց ստեղծման մէջ սենիորները ընդօրինակում էին թագաւորներին։ Զանազան գրաֆների և հերցոգների պալատը արտացոլում էր արքայական պալատի կարգերը. Նրանք ունէին իրենց sénéchal-ները, chambrier-ները, connetable-ներ, bouteiller-ները, chancelier-ները, որոնք մնալով պալատական ծառայութեան մէջ, միաժամանակ վարչական գործեր էին կատարում՝ ստանալով այն որպէս fief—office։

Հայ Արշակունիների մօտ վարչական—կառավարական սիստեմը բաւականին բարդ էր երեւում։ Պաշտօնը կոչւում էր գործ, իսկ նրա կատարողը՝ գործակալ. այստեղից և գործակալութիւն՝ ministerium, office։ Պարսկական համապատասխան արտայայտութիւն էր քրտիկոր karta–kara=գործակալ։ Արշակունեաց թագաւորների պալատում հաշւում էին աւելի քան 900 գործակալներ։ Այս թիւը, որ պատմագիր Փաւստոսն է յիշում՝ անպայման չափազանցուած է(****)։ Գործառնութիւններից ամենէն կարեւորները նրանք են, որոնց քննարկեցինք վերը: Նրանք շատ ընդհանուր բաներ ունեն խոշոր սենիորների պալատի grands offices-ների հետ։ Ինչպէս արեւմուտքում, այնպէս էլ Հայերի մօտ գլխաւոր պաշտօնները իւրացուել էին ազդեցիկ ընտանիքների կողմից որպէս ժառանգական պաշտօններ։ Բարձր պաշտօնատարներից առաջին կարգի վրայ դրւում էին sénéchal և chancelier-ն: Առաջինը համարւում էր սենիորից յետոյ ըստ իր դիրքի ամենէն կարեւոր դէմքը սենիորութեան մէջ։ Նրա նշանակութիւնը հիմնուած էր գլխաւորապէս այն բանի վրայ, որ հրամայում էր բանակին. chancelier-ն էլ պալատական պաշտօն էր՝ բայց միաժամանակ վարում էր պետական հասոյթները և հէնց սրա մէջ էր նրա ազդեցութեան աղբիւրը(*)։

Սենեշալի և չանսելիեի գործառնութիւնը հիմնականում համընկնում էր հայկական պատասխանատու պաշտօնների՝ սպարապետութեան եւ հազարապետութեան հետ։ Հայաստանում, ինչպէս ամեն մէկ աւատական պետութեան մէջ՝ թագաւորին ենթակայ հողը մասամբ իշխանների ձեռքն էր, որոնք կառավարում էին իրենց հողաբաժինները մասամբ գիւղացիների օգտագործման ձեւով։ Ըստ այդմ էլ անհրաժեշտ էին ամենից առաջ երկու վարչութիւն. մէկը ի վերայ իշխանութեան, միւսը ի վերայ շինականութեան։ Իշխանների պարտաւորութիւնները գերիշխան թագաւորի հանդէպ զինուորական ծառա-

---

(*) Հայերէնում չկայ *օրէնք* գաղափարն արտայայտող բառ. գործ է ածւում փոխ առնուած Իրանական աւ-րէն բառը *daena*-ից:

(**) Հ. Ինճիճեանը իր «Հնախօսութեան» մէջ ճիշդ նկատում է, որ հայ յիշատակարանների մէջ մենք չենք հանդիպում թագաւորի՝ իշխանութիւնների ներքին կառավարութեան միջամտութեան դէպքերի եւ այստեղից էլ եզրակացութիւն է հանում նրանց անկախութեան մասին։

(***) Տեսնել Փաւստոսի մէջ յիշուած՝ Ռշտունեաց իշխան Դատաբէի օրինակը, որ գլխատուեց թագաւորի հրամանով դաւաճանութեան համար։

(****) Ըստ Փաւստոսի 900 մարդ նստում էր արքայական սեղանի շուրջը՝ չհաշուելով նրանց, որոնք մնում էին ոտքի կանգնած: Պարսկական աղբիւրներից յայտնի է, որ պարսից խոսրովներից մէկը հրամայեց պետութեան բոլոր կողմերից հաւաքել ամեն տեսակ մարդկանց եւ տեղաւորել նրանց որոշ կարգով խրախճանքի համար։ Ըստ այդմ պաշտօնեաների որոշ մասը բաժանւում է տեղաւորելու նրանց, սովորութեան համաձայն մշակուած կարգով: Խօսքը վերաբերւում է մեզ յայտնի *գահերի*. *գահնամակի* որոշման մասին։ Կարգի վրայ նստող մարդիկ, հաւանաբար հէնց նրանք էին, ըստ Փաւստոսի, որոնք մնացել էին ոտքի կանգնած՝ *ոտնկայս գործակալութեան սպասու*։

(*) *Լուշերը այս մասին գրում է՝*

Dans la plulart des Etats féodaux, la plus important des haut fonctionnaires est le sénéchal. Apres le duc ou le comte il est le souverain en second de la seigneurie, il dirige la justise et l'administration locale, commande l'armée... Le chancelier est un personnage non moine considerable: il est percepteur et collecteur perpetuel de tous les revenus de comté.

Luchere: Manuel des institutions
Françaises P. 262.

յութիւն մատուցանելն էր, հեծելազօրի մատակարարումն էր, ուստի և նրանց գլուխը կանգնած դէմքը՝ սպարապետն էր, բանակապետը։ Հազարապետն էլ վարում էր հարկատու բնակչութեան, գիւղացիութեան գործերը։ Գիւղացիական համայնքների ներքին կառոյցի մասին՝ ոչինչ յայտնի չէ. գիտենք, որ նրանք ունէին առաջնորդներ, դասապետ կամ գեղջաւագ, որոնց կարելի է համեմատել ֆրանսիայի doyens = decani և maiores-ի հետ։

Իշխանութեանց կառավարելու մասին նոյնպէս քիչ բան գիտենք. Նրանք հաւանաբար ունէին վարչական համապատասխան օրգաններ՝ ինչպէս թագաւորինը՝ համապատասխան իրենց իշխանութեան չափին և կշռին։

Մենք զանազանեցինք սէնիորական պարտաւորութիւնները աւատատէրերի կամ վասալների պարտաւորութիւններից։

Այս իմաստով աւատական յարաբերութիւնները ելակէտ ունէին hommage-ը և fidelitéն = hominium և fidelitas։ Նրանցով էր կարգաւորւում աւատատիրոջ կախումն՝ որպէս հող ստացողի՝ իր սէնիորից, որպէս հողի տիրոջից, այսինքն՝ l'engagement de vasselage·հաւատարմութեան և hommage-ի գաղափարից բղխում էին վասալական պարտաւորութիւնները, որ իրապէս խարսխում էր՝ հողի օգտագործման վերայ. Նրանք արտայայտւում էին գլխաւորապէս auxiliumի, consilium-ի՝ սէնիորութեան կառավարելու մասնակցութեան մէջ։

Աւատական պարտաւորութեանց հիմնական կէտերը նկատում ենք մենք նաև նախարարական կեանքում։ Hominium--homo բառից է և նրա մէջն է արտայայտւում, որ տուեալ դէմքը իրեն ընդունում է, համարում է սէնիորի homo-ն, մարդը, որ և ամրապնդւում էր երդումով: Թագաւորին՝ իշխանների կողմից տրուած հայկական ուխտը այն մասին, որ նրանք պիտի լինեն նրա հաւատարիմ ծառաները՝ նոյնանման փաստի արժէքն ունին: Ուխտին միանում էր երդումը, ըստ որում նրա խորհրդանշող արտայայտութիւնը աղն էր(*): Ուխտի ուժով մէկ կողմը իր վերայ վերցնում էր սիրութիւնը եւ հովանին, միւս կողմը հաւատարիմ ծառայութիւնը եւ հպատակութիւնը(**)։

(*) Մեհրուժան Արծրունին դաւաճանելով Արշակին միացաւ պարսից թագաւորին՝ դնէր ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա: Արշակ թագաւորը՝ խնդրէր հաւատարիմ երդումն ուխտիւ... եւ պարսից թագաւորը ետ բերել... աղ կնքել վարազ նկարագիր մատանեաւ: Սէբէոսի մօտ հանդիպում ենք ետ տանել աղ կընքել երդումն: Ըստ Եղիշէի Պարսից թագաւորը՝ խնդրէր վկայութիւն հաւատարմութեան եւ երդմամբ յուխտ մտանէր առաջ նոցա։

(**) Ղազար Փարպեցի՝ մեր առ ձեզ տէրութիւն եւ խնամակալութիւն եւ ձեր առ մեզ արդարութեամբ ծառայութիւն եւ հնազանդութիւն։

Վասալի զինուորական պարտաւորութիւնը կազմուած էր երեք տեսակ ծառայութիւններից։ Զինուորական ծառայութիւն service d'ost et chevauchée, սիւզերէնի ամրոցի պահպանումն էր և սեփական ամրոցի յանձնումն սիւզերէնի պահանջումով: Զինուորական ծառայութիւնը պարտաւորիչ էր և նախարարական միջավայրում: Արեւմտեան Եւրոպայի վասալների նման՝ հայ իշխանները պարտաւոր էին թագաւորի պահանջով՝ ներկայանալ նրան իրենց այրուձիով՝ մասնակցելու ռազմական ձեռնարկների մէջ կամ արշաւանքների hostis – պատերազմին կամ ասպատակութիւններին։ Զինուորական հրովարտակի՝ նախարարական այրուձիու ցուցակը մեզ գաղափար է տալիս նախարարութեան ռազմական ուժի մասին։ Արեւմուտքում առաջնակարգ բարոնութիւնները իրենց՝ սիւզերէնին մատակարարում էին մի քանի հարիւր ձիաւորներ, մի այլ ֆիէֆ՝ տալիս էր միայն մէկը, յաճախ մի քանի ֆիէֆ՝ աւատներ միասնաբար տալիս էին մէկ զինուած մարդ միայն։ Զինուորական հրովարտակի համաձայն, հայ իշխանները այս խնդրում բաժանւում էին մի քանի աստիճանների, ըստ որում հրովարտակին նայելով ոչ մէկը յիսուն ձիաւորներից պակաս չէր տալիս թագաւորին(*)։

Արքայական ամրոցների պահպանման պարտականութիւնը ընկած էր որոշ ընտանիքի վերայ և կազմում էր նրա ժառանգական իրաւունքը ուրիշ ժառանգական իրաւունքների նման։ Ծոփքում և Անգեղ տան մէջ արքայական ամրութիւնների պահպանումն ու հսկողութիւնը Մարդպետական իշխաններին էր վստահուած։ (**) Պարսիկների մօտ այս պաշտօնը շատ յարգի էր։ Նա տրւում է արքայական ընտանիքից սերած մարդու և կոչւում էր argbed, հին՝ arkapat։

Ամեն իշխանութիւն ունէր իր ամրոցը, բերդերը, նրանք գտնւում էին Արշակունի թագաւորների տրամադրութեան տակ: Իշխանական ամրութիւնները նրանց համար jurabilia et redabilia էին, ինչ որ պահանջւում էր արեւմուտքում ըստ աւատական սովորութեան։ Հայաստանի թագաւորութեան վերացումով Պարսիկները երկրի զանազան մասերում գրաւեցին բազմաթիւ ամրոցներ և այնտեղ պահում էին իրենց

(*) Հայերի մէջ հեծելազօր հաւաքում էին նաեւ գիւղացիներից, ինչպէս Պարթեւների մօտ։ Այստեղից ռամիկ հեծեալ. գեղջուկ հեծեալ ասոյթը:

(**) Փաւստոս՝ հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին եւ ամենայն բերդացն արքունի, որ ի կողմանս յայնս։

մնայուն պահակազօրքը։ (*) Պէտք է ենթադրել, որ այդ տեղերը նրանց ձեռքն անցան ոչ թէ նուաճումով, այլ որպէս Արշակունիներից ստացած ժառանգութիւն։

Հայ իշխանները մէկ ուրիշ պարտաւորութիւն էլ ունէին. consilium-ին նմանուող։ Կասկած չկայ, որ հայ ազնուականութիւնը մասնակցում էր երկրի կառավարութեան մէջ։ Բազմանդամ պաշտօնէութիւնը կազմւում էր բացառապէս իշխաններից։ Բացի դրանից, իշխանները յաճախ հաւաքւում էին թագաւորի մօտ, միասնաբար խորհրդակցելու ներքին և արտաքին քաղաքականութեան զանազան հարցերի մասին, Անհրաժեշտ դէպքերում թագաւորն ինքն էր հրաւիրում նրանց, իսկ երբեմն էլ նրանք էին գալիս իրենց նախաձեռնութեամբ։ (**) Տրդատի որդի Խոսրով թագաւորին վերագրւում է այն օրէնքը, ըստ որի ամենէն ազդեցիկ իշխանները, որոնք հազարից ոչ պակաս հեծելազօր ունէին, տեւական մնում էին արքունի պալատում և շրջում էին թագաւորի հետ։ Ի դէպս, դեռ եւս Կիւրոսը, հող և իշխանութիւն ունեցողների պարտականութիւնն էր համարում իրենց ժամանակի մէկ մասը անցնել սատրապի պալատում և այնտեղ դաստիարակել իրենց երեխաներին։ Ըստ երեւոյթին այս սովորութիւնը ընդունուած էր նաև Հայաստանում։

Աւատի բնորոշիչ կողմերից մէկը նրա նուիրապետական հակումն էր։ Աւատը ժամանակի ընթացքում կարող էր մեծանալ և տերիտորիալ-հողային և քաղաքական տեսակէտից։ Այն պարագային հողատէրը իր հողերից կտրում էր, բաժանում որոշ հողամասեր և տալիս իր մօտիկներին՝ վասսալական սկզբունքով։ Նա, մնալով իր սէնիորի վասսալը՝ ինքն իր հերթին վեր էր ածւում միաժամանակ մէկ փոքրիկ սէնիորի։ Ստեղծւում էր հողերի և մարդկանց ենթաւատականացումն։ Նոր հողամասերը և նրա տէրերը գլխաւոր սէնիորի հանդէպ համարւում էին ենթաւատատէր և ենթավասսալներ, arrière-fief, arrière-vassaux։

Նման երեւոյթ նկատելի է նաև Հայոց աւատական կեանքի մէջ։

(*) Եղիշէ՝ յարձակեցան ի վերայ բերդիցն եւ աւանիցն, զոր ունէին պարսիկքն ի տեղիս յամրոցս աշխարհին՝ Արտաշատ, Գառնի, Անի, Արտագերս...

(**) Փաւստոս՝ միաժողով եղեալ մեծամեծք նախարարացն... խորհուրդ խորհեցան... ժողովեցան ի մի ժողով... նախարարք մեծամեծք, աւագք ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց... մեծ նախարարքն... սկսան ըստ կամաց իւրեանց վարել զթագաւորն... Ղազար Փարպեցու մօտ շատ դէպքեր են յիշւում, երբ իշխանները հաւաքւում են խորհրդակցութեան։

Այստեղ աւատի կոտորակման գործողութիւնը տեղի է ունենում տոհմի սահմաններում և աւագութեան իրաւունքի թուլացումով և քայքայումով։ Աւատի չստորացումն և անբաժանելիութիւնը՝ յատուկ էին աւատական աշխարհին և ծառայում էին ուղիղ սէնիորի շահերին, որովհետեւ միայն այդ պայմաններում լաւապէս ապահոված էր՝ աւատական պարտականութիւնները։ Եթէ հողը հաւասարապէս բաժանուէր բոլոր ժառանգների մէջ, ապա շուտով վասսալները կը զրկուէին հողային ապահովութիւնից, որ այնքան անհրաժեշտ էր վասսալական պարտականութիւնները կատարելու համար։ Ուստի և սէնիորները պահպանում էին աւատի ամբողջականութիւնը և ժառանգութեան մէջ էլ աւագութեան իրաւունքը։ Սակայն աստիճանաբար հաւասարութեան իրաւունքը հարթեց իր ուղին։ Սկիզբը որպէս զիջում ժառանգութեան խնդրում ի նկատի էին ունենում և միւս որդիներին, բայց աւագին յատկացւում էր հողի լաւագոյն մասը և նա էլ համարւում էր պատասխանատու թէ իրեն և թէ եղբայրների համար։ Միայն նա էր աւատական երդումն անում և ըստանում ինվէստիտուրան։ Բայց ի վերջոյ հաւասար իրաւունքի ըսկըզբունքը յաղթանակեց։

Հայրենական իշխանութիւնը և աւագութեան իրաւունքը Հայոց աւատականութեան յատկանիշներն էին սկզբից ի վեր։ Այս սկզբունքների թուլացման հետ միասին ծագում էր սեպուհական իրաւունքը։ Սեպուհը, ինչպէս տեսանք նշանակում էր տոհմի որդի և նախարարական շրջանում տեխնիկական բառ էր որակելու իշխանական տոհմի բոլոր անդամներին: Բացի տանուտէրից կամ տոհմապետից տոհմի մնացած բոլոր անդամները համարւում էին սեպուհներ։ Յիշատակարանների մէջ այսպէս էին կոչւում հաւասարապէս եղբայրը, որդին ազգականը և ընդհանրապէս տանուտէրի ցեղակիցները (*)։ Որքան

(*) Ղազար Փարպեցու մօտ սեպուհ կոչւում են տանուտէրի ա. եղբայրը՝ *Մեծ սեպուհ Մամիկոնէից, եղբայր Վարդանայ՝ Հմայեակ։* Վարդանը մէկ եղբայր էլ ունէր՝ Համազասպեան։ Վարդան տանուտէրի երկու եղբայրներից մեծը Հմայեակն էր, ուստի եւ կոչւում է *մեծ սեպուհ:* Վահան Մամիկոնեանի՝ տոհմի տանուտէրի ժամանակ, նրա եղբայր Վասակը կոչւում էր *Սեպուհ Մամիկոնէից։*

Բ. որդին՝ Սեպուհ մի Ուրծացի. որդի կողթեկաց իշխանին Ուրծայ։

Գ. ազգականը՝ Վահանը՝ արծակէր զիւր եղբօրորդի մի զորդին նահատակին Վասակայ Գրիգոր... Սեպուհն Մամիկոնէից Գրիգոր։

Դ. Տոհմակից՝ Անձեւացւոց Սեւուկ իշխանը ունէր *ազգակից* Յովնանը, որին պատմագիրը կոչւում է *Անձեւացւոց Սեպուհ... լուեալ պա-*

գործադրւում էր կիրառւում էր մէկի, աւագի ժառանգութեան սիստեմը, տանուտէրական իշխանութիւնը տանուտէրի մահից յետոյ անցնում էր սեպուհներից աւագին. մեծ կամ աւագ սեպուհ-ին։

Ժամանակի ընթացքին խախտւում է իշխանական հողի անբաժանելիութեան սկզբունքը և սեպուհները սկսում են պահանջել իրենց բաժինը։ Առաջ է քաշւում հողատիրութեան նոր կարգ, որի հետեւանքով վերջինս բաժանւում է սեպուհների մէջ։ Այսպիսով սկիզբ է առնում հողատիրութեան և ազնուականութեան նոր աստիճան։ Սեպուհին բաժին ընկած հողաշերտը կոչւում է սեպուհական = սեպհական և սեպուհների աստիճանն էլ՝ որպէս ազատ մարդկանց՝ սեպհական ազատութիւն:

Սեպուհութեան բաժանումի գործողութիւնը՝ որպէս ինքնուրոյն հաստատութեան խուսափում է մեր դիտողութիւնից: Հինգերորդ դարի դէպքերը պատմող պատմաբանների մօտ նկատւում է արդէն սեպուհների անկախացման մի քանի նշաններ։ Սեպուհները ներկայ են ամենուրեք տանուտէրերի հետ միասին որպէս ուրոյն, անկախ մարմիններ։ Հայերի ապստամբութեան ժամանակ նրանք էլ տանուտէրերի հետ հրաւիրուած էին պարսկական արքունիքը բանակցելու համար։ Ապստամբութեան ժամանակ՝ վաւերագրերը կընքւում էին ոչ միայն տանուտէրերի, այլև սեպուհների կնիքով և ընդհանրապէս ամեն կարեւոր պարագաներում սեպուհները երեւան են գալիս անբաժան՝ տանուտէրերի հետ միասին (*)։

Սեպուհական իրաւունքի սաղմնաւորումն վերաբերում է յետ Արշակունեաց շրջանին։ Խորենացին պատմում է, որ Արշակունեաց տան մէջ գոյութիւն ունէր մէկ սովորութիւն, ըստ որի միայն գահաժառանգն էր, որ մնում էր պալատում, իսկ թագաւորի մնացած որդիները և ազգակիցները ապրում էին նրանց համար յատկապէս վերապահուած շրջաններում, սկիզբը Հաշտենից գաւառում, իսկ յետոյ էլ Աղիովիտում և Առբերանում։ Եղաւ մէկ ժամանակ, որ նրանց նեղ էր գալիս այդ շրջանները և նրանք դիմեցին թագաւորին իրենց կալուածները ընդարձակելու համար։ Բայց թագաւորը մերժեց նրանց խնդիրը և որոշեց «չտալ նրանց նոր ժառանգութիւն, այլ եղածը հաւասար տրոհել իրենց մէջ»: (*) Այն ժամանակ էլ նոր հողաբաժանում կատարեցին ըստ մարդաթուի և Արշակունի իշխանները հաւասարապէս տեղաւորուեցին վերոյիշեալ վայրերում։

Այս պատմութեան մէջ ամենից վաւերականը և արժէքաւորը հողի բաժանման սովորութիւնն է ըստ մարդաթուի՝ որ ընդունուած էր Արշակունիների կողմից։ Արքայական տունն էլ ներքնապէս հիմնուած էր այնպիսի սկզբունքի վրայ ինչպէս իշխանական ընտանիքները և պատմաբանի մատնանշած բաժանումի անջատ հողատիրութեան սովորութիւնը ճիշդ էր նաև իշխանական միջավայրի համար ընդհանրապէս։ Սակայն այս երեւոյթը չի վերաբերում Արշակունիների ժամանակներին, ինչպէս պատկերացնում է պատմաբանը։ Այստեղ մենք գործ ունինք պատմաբանի ժամանակակից կարգերի արտացոլման հետ, որ ինքը բարձրացնում և հասցնում է մինչ հին ժամանակները։ Ժառանգական կալուածների բաժանումը ընտանիքի անդամների մէջ արտայայտութիւնն է սեպուհական իրաւունքի։ Նա զարգացաւ ըստ երեւոյթին վեցերորդ դարում։ Դուինի ժողովի ժամանակ, 642 թուին նա արդէն բաւականին պարզ ձեւաւորուած

տասխան յազգակցէն... յիշխանէն Անձեւացեաց Սեւկայ... Սեպուհ է նաեւ Վարազ—Վաղանը, որպէս այր մի ի տոհմէն Սիւնեաց։ Վասակի փեսան նոյնպէս Սեպուհ է. փեսայիցեալ իշխանին Սիւնեաց Վասակայ Սեպուհ Սիւնեաց... Անորոշ է մնում՝ թէ նա Սեպուհ էր կոչւում որպէս Սիւնեաց տոհմին պատկանող, թէ որպէս Վասակ իշխանի փեսայ։

Ե. Սեպուհ են կոչւում միեւնոյն տոհմի երեք անդամներ Սեբէոսի մօտ՝ Սեպուհքն Վահեւունիք՝ Սամուէլ, Սարգիս եւ Վարազ—Ներսէս, իսկ նրանց տանուտէրն էր՝ Խոսրով Վահեւունեաց տէր։

Միւս պատմագիրների մօտ հազուադէպ է սեպուհ բառի գործածութիւնը։ Փաւստոս գործ է ածում միայն երկու անգամ՝ Գնել, մեծ Սեպուհն Արշակունի, եղբօրորդին Արշակայ եւ Համազասպեան Սեպուհ մի ի Մամիկոնեան տոհմէն: Եղիշէն՝ նոյնպէս երկու անգամ՝ Սեպուհ, ոմանք յայլմէ տոհմէ... Սեպուհ մի ազգէն Ամատունեաց։ Սեբէոսի մօտ՝ կայ միայն վերոյիշեալ տեղիքը։

(*) Ըստ Ղազար Փարպեցու՝ Պարսից արքայից արքային պատասխանում են աւագ տանուտեարք հանդերձ աւագ սեպհօք։ Արքայից արքայի հրամանով նրան պիտի ներկայանային ամենայն տանուտեարքն եւ աւագ սեպուհքն: Թագաւորը հարցումներ արեց ցհայոց տանուտեարսն եւ ցսեպուհսն — դուք տանուտէրք եւ սեպուհք... Ամենայն տանուտէրամբքն եւ սեպհօք հաստատէին զերդումն եւ որոց մատանեաւ չեւս եւս էր կնքեալ զաւետարանն կնքէին... կնքեալ նախ մատանեաւ իշխանին Սիւնեաց Վասակայ եւ ապա մատանեօք ամենայն տանուտէրացն հայոց եւ աւագ սեպհացն... Նախարարք եւ Սեպուհք...

(*) Խորենացի — հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա. բայց զոր ունին հաւասար տրոհել յինքեանս, զոր բաժանեալ ըստ մարդաթուի:

էր։ (*) Ժառանգական սեփականութեան բաժանման ժամանակ՝ սեպուհական իրաւունքի հիմքով, յաճախակի տեղի էին ունենում վէճեր, դատավարութիւններ, որոնց մասին յիշատակում է Խորենացին։ Դեռ նրա օրով կային հարուստ դատական փաստաթղթեր պարսկերէն և յունարէն լեզուներով։ Պատմաբանը ունէր ձեռքի տակ այդ թղթերը և պնդում է, որ վաւերագրերի մեծամասնութիւնը վերաբերում էին սեպուհական ժառանգական իրաւունքներին (**)։

Հետագայում սեպուհ, սեպհական բառերը ստացան սեփականութեան իմաստ. այժմ Հայոց բառարանում չկայ ուրիշ բառ սեփականութեան գաղափարը արտայայտող սեպուհականի իմաստով։ Հին գրուածքների մէջ այդ բառը գործ է ածւում որպէս նոյնանիշ ժառանգ, ժառանգութիւն բառերի հետ։ Վերջին իմաստը դիւրին է արտաբերել սեպուհից, որպէս որդի՝ ժառանգ և ըստ երևոյթին նա էլ դարձել է անցման աստիճան սեփականութիւն իմաստին հասնելու համար։

Սեպուհական կարգը դուրս քշելով աւագութեան իրաւունքը՝ քանդում էր նախարարութեան հիմքերը։ Հողի բաժանման և վերաբաժանման հետևանքով նախարարական հողատիրութիւնը պէտք է մանրանար բնական է, որ իշխանական ընտանիքների թուլացման և անկման դէմ երբեմն արհեստական միջոցներ էին ձեռք առնւում. օր. թոյլատրւում էր մերձաւորների ամուսնութիւնը, որպէսզի պահպանուի իշխանութեան ամբողջութիւնը։(*)

Տոհմից անջատուած սեպուհի կացութիւնը անորոշ է։ Իր հողաշերտի հետ տոհմից դուրս եկած սեպուհը ինչ յարաբերութեան մէջ էր մնում իր տոհմի տանուտէրի հետ անյայտ է։ Տէր լինելով համեմատաբար ոչ մեծ հողային սեփականութեան, նա չէր կարող յուսալ ինքնուրոյն դրութիւն ստեղծելու։ Ըստ մի քանի ակնարկութեան մեկուսացած սեպուհները որոնում էին աւելի ուժեղ իշխանների հովանին և կապւում էին նրանց հետ ծառայութեամբ։ Իններորդ դարում Աշոտ իշխանի մօտ թիկնապահ էր մէկը՝ Սեպուհ անունով. նրա մօտ կային և ուրիշ սեպուհներ՝ զանազան պարտաւորութիւններ կատարող։ (**) Այսպիսի կացութեան մէջ ընկած սեպուհները՝ իջնում են վասալի աստիճանին։ Որպէս անկախ հայրենական հողի տէրեր նըրանք ազատ էին ծառայելու իրենց տանուտէրին, կամ անցնել ուրիշի մօտ ինչպէս արևմուտքում անում էին ալլոդեալ սեփականատէրերը։ Սեպուհական հաստատութեան զարգացումը կասեցուեց քա-

---

(*) Վերոյիշեալ ժողովի յօդուածներից մէկը սկսւում էր այսպէս՝ յորժամ ազատք զիւրեանց զերդ եւ զմարդ բաժանեն։ Ըստ Եղիշէի՝ Աղուանից թագաւորը՝ հարկադրուելով գահից հրաժարուելու՝ խնդրում էր Պարսից արքայից իր սեպուհական հողաբաժինը — խնդրեաց զմանկութեան սեպհականն, զոր հօրն իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեանն հազար երդ։ Այս դիտողութիւնը գտնւում է 8րդ գրքում, որն անկասկած ուրիշ եւ համեմատաբար աւելի ուշ ժամանակի ծագում ունի, քան միւս գրքերը։

(**) Խորենացի.— Գիւղից եւ գաւառաց եւս եւ իւրաքանչիւր տանց առանձնականութեանց եւ հանուրց հակառակութեանց եւ դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցաց մատեանք. մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն։ Առանձնականութեանց բառը այստեղ այն նշանակութիւնը չունի՝ թէ հակադրւում է հանուրց-ին, ինչպէս հասկացուել է Մառի թարգմանութեան մէջ Ջաւախովի աշխատութեան մասին գրած յօդուածում։ Դարձուածքից երևում է որ դատական վէճերը ծագում էին գլխաւորապէս սեպուհական ժառանգութեան բաժանման ժամանակ։ Սեպուհը, իր բաժինն ստանալով դուրս էր գալիս ընտանիքից, նա դառնում էր առանձնական։ Հենց այսպիսի առանձնականութեանց համար է, որ վէճեր էին ծագում։

(*) Խորենացի.— զՄերձաւորաց խնամութիւն զօր վասն ագահելոյ սեպհական ազատութեանն առնէին։ Խօսքը վերաբերում է Ներսէս Կաթողիկոսի արած այդպիսի ամուսնութեանց արգելքին։ Փաւստոսի համապատասխան մասում կարդում ենք հետևեալը. փախչել աւելի ի մերձաւոր եւ յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութեննէն եւ մանաւանդ ի մերձաւորական ի նուաց եւ որ զամ մի այսմ նման լեալ էր ինչ։ Փաւստոսը մերձամուսնութեանց պատճառների մասին ոչինչ չէ ասում։ Իր տեղեկութիւնները Փաւստոսից վերցնելով, Խորենացին տալիս է նրան իր բացատրութիւնը, ենթադրելով որ այդպիսի ամուսնութեանց նպատակը Սեպուհական ազատութեանց ժառանգութեան հարցն էր։ Իրօք, իրեն հարսի հետ ամուսնացող եղբայրը ձեռք էր բերելու իր եղբօր Սեպուհական հողամասը։ Խորենացու մեկնաբանութիւնը յատկանշական է իր եւ ոչ թէ Փաւստոսի ժամանակի կարգերի համար, որի մօտ Ներսէսի կանոնադրումները ամենից առաջ մէկ ակնարկ են Արշակի արարմունքներին։

(**) Թով. Արծրունի.— Վահրամ Սեպուհ թիկնապահ իշխանին եւ այլք ի Սեպուհ պաշտօնէից։ Վահրամ, որ եւ թիկնապահ իշխանին։ Հետաքրքիրն այն է որ Թ. Արծրունին մօտ՝ Սեպուհը երեւան է գալիս որպէս առանձին կոչում եւ գործ է ածւում առանց նրա տոհմը մատնանշելու, ինչպէս անում էին աւելի հին հեղինակները. Սեպուհ Դաւիթ, Սեպուհ մի Սահակ։ Լաստիվերցի մօտ, մենք հանդիպում ենք՝ Սեպուհ զունդն ազատացեալ ի հայրենեաց մինչին ուր եւ են։

ղաքական պատճառներով, որի հետեւանքը եղաւ աւատական ուժերի կենտրոնացումը և ստեղծումն մանր սեփականատէրերին կլանող՝ մի քանի խոշոր մարմինների։

Պատմագիրների մօտ յիշատակւում է նաև ազատ մարդկանց առանձին մէկ դաս. դրանք են՝ ոստան մարդիկ կամ ոստանիկ։ (*)

Ոստանը, ինչպէս մենք տեսանք՝ նշանակում է գաւիթ, տուն։ Ոստանիկ ազատութիւն՝ համընկնում է ռուսական պալատական ազնուականի հետ։ Ոստանիկը իր նշանակութեամբ հաւասարազօր է արքունի բառին, որով նա երբեմն փոխարինւում է կամ մեկնաբանւում: Ոստան էր կոչւում ամեն իշխանական պալատ, բայց առաւելապէս գործ էր ածւում նշելու համար արքունի պալատը՝ որպէս նրանց չորքում ամենէն կարեւորը, երբեմն էլ ամբողջ կալուածը, իշխանութիւնը։ Ոստանիկ ազատութիւնը, ինչպէս ցոյց է տալիս՝ ինքը անունը սերտօրէն կապուած է արքունի պալատի հետ։ Ինձ թւում է, որ ոստանիկները այնպէս են վերաբերում արքայական ընտանիքին, ինչպէս սեպուհները նախարարական տներին։ Ոստանիկ ազատութեան ծագման և էութեան հարցը զբաղեցրել է դեռ ևս Խորենացուն։ Բայց ինչպէս երեւում է պատմագիրը այդ հարցի նկատմամբ չունէր իր ձեռքի տակ աւելի մեծ տուեալներ, քան մենք։ Իր պրպտումներից նա այն եզրակացութեան եկաւ, որ ոստանիկները ծագել են այն չորս գնդերից, որ իբր թէ կազմել էր Վաղարշակ թագաւորը Հայկի տոհմից սերած հին թագաւորների՝ ժառանգներից՝ արքունի պալատի պահպանութեան համար։ Յետագայում՝ նոյն պատմագրի տեղեկութեանց համաձայն, Պարսիկները այդ գնդերը կազմում էին և ուրիշ մարդկանցից և կոչւում էին ոստան։ Ի դէպս պատմագիրը չգիտէ թէ ինչու այդպէս էր. արդեօք այն պատճառով, որ նախկին տոհմերը ընդհատուեցին, մեռան, թէ նրանք ազատ արձակուեցին որևէ անհնազանդութեան համար և նրանց փոխարէն կազմեցին ուրիշ գնդեր՝ արքունի անուան տակ։ Պատմագիրը միայն այն բանի վրայ է պնդում, որ նախկին գնդերը ծագում էին առաջին թագաւորներից, ինչպէս իր ժամանակ Վրացիների մօտ եղածները կոչւում էին սեպցուլ։

Խորենացու դիտողութիւնները անկասկած հիմնուած են Ղազար Փարպեցու և Եղիշէի մօտ մնացած և մեր մատնանշած տուեալների վրայ։ Նկատելով որ նրանց մօտ ոստանը յաջորդում է, կապւում է արքունի բառին, պատմագիրը դրանից ճիշտ եզրակացրեց նրանց նոյնութեան մասին և կռահեց, որ առաջին անունը աւելի հին է, Արշակունեան է, իսկ երկրորդը վերաբերում է Սասանեան շրջանին։ Որ ոստանիկ գնդեր գոյութիւն ունէին՝ այդ կարելի է եզրակացնել պատմագիրների խօսքերից. այրուձիով զօրս յարքունի տանէ բառերից, բայց որ նրանք նախորոշուած էին պալատի պահպանութեան համար և չորս էին, այդ արդէն պատմագրի ենթադրութիւնն է, որ կազմուած է Արշակունեաց պալատում, չորս առաջնակարգ գահերի տէր բդէշխների մասին եղած տեղեկութիւնների հիման վրայ(*)։ Մեր պատմագրի մեկնաբանութեանց մէջ հաւաստին այն է, որ ոստանիկները արքայական ծագում ունեցող մարդիկ էին, ըստ որում այդ անուան տակ պիտի հասկանալ ոչ թէ հին թագաւորների շառաւիղներին, ինչպէս կարծում է Խորենացին, այլ բացառապէս Արշակունիների ժառանգներին։ Նրանք Արշակունիների սեպուհներն էին և ճիշդ է պատմագիրը, երբ համեմատում է նրանց Վրաց սեպցուլների հետ։ Հիմք չկայ կասկածելու և նրա այն յայտարարութեան ճշմարտութեան վրայ, որ ոստանիկների կազմը իր ժամանակ այն չէր, ինչ որ առաջ։ Ոստանիկների շարքերը լցւում էին ոչ միայն Արշակունի ժառանգներով, այլ և ուրիշ ծագում ունեցող մարդկանցով. որոնք որևէ բանի մէջ աչքի էին ընկել։ Նրանց թւին պատկանում են այն մանր իշխանական տոհմերը. որոնց մենք հանդիպում ենք Արշակունեաց կալուածքում՝ Այրարատում։ Մի գուցէ և այդ պատճառով էլ ազատների այս դասը սկսուեց կոչուել ոչ բնորոշիչ ոստանիկ, ոստանիկ մարդիկ բառով՝ փոխանակ սեպուհ, որը հաւանաբար գործածւում էր և նրանց վերաբերմամբ՝ մինչև նրանց կազմի փոփոխուիլը։

Յիշատակարանները գիտեն ոստանիկներին միայն արքայական շրջաններում, յարքունի տան, որի տակ պիտի հասկանալ Այրարատը։ Նախարարութեան ծագման մասին խօսելիս Խորենացին նշում է դէպքեր, երբ մարդիկ ազատների կարգն էին դասւում թագաւորին ծառայութիւն մատուցած լինելու համար: Այդպիսի դէպքեր յաճախ էին լինում Արշակունիների անկումից յետոյ. այս միջոցներով Պարսից իշխանութիւնները նախապատրաստում էին իրենց շահերին նուիրուած մէկ միջավայր: Ուստի և Խորենացին ոստանիկ մարդկանց

(*) Եղիշէ.— Բազում եւ այլ ազատ մարդիկ, զոր ոստանեկան անուանեն յարքունի տանէ. Ղազար Փարպեցի.— եւ այլքն յոստանկաց... զազատ եւ զազատորդի եւ յարքունի տանէ զոստանիկ մարդիկ... այրուձի յարքունի տանէ... զորս յարքունի տանէն. Նախարարք եւ Սեպուհք, ոստանիկք եւ ռամիկք՝ Նախարարք եւ ազատք եւ այլք յոստանիկ մարդկանէ ։ Խորենացի զոստանն անուանեալ ազատութիւն:

(*) Խորենացին շատ աղօտ գաղափար ունի բդէշխների մասին: Նա յիշում է Գուգարաց եւ Աղձնեաց բդէշխութեանց մասին. միւսների մասին նրա տեղեկութիւնները թերի են: Թէ նրանք չորս էին եւ բարձր տեղ էին գրաւում Արշակունեաց պալատում՝ այդ մասին նա չի յիշում։

կազմի փոփոխութիւնը վերագրում է Պարսիկներին։ Հայ Արշակունիններն էլ վարձատրում էին իրենց կարեւոր ծառայութիւն մատուցած մարդկանց, իրենց կալուածներում՝ Այրարատում հողաբաժիններ տալով։ Պալատում ծառայողների հսկայ բազմութիւնը՝ կազմւում էր ազատ դասի մարդկանցից և Արշակունիների անկումից յետոյ նրանք պիտի մտնէին ոստանիկների կարգի մէջ։ Այսպիսով, այսպէս կոչուած ոստանիկ ազատութիւնը, դասը կազմում էր երեք կարգի մարդկանցից՝ Արշակունիների յետնորդներից, որոնք սեպուհական հողաբաժիններ ունէին Այրարատում, նրանք՝ որոնք հող էին ստանում որպէս նուէր և Թագաւորութեան անկումից յետոյ էլ պալատական մարդկանցից։

III

Հայաստանի գիւղաբնակչութեան և յատկապէս նրա ընկերային դրութեան մասին շատ քիչ տեղեկութիւններ ունինք։ Յիշատակարանները խստօրէն զանազանում են գիւղացիութիւնը՝ հակադրելով նրան ազատներին, բայց նրանց փոխ յարաբերութեան, տէրերից ունեցած հողային կախուածութեան մասին, գրեթէ ոչինչ չեն ասում։ Նրանք բոլորը, որոնք չեն մ ում ազատների, ազնուականութեան և հոգեւորականութեան դասի մէջ, պատմագիրների հայեացքով կազմում էին մէկ զանգուած, բնակչութեան խոնարհ խաւը շինականութիւն անուան տակ։ Շինականը, գիւղացիութեան իմաստով ամենէն գործածական բառն է, բայց յաճախ հերթագայում է ռամիկ գեղջուկ և եկեղեցական՝ ժողովուրդ բառերի հետ։(*)

Գիւղական բնակչութեան գլուխը կանգնած է հազարապետը, ինչպէս իշխանական դասի գլուխը՝ սպարապետը։ Ենթակայ էր, արդեօք, հազարապետին երկրի բոլոր գիւղացիութիւնը, թէ նա միայն արքունական կալուածների բնակչութեան կառավարելու համար ստեղծըւած յատուկ մարմին էր, չգիտենք։ Եթէ առաջին դրոյթը շատ հիմքեր ունի, ապա պարզ չէ, թէ ինչով էին որոշում գիւղացիութեան

---

*) Փաւստոսի մօտ․ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն եւ կամ շինականութեանն… ի շինականաց անգամ ռամիկ մարդկան… առ ազատս եւ առ շինականս… պատուականք եւ անարգք, ազատք եւ շինականք։ Ղ. Փարպեցի․— առ իշխանս եւ շինականս․․ նախարարք եւ սեպուհք, ոստանիկք եւ ռամիկք… զնախարարսն եւ զազատս եւ զայլ ամենայն ռամիկսն… զքաղումս ի ռամիկ մարդկան է…

յարաբերութիւնը իշխանների և Թագաւորի հետ և ինչ էր ներկայացնում իրենից գիւղացիական հողատիրութիւնը։

Արեւմուտքում աւատական գիւղացիութիւնը կոչւում էր servage ճորտ։ Ճորտի հողը, հարստութիւնը իրաւաբանօրէն համարւում էր միայն ցկեանս օգտագործում՝ tenure, որոշ պարտաւորութիւններ կատարելու պայմանով։ Ճորտի մահով նրա հողամասը անցնում էր սենիորին, նա ժառանգութիւն թողնելու իրաւունք չունէր։ Նրա ձեռքը մեռած էր, կարողանալու համար իր բաժին հողը ժառանգին յանձնելու։ Բայց սենիորը ճորտի հողաչերտը սովորաբար տալիս էր նրա որդուն։ Ճորտը կախուած էր սենիորից և անձնապէս։ Նա չէր կարող լքել հողը առանց սենիորի համաձայնութեան՝ մի բան, որ ճորտատիրութեան բնորոշիչ նշանն է։ Միջնադարեան գիւղացիութեան իրաւական բնոյթն արտայայտւում էր նաև սենիորին ելեւմըտապէս ենթարկուած լինելու մէջ։

Գիւղացիութիւնը ենթարկուած էր զանազան տուրքերի՝ յօգուտ սենիորի։ Հիմնական հարկը chevage-ն էր = census capitis- կատարեալ գլխահարկ, որ հաւաքւում էր ամբողջ հասարակ ժողովրդից։ Ունեցուածքից առնում էին tenures à cens, ցենզ, այսինքն հողից օգտուելու վարձատուրք, և tenures â champart =campi pars, բերքի մէկ մասը, որ յատկացւում էր յօգուտ իշխանի։ Բացի դրանից կար corvées, կոռ ու բէգարը զանազան տեսակի անձնական աշխատանքներ՝ փոխադրական, շինարարական բնոյթ կրող՝ կալուածատիրոջ հողերի վրայ։

Գիւղացիական հողաբաժինը Հայերի մօտ կոչւում էր կեանք, արար, կալուած, ի դէպս նոյն այս արտայայտութիւններն էլ տրւում էր իշխանական, եկեղեցական հողերին (*)։

Իմաստաբանական տեսակէտից կալուածը համապատասխանում է tenure-ին, իսկ կեանքը իրօք նշանակում է ապրիլ կեանք։ Կարելի է արդեօք այս հիմքով եզրակացութիւն անել գիւղացիական հողաբաժնի իրաւական բնոյթի մասին որպէս օգտագործումն և ցկեանս տիրապետութիւն։

կրտսեր շինական մարդիկ… միահամուռ ժողովրդոց… նախարարացն հայոց եւ ռամկացն։ Եղիշէ— դստերք ազատաց եւ շինականաց… արանց եւ կանանց, շինականաց եւ ազատաց… ազատ փափկացեալ եւ գեղջուկ վշտացեալ… ամենայն ռամիկ բազմութիւնն…

(*) Եղիշէ.— Եթէ յազատաց իցեն, եթէ ի շինականաց իցեն, եթէ յեկեղեցւոյ զինչ կեանս եւ թողեալ իցէ եկեսցեն եւ կալցեն զիւրաքանչիւր արարս․ ․ բազումք իսկ եկին եւ ժողովեցան եւ կալան զիւրաքանչիւր կալուածս…

Մեզ որոշ տեղեկութիւններ չի հասել նաև գիւղացիութեան հողային պարտաւորութեանց մասին։ Փաւստոսը չունի այդ մասին ոչ մէկ տուեալ(*)։ Յայտնի է միայն, որ մարզպանական շրջանում Հայերը հարկ էին տալիս Պարսիկներին։ Այս հարկը անկասկած նրանք մուծում էին նաև Արշակունեաց գանձարանը։ Ինձ մօտ է գտնուում, ասում էր մարզպան Վասակը՝ Հայաստանի ամբողջ հարկերը, իմ ձեռքի տակ են նաև Պարսից պաշտօնեաները եւ նրանցից խլուած շատ հարստութիւն(**)։

Արշակունիների անկումից յետոյ Պարսիկները նոր աշխարհագիր են կատարում՝ հաւանաբար հարկերի չափը որոշելու և ճշդօրէն բաշխելու համար։ Ըստ Եղիշէի վիճակագրութեան հետեւանքներից մէկը հարկերի աւելցնելն էր եւ ինչպէս ենթադրում է պատմագիրը նպատակ ունէր գիւղական բնակչութեան քայքայումը։ Հարկերը անհաւատալիօրէն ծանր էին. «այնտեղ, որտեղից պէտք էր առնել հարիւր դահեկան, վերցնում էին կրկնակի. վերցնում էին նոյնիսկ եպիսկոպոսներից, քահանաներից. հարկի տակ էին առնում ոչ միայն բնակելի վայրերը, այլև աւերակները»։ Եւ ով կարող է պատմել, բացականչում է պատմագիրը լեռներից, դաշտերից, անտառներից վերցրած մտից եւ սակից, բաժնից եւ հասից եւ հարկաց ծանրութեան մասին(***)։ Հաւաքում էին ոչ թէ արքայական արժանաւորութեամբ, այլ հինաբար յափշտակելով։ Հայ իշխանները Յազկերտի առաջ ասում էին, որ նրա օրով Հայաստանը աւելի շատ մուտք եւ սակ և ուրիշ հարկեր էին վճարում քան նրա հօր ժամանակներում։

Այս ցուցմունքները արժէքաւոր են այն տեսակէտից, որ ըստ երեւոյթին տեխնիկական յորջորջումներ են զանազան հարկերի։ Նրանց մասին կարելի է գաղափար կազմել. ուղղակի ցուցմունքներ չունենալու պատճառով, Պարսից պետութեան մէջ ընդունուած հարկային սիստեմի հետ համեմատելով։

Սասանեան կայսրութեան մէջ գոյութիւն ունէր հարկի երկու տեսակ խարաջ՝ հողային տուրք և gesith — գլխահարկ։ Նոյնը ընդունուած էր նաև Հռոմէացիների մօտ՝ tributum soli և tributum capitis, կամ Դիոկղետիանոսեան բարենորոգութիւնների տերմիններով capitatio terrena և cap. humana կամ plebeia։ Արաբական տիրապետութեան ժամանակ կար հողային հարկատուութեան երկու տեսակ vazife և mukasame, առաջինը համապատասխանում է եւրոպական ցենզին, վարձու տրուած հողից ստացած արդիւնքին, հողային ամեն միաւորից ստացւում էր որոշ վարձք. իսկ երկրորդը եւրոպական շամպարն է՝ բերքի մէկ մասը գնում էր յօգուտ հողատիրոջ: Արաբների հարկային սիստեմը իրենք չէ, որ ստեղծել էին. Նրա ծագումը հասնում էր մինչև նրանց երեւան գալու ժամանակները և Սասանեան դարաշրջանի ժառանգութիւն էր։ Արաբների օրով գլխահարկից ազատ էին քսան տարեկանից չհասածները և յիսունից վեր եղողները, այսինքն ծառայութեան համար անընդունակ տարիները. յայտնի է որ Պարսիկները զինուորական ծառայութեան համար վերցնում էին քսանից մինչև յիսուն տարեկաններին։ Այս փաստը ապացոյց է, որքան հին են Պարսիկներից Արաբների ժառանգած հիմնարկները։ Արաբական վազիֆէն իրօք համապատասխանում է խարաջին, իսկ մուկասամէն պարսկերէն կոչւում էր bahrak։

Այս շրջանակի մէջ կարելի կլինի բացատրել վերև յիշուած տուրքաւորումների տեսակները՝ մուտ, սակ, բաժ, հաս, հարկ։ Դրանցից սակը և բաժը շատ յայտնի էին Պարսից գրականութեան մէջ և ինչ որ յատկանշական է յիշւում են շատ յաճախ միասին sak և baz կամ

(*) Մուշեղի պատմութեան վերաբերող տասներկու գլուխների մէջ, որոնք նուիրուած են նրա յաղթանակներին՝ բառացիօրէն կրկնւում է հետեւեալ դարձուածքը՝ զմնացորդսն նուաճէր եւ ի հարկի կացուցանէր, կամ ի հարկի ծառայութեան կացուցանէր. երկու դեպքում՝ հարկ դընէր մնացորդացն: Բայց՝ ի հարկէ կացուցանել՝ չի նշանակում հարկի տակ դնել, այլ ընդհանուր իմաստ ունի՝ ենթարկել։ Լրիւ ձեւն է՝ ի հարկի (ծառայութեան) կացուցանել՝ հարկադրել ենթարկելու. զմնացորդսն ի հարկի կացուցին տալ նոցա հարկս ամյամէ: Կայ եւ այն տեսակէտը որ Փաւստոսի այս մասերը իրենը չեն։

(**) Ղազար Փարպեցի՝ հարկքս ամենայն աշխարհիս հայոց առ իս են եւ գործակալք ամենայն յիմում ձեռին են եւ այլեւս բազում կարասի, զոր ի պարսից գործակալացն հանի։ Նաեւ արքայի խօսքը՝ զհարկեր զիմոյ աշխարհին հայոց եւ կամ զպարսկացն... խնդրել ի տանէ քում, Եղիշէ.— Գող եւս գտանէր հարկի աշխարհին։ Հայերի ապստամբութիւնից յետոյ Պարսիկները ջանում էին խաղաղեցնել երկիրը եւ ի հարկադրութեան կացուցանել... Թողուլ հրամայէր զհարկս աշխարհին։

(***) Եղիշէ.— զՀարկս աշխարհին առաւել ծանրացոյց, զի զշինականսն վատնեսցէ.— էր ծանրութիւն հարկացն, քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ չափ. կրկին առնուէին. սոյնպէս եւ եպիսկոպոսաց եւ երիցանց դնէին, ոչ միայն շինաց, այլեւ աւերակաց։ Նա բնաւ, ով իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից եւ սակից, բաժից եւ հասից եւ հարկաց լեռանց եւ դաշտաց եւ մայրեաց. ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնէին, այլ հինաբար յափշտակելով:

sav և baz։ Այսպիսի կապակցումը յատկանշական է, որովհետև նա ցոյց է տալիս, որ այս բառերը արտայայտում են չափ ու որոշ հարկային նորմեր։ Աւելի քան հաւանական է, որ սակ և բաժ-ը իրենց իրական բովանդակութեամբ համընկնում են խարաջի և գեզիթի հետ, այսինքն նշանակում են հողային հարկ և գլխահարկ։ Այս արտայայտութեանց նոյնանիշ լինելը, գուցէ պէտք է մեկնաբանել նրանով, որ մէկը վերաբերում է հին, միւսները աւելի ուշ ժամանակների, կամ տերմիններից մի քանիսը գործ էին ածւում կայսրութեան մէկ մասում, իսկ միւսները այլ մասերում։ Ստուգաբանական կազմը մի ուցէ լուծէր խնդիրը, եթէ նա կասկածներ չյարուցանէր։ Բաժը նշանակում է մաս ինչպես յունական դասմոս՝ դայոմա բառից՝ բաժանել = մաս և հարկ։

Bazi կոչւում է այն տուրքը, որ Աքէմէնեանները վերցնում էին ենթակայ, հպատակ երկիրներից։ Կիրոպեդիայի մէջ գործ է ածւում Դասմոս՝ որոշելու համար Կիրոսի ստացած հարկերը և որ արտայայտըւում էր պարսկական baz բառով։ Սակ բառը՝ պարսկերէն sa և sav անկասկած ազգակցական կապ ունի Հայոց սակ-ի հետ, որ նշանակում է հաշիւ = սակ—արկել. բայց նրա իրանական, նոյնիսկ արիական ծագումը կասկածելի է։ Անհիմն չէ, և այն որ խարաջը՝ պարսկերէն և xarag-ը կարելի է ազգակցել հայերէն հարկի հետ՝ ելնելով այն հիմքից որտեղից ծագում է հայկական հերկելը։ Վերջապէս գեզիթը կէտ առ կէտ համապատասխանում է հայկական գզաբ-ին որ նշում է բուրդի չափ. գզել արմատից, սեմական giza մազաբաժանել սանրել, որից և գիզաբ։ Այս բառը ստացաւ ընդհանրապէս տուրքի իմաստ՝ հաւանաբար այն բանի հետևանքով, որ մի ժամանակ որպէս հարկ հաւաքում էին որոշ գիզաթ բուրդ։ Սկզբնապէս բոլոր տուրքերը վճարում էին բնական բերքերով։ Բուրդի մուծումը յատկանշական է յատկապէս հովուական կենցաղ ունեցողների համար։ Սրա մէջ զարմանալի ոչինչ չկայ, որովհետև դեռևս միջին դարերում sa chevage կամ census capitisի փոխարէն աւատատէրերը վերցնում էին մի քանի կիլոյ մոմ։

Եթէ սակ-ի իրանական ծագումը անվիճելի է, ապա կարելի է ընդունիլ, որ սակ և բաժը, խարաջ և գեզիթը նոյնանիշ են՝ արտայայտելու միևնոյն իմաստը՝ հին քաղաքակրթութեան արիական և սեմական շերտերում։ Շատ հաւանական է, որ հայկական միջավայրում համապատասխան արտայայտութիւն էին մուտք և հաս՝ որ յիշւում է պատմագրի մօտ սակի և բաժի հետ զուգահեռ։ Բահրակի համանիշն էլ պտուղն է։ Baz-ը հաւանաբար հողային հարկն է, իսկ սակը՝ գլխահարկը։ Ի դէպ՝ միևնոյն տերմինները կարող էին գործածուել զանազան նշանակութեամբ՝ տեղի և ժամանակի հետ կապ-

ուած։ Օր. խարաջը Արաբների մօտ նշանակում էր հողային հարկ. մինչդեռ հրէական յիշատակարանների մէջ նա կոչւում է tasq, իսկ խարաջը ստանում է գլխահարկի իմաստ։ Մեր նպատակի համար կարևոր է ինքը՝ հարկային յարաբերութեանց սիստեմը և ոչ թէ տերմինաբանութիւնը։ Բացի մասնանշուած հարկերից, գոյութիւն ունէին նաև այնպիսի պարտաւորութիւններ՝ ինչպէս եւրոպական corvé-ներ և կոչւում էր բեկար։ Բառը պարսկական էր = benaz amadan՝ գնալ աշխատանքի. անձնական ծառայութեան իմաստով մինչև հիմա էլ գործ է ածւում ժողովրդի մէջ։ Իր իսկութեամբ այդ պարտաւորութիւնը կոչւում էր kaz, որի հայերէն համանիշը կոռն է = աշխատանքը. երբեմն էլ գործ էին ածւում երկուսը միասին կոռ ու բեկար։ Վերջին բառը մենք հանդիպում ենք 641 թ. Դուինի ժողովի որոշումների մէջ։

Այս ձևով հարկերի գլխաւոր 3 տեսակներն էին խարաջը՝ հողային հարկը, գեզիթը՝ գլխահարկը, բահրակը՝ բնատուրքը և բեկարը՝ անձնական աշխատանքը։ Նրանց չափի մասին քիչ թէ շատ տեղեկութիւն ունինք։ Տաբարիի մօտ մնացած տեղեկութիւններով, հողահարկը՝ մինչև Խոսրով Անուշիրվանը՝ գանձում էին հում նիւթերի բերքով $^1/_3$, $^1/_4$, $^1/_5$ և $^1/_6$ չափով՝ համաձայն հողի արտադրողական կարողութեան և մշակութեան տեսակին։ Հողային հարկի կանոնաւորութեան համար՝ Կաւատ թագաւորը իր թագաւորութեան վերջում պատրաստւում էր հողերի, դաշտավայրերի և լեռների նոր բաժանում կատարելու։ Բայց նա շուտով մեռաւ՝ թողնելով իր յաջորդին և որդւոյն Խոսրովին գլուխ բերելու այդ գործը։ Խոսրովը իրականացրեց հօր մտադրութիւնը և էլ աւելի՝ հարկատու դասի աշխարհագիր կատարեց։ Այս աշխատանքները վերջացնելուց յետոյ միայն որոշեց հարկատուութեան չափերը։ Garib կոչուած հողային միաւորը, որ հաւասար էր 3600 քառ. արմունկի տարբեր չափի հարկի էր ենթարկւում համապատասխան ցանուածքի։ Մէկ garib-ի վերայ ցանուած ցորենից կամ գարիից առնում էին մէկ դրախմ հարկ, նոյն հողաչափի խաղողից՝ երեք դրախմ։

Գլխահարկի ենթակայ էին բոլոր 20-ից 50 տարեկանները, բացառութիւն կազմում էին իշխանները՝ ազնուականները, զինուորականները, կղերը և պաշտօնեաները։ Իւրաքանչիւրից հաւաքւում էր 12, 8, 6, 4 դրախմ, համապատասխան նրանց նիւթական կացութեան։ Վերջին թիւը, ըստ երևոյթին ընդհանուր ընդունուած չափն էր, որովհետև չինական աղբիւրները յիշում են, որ Պարսկաստանում ամեն մէկ մարդ վճարում էր չորս արծաթէ դրամ հարկ։ Ճշտուած էր նաև, որ վճարումները կատարուէին՝ նուագներով՝ երեք նուագով կամ ինչպէս պարսկերէն կոչւում էր երեք simarak-ով։

Յայտնի է, որ հռոմէական կայսրութեան մէջ էլ նման հողային հարկի հիմքում ընկած էր jugum կոչուած չափը։ Ամեն մէկ jugum ենթարկւում էր հարկի, որի չափը որոշւում էր կայսր հրամանագրով։ Jugum-ը տարբեր մեծութիւն էր՝ համաձայն հողի տեսակին։ Օրինակ՝ Սիրիայում jugum-ը կազմուած էր հինգ juger հողից՝ եթէ նա որթատունկի համար էր, կամ 20 juger բարձրորակ վարելահողից, կամ քառասուն juger միջորակ վարելահողից և վաթսուն juger վատորակից։ Հետաքրքիրն այն է, որ կայսրութեան մէջ հարկահաւաքումը կատարւում էր երեք նուագով սեպտեմբերի, յունուարի և մայիսի մէկին։

Բոլոր մատնանշուած հարկերը ընդունուած էին և Հայաստանում, հայ աւատական միջավայրում։ Սրա լաւագոյն ապացոյց ծառայում է մեր գրականութեան մէջ պահուած տեխնիկական տերմինները։ Հարկերի քանակի վերաբերմամբ փաստական տուեալներ մենք չունինք, եթէ չհաշուենք եկեղեցական կեանքի այս և այն ցուցմունքները։ Հայոց եկեղեցին որ իր կառոյցով աւատական էր, կենցաղական և տնտեսական կեանքում իւրացրել էր նախարարական միջավայրի նորմերը, կանոնները և պահել էր այն՝ մասամբ նաև աշխարհիկ աւատականների անկումից յետոյ էլ(*)։ Ուստի և եկեղեցական կեանքի տուեալները կիրարկելի են նաև նախարարական միջավայրի մէջ։ Դուինի ժողովի որոշումների մէջ յիշւում է, որ մի քանի իշխաններ ճնշում են կատարում բարեգործական հաստատութեանց վրայ, նրանցից կենդանի մարդկանց հաւասար հարկ են պահանջում և իրենց մարդկանց ուղարկում են հարկահաւաքման՝ նոյնիսկ ուտելիքից և խմելիքից, մինչ նրանք ընդհակառակը պէտք է «հոգածութեամբ խնամէին նրանց՝ իրենց հասոյթից բաժին հանելով՝ կալից, այգիներից և բոլոր պտուղներից»։ Սրանով տեսնում ենք, որ երկրագործութեան արտադրութիւնների որոշ մասերը գնում էր յօգուտ աւատատիրոջ(**)։

(*) Եղիշէ.— Ազատ էր ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ: Դուինի ժողովի որոշումը. Ցրդ Սբ. Գրիգոր Լուսաւորիչը եւ Տրդատը՝ զսուրբ եկեղեցւոյ մանկունս ընդ ազատաց տոհմին են կարգեալ եւ ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող եւ ջուր նաեւ ի պարսից իսկ տէրութեանն յայտարարեալ եւ չէ խառնեալ ի շինական. իշխանութեամբ զերիցունեաց տունան ի դիւանին եղեալ են, բայց միայն զհասն տալ արքունի։

(**) Յօդ. 11. Որպէս ի կենդանեաց հարկս պահանջին եւ զկերակուրս եւ ըմպելիս զիւրեանց գործակալս մատուցանեն, փոխանակ հոգալ եւ խնամել յիւրաքանչիւր վաստակոց ի կալւոյ եւ ի հնձանէ եւ յամենայն արմտեաց տալ մասն եւ բաժին, Համեմատել Սահակին վերագրած կանոնների հետ. իսկ ի կալւոյ եւ ի հնձանէ եւ յայլոց արմտեաց տասանորդս հանցին։

Աւելի արժէքաւոր է Վաչագան Թագաւորի օրով Աղուանից ժողովի որոշումները։ Հոգեւորականութեան տրուելիք մուտքի մասին որոշւում է հետեւեալը.— «Ունեւոր մարդը յօգուտ քահանայի մուծում էր չորս գրիւ—գարիք ցորեն, վեց գրիւ գարի և 16 չափ գինի. իսկ աղքատները վճարելու էին կրկնակի պակաս ցորեն և գարի, իսկ գինի՝ որքան կարողանան»։ Իսկ ով երկրագործութեամբ չէր զբաղւում և այգի էլ չունէր՝ նրանից ոչինչ չեն վերցնում։ Ոչխարի հոտ ունեցողը՝ վճարում է մէկ ոչխար և երեք գզաթ բուրդ և մէկ կաղապար պանիր. ով ձիերի երամակ ունէր՝ նա տալիս էր մէկ քուռակ, եզ և կով ունեցողը յանձնում էր մէկ հորթ։

Այս պաշտօնական փաստաթուղթը բաւականին բնորոշում է բնակչութեան նիւթապէս ենթարկուած լինելը հոգեւորականութեան, հետեւապէս նաև աշխարհիկ իշխանութեան տէրերին։ Երկրի ընկերային պատկերի տեսակէտից, ժողովի ժամանակներում (ոչ ուշ վեցերորդ դարից) երկրագործ դասից դուրս, գոյութիւն ունէր մարդկանց մէկ դասակարգ, որ զբաղւում էր բացառապէս անասնապահութեամբ։ Իզուր չէ, որ Խորենացին զանգատւում է, թէ «ոչ ամեն տեղ՝ Հայաստանում զբաղւում էին երկրագործութեամբ, այլ այս ու այնտեղ մարդիկ էին ապրում, որոնք սնանում էին՝ ինչպէս հիւսիսային երկրներում հում նիւթերով և նման բաներով։(*)

Մ. Գոշի «Դատաստանագրքի» մէջ տեղ գտած տուեալների համաձայն, հողի հասոյթից վերցնում էին մէկ հինգերորդ մասը. գնուած հողերը, այգիները և ծաղկանոցները ազատ էին հինգերորդ վճարից, ինչպէս և ջրաղացները, խանութները և տները:

Արհեստաւորներից և առեւտրականներից էլ հարկ էին վերցնում, Քրիստոնէաներից գլխահարկ չէին առնում, այլ միայն այլակրօններից, որոնք նուաճուած էին բռնութեամբ: Ոռոգուող դաշտերից առնում էին արդիւնքի մէկ-հինգերորդը, իսկ անջրդի հողերից մէկ-տասներորդը։ Մատնացոյց է արւում նաև անձնական աշխատանքի չափը, անասունների՝ կովերի. ոչխարների վրայ դրուած տուրքերը։

Անիի արձանագրութեանց մէջ մէկից աւելի անգամ յիշւում է այդ տուրքերի մասին և թուարկւում է մի քանի տասնեակ զանա-

---

(*) Մովսէս Կաղանկատուացի.— Պտուղք ի ժողովրդենէ երիցուն կարգն այս լիցի. Թովանիկն՝ չորս գրիւ ցորեան, վեց գրիւ գարի եւ վեշտասան թաս քաղցու եւ որ տառապեալն է՝ զհացին կէսն տացի եւ գինի որչափ եւ կարող իցէ. իսկ որոյ վար եւ այգի ոչ է, մի առցեն: Եւ ոյր ոչխար է ի տան՝ ոչխար մի եւ երեք գզաթ բուրդ եւ մէկ պանիր եւ ոյք ձի ի տան իցեն՝ մին յովանակ եւ ոյր պախրէք իցեն՝ որթ մի։

զան տեսակի և անունների տուրքաւորումներ։ Այս տուեալները վերաբերում են այն դարաշրջանին, որ դուրս է մեր անմիջական խնդիրների սահմաններից։ Ի հարկէ այս չի նշանակում, որ մատնանշուող հարկային սիստեմը արաբական տիրապետութեան գործն է։ Մահմետական իրաւունքը, անկասկած նախարարական կառոյցի մէջ փոփոխութիւն առաջ բերեց. այս փոփոխութիւնները կարող էին վերաբերել և առանձին նորմերին կամ հարկային յօդուածների արժէքաւորման, բայց տուրքաւորման սիստեմը, որպէս այդպիսին, Արաբները ժառանգել էին իրենց նախորդներից։ Ինչպէս էին վերամշակւում նախարարական յարաբերութիւնները Արաբների օրով և ինչքան էր նանց ազդեցութիւնը՝ այս բոլորը մտնում է Բագրատունեաց դարաշրջանի ուսումնասիրութեան մէջ։ Մեր անմիջական խնդիրը նախարարական կարգի հոլովոյթի հետազօտութիւնն է սկզբից մինչեւ այն շրջանը. երբ իրանական պետական իշխանութիւնը, որի հիմքերի վերայ զարգացաւ նախարարութիւնը, փոխարինուեց արաբականով։ Որպէս վախճանակէտ մեզ համար ծառայում է Խորենացու ժամանակները։ Մենք ուզում էինք նորից փորձել այն աշխատանքը, որ իր ժամանակ կատարեց Հայոց պատմագիրը։ Հետաքրքիր պիտի լինէր համեմատել մեր եզրակացութիւնները՝ այս խնդիրի վերաբերմամբ՝ Խորենացու եզրակացութեանց հետ։ Այս բանը պիտի ծառայէ մասամբ մեր հայեացքները վերաստուգելու համար։

Եթէ բացասական քննադատութիւնը յաջողեց խախտելու Խորենացու հեղինակութիւնը որպէս պատմագրի, ապա նա նշանախեց անգամ չսասանեց նրա գրքի նշանակութիւնը որպէս պատմա-գրական մեծ կոթողի իր՝ հեղինակի ժամանակակից տրամադրութիւններն ու տեսակէտներն արտայայտող։ Այս տեսակէտից Խորենացու գործը մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում։ Նախարարութեան վերաբերող խնդիրների նկատմամբ կարեւոր են ոչ թէ այս կամ այն փաստական տուեալները, կամ մեկնութիւնները, որ տալիս է պատմագիրը, այլ արժէքաւոր է հեղինակի գաղափարախօսութիւնը՝ ինչ ըմբռնում ունի. նա նախարարական կարգի էութեան մասին և ինչ միջոցներով կամ մեթոդով կարծում է թէ պիտի լուծուէր նախարարութեան մասին առաջադրած հարցերը։

Խորենացին չէր կարող իսպառ կտրուել իր ժամանակի իրականութիւնից։ Հին աշխարհի իւրաքանչիւր հետազօտողին այս կամ այն աստիճանի յատուկ է մէկ թուլութիւն՝ անցեալի վերայ նայել իր ժամանակի ակնոցով։ Խորենացու շատ գաղափարները՝ Հայոց անցեալին վերաբերող՝ այն դարաշրջանի իրադարձութեանց արդիւնքն է, որի մէջ ինքն ապրում էր։ Կարելի է կասկածել՝ թէ փաստօրէն որքան ճիշտ են պատմաբանի պատմածները և թէ տուեալ նախարարութիւնները, իրօք որ գոյացել են մատնանշուած ժամանակում և տուեալ պայմաններում, բայց կասկածից դուրս է որ հեղինակի՝ նախարարութեան վերագրած այս կամ այն յատկանիշը իրական է, ճշմարիտ, կամ նախարարական տների յառաջացման տուեալ ձեւը համարւում էր հնարաւոր, գոնէ այն ժամանակ երբ գրում էր հեղինակը։ Մեր պատմագիրը պատասխանատու մէկ գործ ձեռնարկեց դառն գիտակցութեամբ, որ հարազատ երկրի անցեալին վերաբերող ոչ մէկ գրական աղբիւր չունի իր տրամադրութեան տակ: Նա պիտի աշխատէր անկապ, հատուկտոր տուեալների, պատահական ցուցմունքների, սխալ, անըմբռնելի պատումների և նման անյոյս նիւթերի վերայ։

Նա պէտք է համակցէր, միացնէր ցիրուցան փաստերն ու տուեալները իր ժամանակի կարգերի լոյսի տակ, ուստի և ակամայ հնութեան զգեստ էր հագցնում շատ երեւոյթների և դրութիւնների՝ աւելի ուշ ժամանակի փաստերին, եղելութիւններին։ Խորենացու մտքի ընթացքը դիմում էր փաստերից դէպի գաղափարները, դրականից՝ տեսականին. և ընդհակառակն կանխակալ ըմբռնումների, ապացոյցների համար նա ընտրում է, երբեմն և ստեղծում՝ համապատասխան պայմաններ՝ նրանց շրջանակի մէջ՝ դնելով փաստերը այս կամ այն չափով ճշմարտանման։ Յաճախ պատմագիրը իր եզրակացութիւնները հիմնաւորում է աշխարհագրական և նախարարական անունների ստուգաբանական մեկնութեանց վերայ։ Այս մեթոդը Խորենացին լայնօրէն գործադրում է նախարարների յառաջացման խնդրին նկատմամբ։ Անկախ այն հանգամանքից, թէ որքան ընդունելի են ստուգաբանական այս փորձերը՝ շատ դէպքերում նրանք ընդունելի չեն և պատմագրի բազմաթիւ կառուցումները անհիմն են, անընդունելի հենց այդ կեղծ ստուգաբանութեան հետեւանքով, նրա մեթոդը, սակայն որպէս այդպիսին անկասկած գիտական է:

Մեթոդաբանական տեսակէտից մեր հետազօտութիւնը ընդհանուր բաներ շատ ունի Խորենացու հետ։ Ելակէտ ունենալով մինչեւ Խորենացու ժամանակները պատմող յիշատակարանները՝ մենք ջանացինք թափանցել հնութեան խորքերը՝ գտնելու համար մեզ հետաքրքրող երեւոյթների հիմքերը, ըստ որում մեզ համար անհրաժեշտ յենարան ծառայում էր նախարարական իրականութիւնից և անուանումներից վերցրած ամենէն բնորոշիչ տերմինների ստուգաբանական քննութիւնները։ Մեր հետազօտութեանց եզրակացութիւններն էլ մէկ որոշ չափով նոյնանում են նրա եզրակացութեանց հետ։ Խորենացու, ինչպէս և մեզ մօտ նախարարական րէժիմը սերտօրէն կապակցւում է Արշակունիների հետ։ Չնայած, որ առաջին Արշակունին՝ Վաղարշակը՝ Հայաստանին տիրելով, ըստ Խորենացու, պատրաստ գտաւ այնտեղ նախարարութիւնները և այս առթիւ հարցում ուղղեց իր եղբօրն՝ Արշակին, «որտեղից են այնտեղ գոյութիւն ունեցող նախարարութիւնները»։ Պատմագիրն այնուհետև ասում է. «Վաղարշակը նշանակեց նախարարութիւններ և նրանց իւրաքանչիւրի համար նահապետներ», Թեթևօրէն նայողը կարող է մեղադրել պատմագրին անհետևողականութեան և հակասութեան մէջ, բայց եթէ թափանցենք գործի էութեան մէջ, ապա պարզ կը լինի, որ Խորենացին առաջին Արշակունուն վերագրում է միայն նախարարների կարգաւորումը և ոչ թէ նրա ստեղծումն այս բառի իսկական իմաստով։

Պատմագիրը իր առաջ դնում է մէկ խնդիր՝ պարզելու թէ նախարարական որ տոհմերը ի հնուց ցեղակից են մեզ և որոնք դրսեկ են և մեզ հետ ընտելացել»: Հէնց այս է այն գնահատելի արդիւնքը, որին հասաւ պատմագիրը իր հետազօտութեան մէջ: Բայց շարագրելու պահուն նա այս դնում է որպէս խնդիր՝ ենթակայ քննարկութեան։ Մեր վերլուծութիւնը արդարացնում է հարցի այսպիսի ձևով դնելը, ցոյց տալով, որ նախարարութիւնը իրօք կազմուած էր տեղական և դրսեկ տարրերից։ Հիմնական տարբերութիւնն այն է, որ ըստ Խորենացու որոշ նախարարութիւններ հանդիսանում են անհատների, դէմքերի սերունդներ, իսկ ըստ մեր քննութեան նրանք սկիզբ են առել երբեմնի ինքնուրոյն էթնիկ խմբակցութիւններից։ Խորենացու հայեցողութեամբ ոմանք և մեծամասնութիւնը, նախարարութեան շարքերում տեղ գրաւեցին պալատական կամ պետական ծառայութեան միջոցով: Բագրատունիները՝ թագադիրներ են, Գնթունիները արքայական հանդերձապաններն են, Խորխոռունիները՝ թիկնապահներ. Վարաժնունիները՝ իշխան արքունի որսոց, Աբեղեանները՝ պահեստապետներ են, Գաբեղեանները՛ արքայական սենեկապետներ են, Արծրունիները՝ արծուակիրներ, Գնունիներ՝ մառանապետներ, Սպանդունիները՝ սպանդանոցի վերահսկիչներ են, Հաւնունիները՝ բազէակիրներ, Հայր մարդպետի տոհմը՝ ներքինի էր, Սիւնի, Գարդմանի, Գուգարաց, Անգեղ տան և Աղձնիքի իշխանները՝ սահմանապահներ էին, Վահեվունիները՝ քրմեր էին՝ կրօնական սպասաւորներ։ Մի քանիսը նախարարութեան թուին էին դասւում, որովհետև հին ծագում ունէին, տոհմիկ էին կամ Հայկի ժառանգներից էին սերել, կամ յառաջացել էին հին թագաւորներից՝ այդպէս էին, Որդունի, Ապահունի, Մանաւազեան, Բզնունի, Առաւէեան, Զարէհաւանեան տները։ Գային նոյնպէս ազնուական ցեղերից եկուոր մարդիկ՝ ինչպէս Ամատունիները, Արաւեղեանները, Ռոպսեանները, Մամիկոնեանները և Կամսարականները։ Վերջապէս ոմանք էլ նախարարութեան հասան իրենց արժանիքների և անձնական քաջութեան համար, ինչպէս Դիմաքսեանները և Տրունիները։

Թուարկուած փաստերից նկատելի է, որ Խորենացին նախարարական արժանիքների հիմքում դնում է երկու գլխաւոր բան, ծառայութիւնը և ծագումը, այսինքն արիւնի առաջնութիւնը։

Այս խնդրում մենք Խորենացուց չենք տարբերւում։ Նախարարութեան ծագման խնդրում մենք վերհանեցինք այն արմատները. որ հասնում են մինչև տոհմական կարգի ժամանակները և ծառայութեան-պետական կեանքի հիմքերը։ Խորենացին ազնուական ծագում ունեցող ընտանիքներին գլխաւորապէս նրանց է համարում, որոնք իբր թէ ծագել են Հայկից և Հայաստանում արդէն պատրաստ գոյութիւն ունէին, երբ Արշակունիները հաստատուեցին այնտեղ։ Ըստ մեր տեսութեան դրանք այն ազնուական տոհմերն էին, որոնք երևացին տոհմական կարգի քայքայման հետևանքով: Մեր տեսակէտի համաձայնութիւնը Խորենացու հետ միայն սկզբունքային է, փաստական տեսակէտից այսինքն թէ ինչ նախարարութիւններ՝ ինչ կարգի են՝ մենք տարբերւում ենք նրանից։

Նախարարութեան նիւթական հիմքերը Խորենացու մօտ էլ կազմում է երկրագործութիւնը։ Նախարարութեան հասնելը, նրա կարծիքով ոչ այլ ինչ է, եթէ ոչ հող ստանալ, կալուած ունենալ(*)։ Տոհմիկ լինելը և նախարարական կոչումը՝ նրա մօտ նոյնանիշ գաղափարներ են, հէնց նրա համար, որ բոլոր ազնուականները հողային սեփականութիւն ունեն։ Հողը յանձնւում է ժառանգական սեփականութեան համար։ Այդ տեսակէտից բնորոշ է արտայայտութիւնը՝ ազգ սիրել, որ նշանակում է տոհմի հիմք դնել, որ գործ է ածւում այն պարագաներում, երբ խօսք է լինում մէկն ու մէկին նախարարութեան հասցնելիս։ Եթէ հող տալ նշանակում է նոր նախարարական տոհմի ստեղծումն, ապա հասկնալի է. որ հողը տրւում էր որպէս ժառանգական սեփականութիւն(**): Ըստ Խորենացու հողաբաշխումը եւ օտարացումը, յետ առնելը գերագոյն իշխանութեան իրաւունքն էր, մէկ բան, որով բնութագծում է՝ աւատական հողատիրութիւնը(***)։

(*) Խորենացի.— Այսպէս օրինակ թագաւորը Վարաժին նշանակում է իշխան արքունականացն որսոց եւ շէնս պարգեւեալ նմա առ Հրազդան գետով։ Գաբեղեան եւ Աբեղեան տոհմերին շէնքս պարգեւեալ. յորոց եւ անուն կոչլին սապէս նախարարութիւնքն՝ Աբեղէն եւ Գաբեղէն։ Եկուոր Ամատունիները պատուին գիւղիւք եւ դաստակերտօք, Մամիկոնեանները ստացան յաւիտենական իշխանութեամբ զգեօղս եւ զդաստակերտս, ինչպէս եւ Կամսարականները։

(**) Խորենացի.— Տաց նմա յաւիտենական իշխանութեամբ ըզգեօղս…

(***) Տիգրանը յետ գրաւեց Վահունիների կալուածները՝ ընկենու ի քրմութենէ եւ զգիւղն յարքունի առնի: Արտաշէսի ժամանակ Մուրացան տոհմը զրկուեց իրենց կալուածներից — գրաւէ յինքն զշէնս եւ զամենայն իշխանութիւնս նոցա: Սմբատ Բագրատունուն թագաւորը՝ պարգեւէ զմասն արքունի, որ ի շէնս Գողթան եւ Ուղտուկունս:

Տոհմը և նրա գրաւած հողամասը, տերիտորիան, Խորենացու մօտ հաւասարապէս կոչւում են նախարարութիւն։ Այս բառը ամենէն գործածուածն է նրա մօտ. երբեմն նա փոխարինում է նահապետութիւն բառով։ Բայց նախարարութիւնք եւ նոցին նախարարութեանց նահապետութիւնք արտայայտութիւններից երեւում է, որ Խորենացին զգում է երկու տերմինների մէջ եղած տարբերութիւնը՝ նահապետը նախարարութեան գլուխն է, պետը։ Գործ է ածում նաև տէր և տանուտէր՝ նահապետի հետ նոյն իմաստով, ինչպէս եւ տէրութիւն եւ տանուտէրութիւն՝ նախարարութեան և նահապետութեան իմաստով(*)։

Խորենացուն լաւապէս ծանօթ են սեպուհական իրաւունքը և ոստանիկ ազատութիւնը՝ զարգացման այն փուլի մէջ, երբ նրանցից սաղմնաւորւում էր նախարարական—աւատական նոր աստիճանը։

Այսպիսով եթէ մի կողմ թողնենք փաստական տուեալները և վերցնենք նախարարութեան ուսումնասիրութեան տեսական կողմերը, ապա անկարելի է չհամաձայնել, որ մեր պատմագիրը մեթոտաբանական և հարցադրութեան տեսակէտից կանգնած է ուղիղ ճանապարհի վրայ։

Նախարարութեան ծագման եւ այդ հաստատութեան էութեան մասին մեր և Խորենացու տեսակէտների մօտիկութիւնը կարող է ծառայել մեր եզրակացութիւնների ճշմարտութեան օգտին: Որքան վերջիններս ընդունելի են, ինչ որ նրանց գիտական արժէքն է, այդ մասին կարող են լինել զանազան կարծիքներ։

Մենք հեռու ենք այն մտքից, թէ այսքան անբաւարար և հատուկտոր նիւթերից, որ ունինք մեր տրամադրութեան տակ կարելի է վերակառուցել մէկ կատարեալ բան։ Մեր կառուցման մէջ, անկասկած, շատ բան ենթադրական է, կանխամտածուած, բայց սրանք այնպիսի բնոյթ կրող պակասութիւններ են, որ այս կամ այն չափով յատուկ են ամեն տեսակ պատմական կառուցման։ Այստեղ կարեւորը՝ հարցադրութիւնն է և նրա լուծումը ընդհանուր գծերով.

Ցանկացե՞նք արդեօք յայտնաբերել նախարարութեան արմատները, որքա՞ն ճիշդ է հետազօտած նրա զարգացման յետագայ փուլերը և ընդունելի՞ է մեր նկատած համեզրութեան կէտերը նախարարութեան և Արեւմտեան Եւրոպայի ֆէոդալիզմի միջեւ։ Այս է կարեւորը։ Նախարարութեան մեր լուսաբանութեամբ՝ լոյսի մէկ ճառագայթ է ընկնում կիսախաւարի մէջ, որ պատել է Հայոց նախարարութեանց շրջանի պատմութիւնը և հիմք է դրւում Հայոց պատմական կեանքի յետագայ ընդարձակ շրջանի գիտական իմացութեան՝ մինչեւ նրա՝ նախարարութեան փլուզումը՝ Մոնղոլական արշաւանքի ժամանակ։

(*) Խորենացի՝ ուստի նախարարութիւնքս, որ աստ կան. ի թիւ նախարարութեանց, կարգէ ընդ նախարարութիւնս. նախարարութիւն Ապահունեաց, Մանաւազեան... նահապետութիւն Ռշտունեաց. Սիսական, Կադմեան... Մուրացան տէր. Արգամ՝ տանուտէր ազգն Մուրացան= Արգամ նահապետ Մուրացանաց. Զյառաջաւացեալ տանուտէրական պատիւ. Ասպահապետի Պահլաւ յանձն տանուտէրութեննէ զանուն որոշեալ։ Գլուխ նահապետաց նոցա զՄաղխազ: Նկատում ենք, որ տոհմի գլուխը նահապետ է։ Այսպէս է կոչում Խորենացին նաեւ Հին Կտակարանի նահապետներին։ Նախարար բառը ըստ Խորենացու կազմուած է նախ եւ արար բառերից՝ նախարարեալի իմաստով՝ ինչպէս կարելի է հետեւցնել այս օրինակներից. գիտ որդեծնութեան նախարարականացն ծննդոց յերից անտի որդւոցն Նոյի... ի ծննդոց յերից նախարարականացս այսոցիկ արանց... Զրուան, Տիտան, Յապետոսի... զթագաւորացն եւ զնախարարականաց ազգաց եւ տոհմից. ի նախարար պատգամաւորացն...

ՈՒՂՂԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

Էջ	Սխալ	Ուղիղ
11	*Արուեստական*	*Աւեստական*
19	*Սորոյէնը*	*Օսրոյէնը*
24	*Ոմարխների*	*Կոմարինների*
66	*Գործակալի*	*Գործակալք*
66	*Թագաւորութեան*	*Թագադրութեան*
86	*Հիմի*	*Ծիմի*
87	*Ներա-հետայարդարանքի*	*Հերահարդարանքի*
96	*մանրանար*	*Մանրանար։*
107	*Հինգերորդ*	*Հինգերորդի*
112	*Նախապետութիւն*	*Նահապետութիւն*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

1. ԵՐԿՈՒ ԽՕՍՔ 3

2. Ա. ԳԼՈՒԽ
ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ 7

3. Բ. ԳԼՈՒԽ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՏՈՀՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 22

4. Գ. ԳԼՈՒԽ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՒԱՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 50

ԱՐՏԱՏՊՈՒԱԾ՝ «**ԱԿՕՍ**» ՊԱՐԲԵՐԱԳՐՔԻՑ

ԳԻՆԸ՝ 2,5 Լ. ՈՍԿԻ

Հասցէ՝

H. MOURADIAN
B. P. 128
Beyrouth, Liban